Ձեր Սրբազան Հայրութեան Քահանայական նուիրման Ցիսնամեայ պանձալի Ցոբելեանի տոթիշ, երջանիկ կ'զգայ նաեւ նուաստո անարժանարար մատուցանելով իր *ջերմագին մաղթան ըները, հայ պատկառելի եկեղեցականութեան* օբինակելի վերեբանիդ կետևըն ու արդիւնաչատ գործունկութիւնը խորհրդանչանող սա գեղեցիկ օրուան մկջ արտագին խնդակցութեամբ հիացումի անկեղծ զգացումներ յայտնելով Շնոբհազաբդ **Ցոբելեա**բիդ ։

Խոնարհարար մատչելով ի համրոյը odhuj u. U.gnju Ձեր Բարձրապատիւ Հայրունեան որդիական ակնածանօք ՄԵՐՈՒԺԱՆ ՔՆՑ. Տ. ԽՈՍՐՈՎ



1929, Bucha 13 Umpa-Vinting (Uftadapa)

9-4 րաշնորհ

8. Բարդէն Ս. Մպսկ. Կիւլեսերեան

Մէն ալէմենի նարժէն ժեղատ սարեքբենի ապտեն։ Ով որ ինձ բառ մը ուսոյց, ստուղիւ զիս իւր ժառան րրաւ։ Արաբական Ասացուած

Սրբացան Հա՛յր

Հայ Մամուլի հետևւողներ քաջ դիտեն Թէ՝ Երուսաղէմայ Պատրիարք Ամենապատիւ Եղիչէ Ս. Արջեպիսկոպոսը Ոււսուցիչ եղած է ո՛չ միայն մասնաւորներու, այլ նաև հայ համայնքի. անոնց, որոնք Ն. Սրբաղնուխեան մաքի լուսատու խորհուրդներն ըմբոշինած են ու կ՛մրոչիննն, Թղթատելով օրուան Հայ ԹերԹերն, Հանդէսներն, Տարեցոյցները և մինչև իսկ Օրացոյցները։ Ի դէպ չէ՞, Դուբեան Մաշենապառանի չինութեան առԹիւ, վերյիչել վերոդրեալ արարական ասացուածն. Մեն այենենի նաշգեն գեզաշ սայենբեւ նի ապուն.— Ով որ ինձ րառ մը ուսոյց ստուգիւ գիս իւր ծառան ըրաւ։ Ծառայք պարարն ծառայել իր Տիրոջ, երը ծառայութեան ժամն հնչէ։ Ուստի, Սրբազան Հայր, ընդունեցէք ներփակեալ մէկ ՍԹԷրլինի ՉԷքն եւ յատկացուցէք զայն Դուրեան Մատեհադարանի։ Որով եմ և մնամ միչտ խոնարհ ծառայ



"ARMENIA, CHIGWELL.

Լոնսորն, Օգոստ. 5. 1929.

9-bp. Տէր Բարդէն Եպսիսկոպոս

Սրբացան Հայր.

Ներփակ կը դանեք 2 Անդղ. ոսկի, դորս խնդրեժ հաճեցէք արձանադրել տալ ուր որ անկէ, ժին Սիոնի բաժնեղին եւ միւսը Աժեն. Դուրեան Պատրիարքի ՅՈԲԵԼԵԱՆԻՆ նուէր փոքրիկ։

Հաձևցէջ նաև գիս արձանագրել տալ հետևեալ գործերուն. Խոնք և Խօսք Օրման_ հանի, Պատմութիւն Եrուսադեմի Սաշալանեանցի. եւ Միարանք և Այցելուք Եrուսադեմի, Գեր. Աղաւնունիի։

Երուսաղէմը տակաւ բոլոր Հայութեան ուչագրութիւնը իրեն գրաւելու վրայ էւ Լուրջ չարժում մր տեղի ունենալով մեղուաջան աշխատանք կը կատարուին հոն ժաշմանակէ մ՝ի վեր. և արդէն իսկ գրական կարևոր կեգրոն մը հանդիսացած է Վենետիկի ևւ Վիեննայի հետեւողութեամբ։ Ասիկա մեծապէս զնահատութեան եւ քաջալերութեան արժանի է։ Կը չնորհաւորեմ սրտագին բոլոր կազմակերպող ու գործադրութեան ձգնող մաքերն ու դործող ձեռքերը։ ՍԻՈՆը արժանաւոր կերպով պակաս մը կը լեցնէ հայպարրերականներու շրջանակին մէջ։ Կարողութիւն եւ երկարատեւ կեանք ու յաջողութիւն կը մաղթեմ։

Սրրազան Պատրիարդի Յորելեանին գաղափարը յղացողներ մեծ ծառայութիւն մը մատուցին ո՛չ միայն Ս. Ցակորի, այլ րովանդակ հայութեան։ Այսպիսի մի ականաւոր անձնաւորութեան արժանաւոր գնահատանք մը սարքելով՝ հայ ազգին պատիւը փրկեցին, ցուցնելով թե Հայն ալ արժանիք գնահատող է։ Ասիկա Յորելեաններուն Յորելեանը պիտաի ըլլայ։ Հայոց համար ընդհանրապես ժլատ գտնուող Նախախնամութիւնը, այս անգամ, սխալմամը թե պատահարար, բարի գտնուեցաւ ներկայ պատեհութեամը, արժաշնաւոր մարդը ամէնէն յարմար տեղը առաջնորդելով։ Դուրեան Սրբազան թեև Էջմիածշ

նայ դահուն էր արժանաւոր, եւ սակայն ներկայ պարազաներուն հոն Երուսազէմի չափ օգտակար չէր կընար հանդիսանալ։ Արդարև Նախախնամութիւնը այս անդամ Հայ ազ-

դին նպաստաւոր գործ մր տեսած եզաւ ։

եր մաղնեմ որ Ազգն ալ միահամուռ արձագանգ տայ Յողելիանական Յանձնաժոզովի կոչին և աչխարհիս չորս ծայրերէն սիրագեզ արտայայտունիւններ և առատ նուէրներ տեզան Երուսազէմ՝ ի միսինարունիւն և ի քաջալերունիւն այդ մտաւսրական փենակին։

Սրտագին բարևներով և անկեղծ յարգան ընհրով

Մնամ Ձերդ խմնարհարար, Կ. ԹՈՒՄԱԵՍՆ



USPMUSUUUL ZUBNB PEUUUUL MUSPUUULNPUUUL ANLNU 15 0q mmm 1929 BUNCHS

Ամենապատիշ Տ. Եղիչէ Ս. Արջեպիսկոպոս Գոշրեանի Ցիսնամեայ Յոբելեանի Կեդրոնական Ցանձնաժողովին

Ատրպատականի Հայոց Թեմական ժողովի, Թեմական խորհրդի, առաջնորդարանի, դպրոցական հաստատութեանց անունով կը չնորհաւորեմ Աժենապատիւ Սրբադան Հօր ջահանայութեան Ցիսնամեայ Ցորելեանը, իրրե բարոյական բարձրութեան վրայ կանդենած աւհտարանի աչակերտի, իրրեւ գրադէտ-բանասեր-բանաստողծի, իրրեւ անդասիր հոգեւորականի, իրրեւ լայնախոհ չրջահայնաց պատրիտրջի, իրրեւ ազգասէր եկեղեցաւսեր-ուսումնասէր հովուի։

8աւ ի սիրտ Թեմը, չքաւորուխեան հետեւանքով, չկրցաւ իր լումայով հազորդաւկից լինել «Դուրեան Մատենադարանի» հոյակապ չէնքի կառուցման․ առաջնորդարանը իր դուղնաքեայ չնչին նուէրով՝ 2 անգլիական ոսկիով՝ կը մասնակցի չէնքի անկիւնի մի քարի դետեղման։

Առաջնորդ Հայոց Ատրպատականի՝ ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈ**ՊՈՍ ՄԵԼԻՔԹ**ԱՆԳԵԱՆ



U.St. Tomayumpe

Տ. Տ. Եղիչէ Արջևպիսկոպոս Դուրեան Արժանընտիր Պատրիար,թ Հայոց յԵրուսագեմ

Ամենապատիւ Սրբազան Յորելեար.

Հայ ջերխողական բուրաստանին ջանի մր վտիտ ծաղիկներ բերած ըլլալու գոյվն ծառայուխիւնս, արժանացած Ձեր Ամենապատուութեան ա՛յնջան խանկազին գնահատումին, համարձակուխիւնը կուտայ ինձ Ձեր Սրրագնուխեան յիսնաժեայ Յորելեանին առիխով ընծայուած մեծարանքի ու յարգանքի համազդային արտայայտուխեան մէջ իմ համեստ բաժինս բերելու և իմ խորունկ հիացումս յայտնելու Ձեր բանաստեղծական ու գրական անհատարելի տաղանդին, որպէս չատ անկեղծ արձազանգը՝ հողիիս ամէնէն ջաղցը ակունջներեն բիսող ջերմ իսանդաղատանջին։

Ձեր Ամենապատուութիւնը, իր աստուածային կոչումէն անջատարար, իր գմայլելի

0 1 1 1 1

արու**եստին ու** խորագէտ մուրին ճառագայիումովը մեր իմացական աշխարհին ամէնէն փոհ<mark>ւմ ու լուսա</mark>ւոր երևոյիններէն մէկը կր հանդիսագրուի այսօր, մեր սրտերը տոգորե_~ լով <mark>հպարտու</mark>ինան ու ցնժութեւան տարօրէն բաբախուն հռանդովը։

Արդարև, ի՞նչ զերազոյն երջանկութվեւն հայ ցեղին համար, իր հաւատքին ու հոգեկան հարստուխիւններու սրբազան պահպանուժին նուիրուող Ձեր պաշտելի անձնաւոբութեան մէջ ողջունել ու պանծացնել երկնատուր չնորհը Ձեր քերթեողական և իմացական արժանիջներուն՝ մեր հաւաքական կեանքի բազմաթիւ մարզերուն վրայ ցոյացած ։

Կը խնդրեմ՝, Ամենապատիշ Սրրազան Յորելեար, որ խոյլաուութիւն չնորհէք ինձ համրուրելու Ձեր Ս. ԱՋը, որտազին մաղթանջներով և որդիական խորին ակնաժանօք՝

18 Uhayar. 1929

Գումգարու ,

Ս.զ. . Պատրիար, քարան



ԱԵՍԻ ՈՒՄԵՐԵՐՈ ՄԵՍՑ ՅՈՎՍԵՐՈՐՋ ԵՒՍԻՈՐՆԵՐ ԵՒՍԻՈՐՆԵՐ

ՓՈԽԱՆՈՐԳԱՐԱՆ Կ- ՊՈԼՍՈՅ

4. 90thu , 25 Utager , 1929

Mabupsupup

P. U.QU.St U.L

Udbungumpe Stp

8. Եղիչէ Ս. Արբեպիսկոպոս Գուրեան

Պատրիարը Հայոց Ս. Երուսաղէմի.

Մեծանուն Սրբադան Յոբելար.

Ձեր Աժենապատուունեան Քահանայունեան և Ուսուցչական գործունէունեան բաւ ընթատիկ Ցիմնաժեակին առնիս Հայ ժողովուրդը, ընտրանի նե հասարակ, գիտուն նե ագետ, եկեղեցական նե աշխարհական, անհուն խնդուննամբ կը բերէ իր ժեծարանքի բաժինը Ձեր Բարձր Սրբագնուննեան։

Այդ պարտականութիւնը ես ալ կը փափաջէի անձամբ կատարել, սակայն դժուտրին պարադաներ արզելը եղան նպատակիս իրադործման։ Ուստի, ներկայիւս կը փութեամ սրտագին բերկրանքը և ցնծութիւնս յայտնել Ձեր Բարձր Սրբազնութեան, իր փափառաւոր Ցիսնամեակի հանդիսութեանց առթիւ։

Ձեր Ամենապատիւ Սրբազմուխեան նկատմամբ ազգովին յայտնուած այնքան սրբտարին ժեծարանքին համար կը հրճուիմ, վասն զի կը ճանչցուին ու կը գնահատուին Ձեր
արդիւնաւոր աշխատութիւններն ու օգտաչատ ծառայութիւնները։ Ձուտ տոհմային դաստիարակուխեամբ մնած Ձեր միտքը եւ Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյն ողիով օծուն
Ձեր հոդին այնպիսի զարմանալի խոխչքներ առին, որ կրցան ըմբոշիննել համաչիսարհային
գրական հրաշակերտները, եւ այդ բոլորը ի սպաս դրիք, յիսուն տարիներ անընդհատաբար, հայ նորահաս սերունդներու օգտին։ Ձեր բարձր հմտուխեամբ լուսատու փարոսը
հանդիսացաք հարիւրաւոր ուսանողներու մտքին, Ձեր հոգեւորական չունչով Դաստիարակը՝ հաղարաւոր բարևպաշտներու հոգեւոր ու բարոյական կեանքին, եւ Ձեր բազմակողմանի հմտուխիւններով ու անխոնջ պրպտումներով՝ դերազանց Մչակը հայ գրականուխեան։

Դուք, Սրբազան Հայր, որպէս Բանաստեղծ, Գրագէտ, Բանասէր, և հողեւորական մարդին մէջ որպէս քաջաքաքարող հովիւ, Աստուածաբան և Մեկնաբանող, ո՛չ միայն լուսաւոր Դէմք մը, այլ մանաւանդ Ձեր բարձր կարողուխիւններուն հետ Ձեր չնորհայի եւ աւհտարանական քաղցրաբարոյ կենցաղովը հայ եկեղեցականուխեան պարծանքը կը հանդիսանաք։

Ահա , Սրբազան Հայր , այս են Ձեր հոյակապ անձին նկատմամբ խտացուած իմ հա_ մեստ մտածումներս և , հետևարար , ջերմապէս խանդավառուած Ձեր բեղուն դործու_ ներութեան Ցիսնաժետկի առթիո, սրտագինա կը մաղթենք, որպեսզի Աստուած օրենե ու արդիւնաւորե Ձեր բոլոր ջանջերը, աշխատութիունները, փափաջները, որոնջ Հայ եկել ընցույն եւ Ազգին փառջին համար են, եւ պարգեւե երկար ու բարօր կետնջ, ի մխիլ թարութիւն Հայ Ազգին ևւ յօգուտ Ս. Ցակորհանց Աթոռոյն և Միարանութենանս։ Համրուրիւ Ս. Աջոյդ՝

Մեաժ խորին ժեծարանաց հաւտահոր ՍՄԻՍՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ



P. H. CRETE

Grosvenor House 21, Old Court House Street. Calcutta, 1 Zahanta'php 1929.

Պատուակալ Նախագահ և Ատենապետ Յոբելինական կեդը․ Յանձնաժողովի Ամեն․ Ս․ Եղիչէ Արջեպիսկոպոս Դուրեան Պատրիարդի յերուսաղէմ․

4-bymajumpe Zujp.

Ըստ խոստմանս հատուցանելու մի հազար (1000) ոսկի վասն «Դուրեան Մատենաւ դարանի» չինութեանն, ծրարեմ ի սմայ մի բարախ "Ե՞ 72/13 խուհալ 30 Սեպտեմբերի, յաջողակ Ս. Պատրիարջի վասն 500 ոսկիի, այս ընդ անցեալ Մարտ ամսէ առաջաժս դումարին, կատարելագործեմ խոստմունչըս, եւ սպասեմ կարդալու ձեղանէ դումարիս անկորուստ ստացումն։

Նամակս այս պիտի հասանի Ձեզ փոքր ինչ յառաջ քան Յորելեանի հանդեսի օրնա Վասն որոյ չատ չնորհակալ պիտի լինիս Ձեզանե եթե բարեհաճիք իմ կողմանե չնորհաւորել Նորին Սրբագնութեանն, և յիչէք խոնարհութեամրս, թեև անձամը հեռու պիտի լինիս հանդեսի օրն, սակայն չպիտի մոռանամ աղաչելու առ Աստուած որ տայ իւրն երկար եւ առողջ կեանք որ ձիգ տարիք դեռ չարունակի իւր Պատրիարքութեան պաչտոնն յողուտ մեր ազգին։

Երբ Մատենադարանի չինուած քն վերջանայ, ուրախ կը լինիմ են է մի պատկերն առաջէջ ինձ, միևնոյն ժամանակ խնդրեմ յիչէջ արդեմ ք կը ցանկանէք ունենալ վամն Մատենադարանի քանի օրինաք Վենետիկ տպած «Հայ Տարադը» և Յովճաննես Պապինի «Պատմութիւն Քրիստոսի», ես յօժարութեամբ պիտի առաջեմ վասն գործածութեան Մատենադարանին։

ՄԿամ ՊԵՏՐՈՍ Հ. ԿՐԷՏ.



Բարձրաշնորն Ս. Հա՛յր.

Ձեր Բարձր Սրբագնութեան յոյժ յիչատակելի Յորելեանին առթիւ, փա՛ռք և պարծանք Հայ Դպրութեան, գործով և արդեամր այնքան բեղուն և լրութեամբն՝ ազգանուէր վաստակով ողողուն, ի խորոց սրտից վերբնծայուած բիւրաւոր մրժունջներու եւ մաղթանքներու հետ՝ հաձեցէք ընդունիլ իմ ալ սրտագին չնորհաւորութիւններս եւ ջերմագին մաղթաքներս Ձեր արեւչատութեան համար։ Իստեանի երախտապարտ Ձեր բազմաթիւ աչակերտութիւնն եւս կը ձայնակցի ինծի մատուցանելու համար Ձեր այս առթիւ իր բոլորանուէր պաչտամունքի խունկն և խորին մեծարանաց խոնարհ առհաւատչեայն։

Բերա , 2 Հոկտեմրեր , 1929 Էստեան Վարժարան Մատուցհալ ի համրոյր Ս․ Աջոյգ՝ Մնամ միլա Ձերգ անձնուէր Մ․ ՍՈՒԼԹԱՆԵԱՆ ARMENIAN RECTORY, MANCHESTER. 6 2nhinhilphip 1929

229, Uppur Brook Street

Աժենապատիւ Տէր Տ․ Եղիչէ Ս․ Արջևպս․ Դուրեան Հայրախնամ Պատրիարջ Ս․ Երուսաղէմի

U.Thie. Uppunguite Luip.

Ձեր Ամենապատուուխեան գրկեցի Ձեր Քահանայական Յիմնամեայ Յոբելեանին առթիւ «Դպրեվան,թեան Քարողներ» խորագրով հրատարակած դիրքս, որ երփներփեան բուրումնաւէտ փունջ մրն է Ձեր եկեղեցական աշակերտներու զգացումներէն "թաղուած և աղուցուած ծաղիկներու։

Ո՛վ հրաչազարդ և անուչակ Հայրս, հրախտագիտական զգացմամբ համբուրելով աստուածարևալ Ս․ԱՋդ, կր մազիեմ բոլորով սրտիւ որ Երկինւք արժանացնէ զմեզ տոշ նելու Ձեր ադամանդեայ Յոբելհանն ալ։

Մնամ անձնուէր և խոնաբե որդին ՂԵՒՈՆԴ ԵՊՍ . ԴՈՒՐԵԱՆ



ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ Մ. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՒՈՑ ԵՒ ԱԶԳ. ԿԵԳՐ. ՎՂԱՐԺԱՐԱՆԻ ՂԱԼԱԹՒՈՑ

U. d'h han ay an an fre

Տ. Տ. Եղիչէ Ս. Արջևպս. Դուրեան Պատրիարք Առաջելական Ախոռոյ Ս. Երուսադէժի

Սուաքելաչնորհ Սրբագան Հայր,

ինամակալութիւնս հաճոյքով ստացած էր Ձերգ Բարձր Սրբազնութեան Քահանա_ յութենան և գրական դործունէութեան Յիսնամեայ Յորելևանին համար կազմուած "կեդը . Ցանձնաժողով ոյ Ծրադիր-Յարտադիրը ։

Խնամակալութիւնս՝ յարդանօք խոնարհելով Ձերդ Ամեն. Սրբազնութեան պատկաշուկը անձնաւորութեան, աննման տաղանդին, անբասիր համրաւին և վսեմ հանձարին առջև, հոյակապ և չքեղ առաքինութիւններ, որոնք ա՛յնքան պանծացուցին՝ Դուրեան անունին հետ նաև Հայ եկեղեցականութիւնը, թանկադին պատիւն ունի, յանուն Ազգ. Կեղբոնական Վարժարանի Ձերդ Ամենապատուութեան մատուցանելու իր որդիական և սրտաղին չնորհաւորութիւնները, և իր հեռաւոր մասնակցութիւնը բերելու ամսոյս Ձերդ դատարուելիք Ցորելինական հանդիսութենանց։

Ամեն, Սրբազան Հա՛յը. Ղալախիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցին, որուն բեմն ալ յաձախ օծուած է Մեծ Վարդապետիդ պերճիմաստ քարոզներով, և Աղդ. Կեդը. Վարժարանը, որուն դասարանները վայելած են բազմահմուտ հայկաբանիդ և մեծատաղանդ բանաստեղծ-դրադէտիդ հմայող ու առինքնող ներկայուխիւնը, իրենց պատմուխեան էջերուն մէջ անջնջելի կերպով արձանագրած են անունը հոյակապ Յորելեարիդ։

Ի՞նչ մեծ բախտաւորութիւն մը պիտի ըլլար Կեդրոնականին համար, եթէ ան ունել նար հնարաւորութիւնը իր փափաքած ձևով ու չափով մասնակցելու այդ Յոբելեանին, որ պիտի խանդավառէ բոլոր անոնք, որոնք՝ առանց նկատի ունենալու համոզումի, տել սակէտի և նոյնիսկ դաւանանքի տարբերութիւնները, իրենց սրտին մէջ կը տածեն խուրունկ և անվերապահ պաշտում մը՝ հանդէպ Ձեր Բ. Սրբազնութեանն պատուական և թանկաղին անձին։

Թրջանայ կիսադարհան կրթական այս բոյնը, սակայն, չզրկուհյու համար ծրագրր հալ «Դուրհան Մատհնադարան»ի հաստատութենան մասնակցելու պատիւէն, կը փափաքի «ջանի մը ջարհը» ունենալ անոր չէնջին, և կամ «տնկիւն մը» անոր դարակներուն մէջ։

Ուստի, ներփակելով մեր լուման, կը խնդրենւք որ Ձեր Բարձր Սրբագնուխիւնը բա րեծաճի ընդունիլ գայն՝ իրը ծաւաստին Խնամակալուխեանս և Կեդրոնականի կազմին

սրտագին և անկեղծ զգացմանց։

Տա՜յը Երկինւը, որ Ձերդ Ամեն. Սրբազնութիւնը տեսներ երկար և երջանիկ տարի_ ներու չարը մը, ի փառո Ազգին եւ ի թարդաւաճումն հայ դրականութեան եւ Հայ. Ս. Եկեղեցւոյ։

Մատուցանելով մեր ակնածալից մեծարան քները, և համրուրելով Ամեն . Սրրագան Հօրդ Ս. Աջր.

D դիմաց Whatahujacphate Ղալաթիու

7 Հոկտ. 1929 Ղալաթիա (Կ. Պոլիս) - Ս. Լուս. Եկեղց. և Ադդ. Կեդը. Վարժարանի Վ. Ատենադպիրի - Ատենապետ

ԼԵՒՈՆ ՏՆՏԵՍԵԱՆ ՏՕՔՔ. ԳՐԻԳՈՐ 8. ՔԷՇԻՇԵԱՆ

4. hts. 5 Okt. 1929

U.d'h hanymarhe

(46 left)

Տ. Տ. Եզիչէ Սրբազան Արջեպս. Դուրեան Արժանընտիր Գահակալ Առաջելական Ս. Յակորհանց ԱԹոռին չԵրուսաղէմ

Fundpuranips Stp.

Աշտորիոյ մայրաքաղաքին՝ Վիեննայի փոքրախիշ գաղուխն ևս, գլիաշորուխեամբ իր անարժան Հոգևոր Հովիշին, կր փուխայ իր խոնարհ բայց սրտագին մաղխանքներն ու չնորհաշորուխիւններն ուղղել Ձերդ Բարձր Սրբազնուխեան յառաջիկայ անուան և յիսնամեայ կրկնակ ծառայուխեանց կրկնակ յորելեաններուն առխիշ։

Կը մաղթենւք չԵրկնաւորէն որ պարգևէ Ձերդ Բարձրապատուութեան կար և կարողու թիւն դեռ բազմաթիւ տարիներ արդիւնաւէտ ու ազգօգուտ գործունէութիւն մ՚ունենալու։

Հողևոր Հովիշ Հայոց ի Վիեննա ԵՂԻՇԷ ՔՀՑ. ԻՒԹԻՒՃԵՍՆ

6. Գ. Յառաջիկայ Կիրակի, 13 Հոկտ. Ս. Մատրանս մեջ տեղի կ'ունենայ յատուկ յիչատակի մաղթանը ու հանդես ի յարդանս բարձրաչնորհ Յորելեարիդ ։ Նոյն

BANQUE OTTOMANE GALATA 4: Anglia, 9 2ngin. 1929

Constantinople

U.d'h hungmanfie

8. 8. եզիչէ Սրբազան Դուրեան Արժանընտիր Պատրիար, Ս. Տեղեաց յերուսագէմ

Աժենապատիւ Սրբազան Պատրիարը Հայր,

Ներկայիւս կը փուխամ մատուցանել իմ ջերմազին չնորհաւորութիւններս և սրտաբուխ մաղթան քներս մեծանուն Յորելեարիդ` կատարելի խիստ արժանի Յորելեանին առթիւ։ Սրրազան Հայր, յանչափո կը փափաքեի Բարձրաչնորհ Սրրագնուխեանդ Յոբելեա_ նին տութիւ յնրուսաղեն հիմնուելիք Մտահնադարանին հարկ հղած ծախուց նիւխական ծառայութիւնս ի սպաս դնել. բայց իսնեծ ցաւ սրտիս, քանի որ գործաւոր մըն եմ, չկր<mark>նալով այդ</mark> փափաքիս հանիլ, և չուղելով միանդամայն Բարձր. Սրբագնութեանդ անուան կանգնելի այդ սխրալի կոթողին առթիւ անմամն մնալ, փութացի ի ստորեւ նը-չանակետլ հինդ գիրքերը յանձնել Պատրիարքական Փոխանորդ Գեր. Սմբատ Եպիսկ. Գաղաղետնի, դրկելու համար Ձերդ Սրբազնութեան։

ԵԹԷ Բարձրաչնորն Սրբագնութիւնդ արժան կը համարի և կը հաճի ընդունիլ զանոն**ը նոյն Մ**ատենադարանին մէջ, հաճեցէ<u>ը</u> հրամայել, որու որ անկէ, նոյն գր<u>ր</u>երը

փոխադրել Երուսաղեն:

Գրքերը հետևեալներն են.

ՄԷկ ձեռը բառարան Ֆրանսահայ Գ. Լուսինեան

» » Մնել. Թուրջերէն Բէտհաւս

» » Ֆր.ը. Մնելիերէն Բէտհաւս

» » Անել. Հայերէն Ցակորեան

» Պատմութիւն Պալքանեան Պատերազմին Ա. Անտոնեան Յուսալով որ իմ սոյն գոյզն նուէրս չնորհ պիտի դտնէ Բարձր. Սրբազնութեանդ

մom, կը փութամ կանկսել խորին չնորհակալութիւններս:

Մնամ համբուրիւ Ս. Աջոյն Բարձր. ՍրրազնուԹեանդ և կարօտ ԱղօԹ քին Խ. Ծ. Տ. ՏՕՂՐԱՄԱՃԵՍՆ



ՌՈՒՄԱՆԱՀԱՑ ԹԵՄԱԿԱՆ ԳՈՐԾԱԳԻՐ ՄԱՐՄԻՆ

27, Bulv. Carol, Bucuresti Nº 405

10 Zaljahafphp 1929

U,d'Ebaugampe

8. 8. Եղիչէ Արթ. Դուրեան Պատրիարջ Երուսաղէմի

Յանուն Ռուժանահայ թեժին և բովանդակ ռուժանահայութեան՝ կուդանք ժեր յարդանքին ու ակնածանքին հարկը բերել Ձերդ Բարձր Սրբազնութեան, իր հոդեւոր կոչժան

shound hough motifie unfile:

Իրրեւ մէկ մասնիկը հայ ժողովուրդին սփռուած աշխարհի վրայ՝ ջերմ սրտով է որ մեր խոնարհ ողջոյնը կը բերենք խառնել համազգային այս տոնին, դոր հայ ժողովուրդը կը տոնե այսօր խոնարհելու համար իր մեծագոյն զաւակներէն մէկուն յիսուն տարիներու վաստակին առջեւ։

Ու այս առնիւ կը մաղնենք Ձեր Սրբազնունեան նաև շատ օրեր, Հայ Եկեղեցւոյ

եւ հայ դպրունեանց փառքին համար։

Նախագահ Ռումանահայ Թեմ . Մարմնի Առաջնորդ Հայոց Ռումանիոյ ՅՈՒՍԻԿ ԱՐՔԵՊՍ . ԶՈՀՐԱԲԵԱՆ Անդամներ Թեմ . Գործ . Մարմնի Ա. ՄԱՆԻՍԱԼԵԱՆ Գ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՍԻՄԷՈՆ Վ . ՔԵԱՀԵԱԵԱՆ Պ . ԼԵՒՈՆԵԱՆ

Քարտուղար 8. Ճ. ՍԻՐՈՒՆԻ



10 2nhm. 1929

PU.L. WALLUTTE ZUBAS ՏՐԻՊՕԼԻՍ - ԼԻԲԱՆԱՆ

> U.d b hungmonpe S. S. balet U. Uppay . Truphate Արժ . Պատրիար,ը Առ.թ . Ախա . Սրբոց Ցակորհանց it pur uning his

Գերաչնորն Ս. Պատրիարդ Հայր,

Կր ցաշինը որ Ձեր Աժենապատուութեան Յորելիանական հանդիսութեանց անձաժը ներկայ չի պիտի կընանը գանուիլ. ուստի չերմապես կր մարհաւորենը և կր վերառա թենւթ մեր որդիական անկեցծ մադիան բները, խնդրելով Բարձրեալէն երկար տարիներ անվսախա եւ անսասան պահել Ձեր Սրբազնութեան հոյակապ ներկայութեւնը Առաթե juliuli U. U. Hannają dpuj:

Որդիական խորին յարգանօր կը մատչինք ի համրոյր Պատը. Ս. Այոյդ I glading Pepipoph Pung . Vaphacoah U.mli Lunghin U.mli hung uppy U. UUZUEPERBUIL U. U.Pornible



Բարևչնորհ Սրբազան Հայր Luip bypyt Prichting

Պատրիարը Երուսադեմայ

Վադամեռիկ բանաստեղծ Պետրոս Գուրեան , պաչտելի եղբայրը Ձերդ Բարձր Սրբադ_ նութեան, իր դոչար խոչերուն վերաառութեանց միոյն մէջ այսպէս էր արտալայառւած if opi

«Հանձարը վիկին մէջ գանկ մը հղաւ, առանց մարդկութեան եթերին մէջ դիսաւոր Ժրլլայու...»։ Այդ հատընտիր տողերը դրած պահուն կրնա^րը մակաբերել արդեօ*ը ի*է իր անունը բանաստեղծ մակզիրով պիտի յաշերժանար մի օր դափնիներու յացթագանծ շարջով մբ, Թէ իր փոջը եղբայրը կուսակըմ եկեղեցականութեան նուիրուած իր օժուն գրչով , արտակարգ կարողութեամբ Ս. Երուսադեմայ պատրիարջական գահը պիտի բարձրանար և հուսկ ուրեմն յիսնաժեայ յոբելեանի մը փառապսակը կրել կարող պիտի ըլլաբ իր վաստակարեկ ճակտին...։ Եթէ գիտնար Պետրոս այսօրուան Գուրեան բարեհամրաւ գերդաստանի անուան չուրջ հիւսուած փառջը՝ պիտի ըսեր այնմ. ոչ՝ գոյգ հանձարները գանկ չեզան վիճին մէջ... այլ՝ մարզկութեան եթերին մէջ մէյմէկ դիսաւորներ...

Արգ , Աստուածընտիր Հայր , այսօրուան հանգիսականացդ ցնծերգներուն հետ կուգաժ խառնել իմ ալ տկար ձայնո Քալիֆօրնիոյ օտար ափերէն, մաղթելով որ դեռ չատ ու չատ երկար տարիներ պայծառագեղ հորիզոն մր ճաճանչէ ծերունադարդ Հայրապետիդ անխոնջ գլխուն եւ Ձեր վսեմ ճակատ փայլի իբրեւ աստղ մը անչէջ ու վճիտ։

Թոգ Սուրբ Յարութեան տաձարը թնգայ հիմերէն որ եղեր փառ բ պատիւ տոհմիդ ne somfig ...

1929 Utayar. 10 Los Angeles, Calif. Մնամ ջերմաջերմ օրհնութեանցը կարօտ Ամենախոնարհ ազախին Ձեր ՎԵՐԺԻՆԻ ՏԵՐ ՄԿՐՏԻՉԵԱՆ



U. d'h Tummyumpe

8. 8. Եղիչէ Ս. Ար. թեպիսկոպոս Դուրեան Արժանընտիր Պատրիար, Ս. Ախուոյն

Երուսաղէմի

Թոյլ տուէ ը որ խոնարհարար համարձակիմ մատուցանել սրտադին չնորհաւորութիւններս Ձեր Քահանայութեան և Ուսուցչութենան Ցիսնամեայ Բարերաստիկ Ցորելեանին առթիւ ։ Գոհութիւն Բարձրելոյն, որ, կ'արժանացնէ Ձեր Ամենապատուսւթիւնը, ի միսիթարութիւն և յուրախութիւն մեզ, տեսնելու իր բեղմնաւոր գործունէութեան այս երջանիկ Ցորելեանը։

Սրբազան Հայր, Ձեր բովանդակ կետնւթը եղած է արդիւնաւոր աշխատութեանց չրջան մը։ Ձեր Բարձր Սրբազնութերւնը ապրած է կետնւթը Հոդևորականի, կետնւթը Ուսուցչի, կետնւթը Գրադէտի․ բոլորին մէջ ալ բեղուն ու արդասաւոր։

Որպես Հոգևորական, յօրէ անտի որ նուիրեցաք Աստուծոլ Տաճարին և Հայ Բեժին ծառայունեան, Ձեր բովանդակ կետնքին մէջ օրինակելի և պատկառելի ընծայեցուցիք ղՁեղ, արտափայլելով միաժամանակ Ձեր մաքուր սրտին բարունիւնն և իսկապէս հայ-րապատիւ ըննացքը։ Ձեր հմտալից ու հմայիչ քարողունիւնները, օծուն Ս․Գիրքին ու դիով, մեդրի նման կը հոսէին Ձեր չրնուն քեն կ'արձագանդեին եկեղեցւոլ սրբադան կամարներուն տակ, առաջնորդելով միչտ հաւատացեալները հիացումի և մխինարու-նեան։ Ձեր գործունքունիւնը սակայն չէ սահմանափակուած միայն այս մարդին մէջ, այլ ընդարձակուած է այն, Արմաչի նե նրուսաղէմի մէջ, պատրաստելով ու ընծայելով Հայ Եկեղեցւոլ և Աղգին հոյլ մր մչակներ, որոնք ներչնչուած Ձեր կրձնաբոյը ոգիով և համրարած Ձեր հմտունենեն կարևոր պաչարով, աւնլցուցին փայլը մեր Ս․Եկե_ ղեցւոյն։

Որպէս Ուսուցիչ, յիսուն տարուան այս հրկարաձիգ շրջանի մէջ, կրթեցիջ Հայ մանուկն ու պատանին մաջուր բարոյականով մր և կերտեցիչ անոնց սիրան ու հոգին Բարւոյն, Գեղեցկին ու Ճշմարտին բարձր գաղափարականով և կազմեցիջ անհատակաչնութիւններ, որոնջ աւելցուցին փառջը Հայ Մտաշորականութեան։ Ձեր պատրաստած կրօնաչունչ գասադիրջերը ոչ միայն երեկուան ու այսօրուան, այլև վաղուան ու յաչ ջորդական սերունդներուն առաջնորդն են ու պիտի ըլլան։

Որպէս Գրագէտ, Ձեր լեղուարիտուխիւնը ու բոլոր ծմտուխիւնը և Ձեր լուսաւոր միտքին արտադրուխիւնները ի սպաս գրիք ծայ միտքին զարգացման։ Հայ այրուրէն, քին և հայ լեղուին կազմուխեան պարադաներուն ու օտար լեղուաց հետ ունեցած փոխ յարաբերուխեանց մասին Ձեր տեսուխիւններն ապացոյց են Ձեր խորազնին ու քննական ուսումնասիրուխեանց։ Հայ Պատմուխեան ու բանասիրուխեան նկատմամբ խաւարակուռ դարերու մէջ հոս հոն ցանցնուած հատուկոտոր հատուած ու գրչագրեր լուսաբանեցիք քննադատի առողջ հայեցուածներով ու նոր ի նորոյ կերտեցիք զայն։ Այսպէս Սրբազան դրականուխեան ամէն ձիւղերուն մէջ յաջողեցաք ի վեր հանել Ձեր բազմակողմանի հրմ-տուխիւնն ու տաղանդը։ Ձեր հրատարակած հովուական, քնարերդական, քերքողական ու դասական հատորները մէյմէկ հոյակապ կոխողները կը կազմեն Ձեր փառքին և լուսաւոր փարոսը Ձեր մեծ իմացականուխեան։

Այս գեղեցիկ յատկութեանց վրայ կուզայ կ'աւելնայ նաև պարտաձանաչի գերազանց յատկութիւնն ալ, որով ընդունեցիք պաշտօններ, զորս Ազգը վստահեցաւ Ձեզի
ու Դուք սիրեցիք բոլորը ու սիրուեցաք բոլորէն, օգտակար ըլլալով ամենուն։ Սրբազան
Հայր, Դուք սիրուեցաք ոչ միայն մերիններէն, այլև օտարներէն իսկ, որոնք ականջալուր էին Ձեր բարի համբաւին և որոցմէ չատ չատեր ականատես եղան ու հմայուած
խոնարհեցան Ձեր բազմակողմանի — արդիւնք Տոհմիկ դաստիարակութեան — հմտու-

Ս. Յակորևանց Առաջելական Ախոռը, որուն արժանաւոր գահակալն է Ձեր Ամե,

Նապատուութիւնը, բովանդակ Հայութեան հետ խիստ ուրախ է ու իսանդավառուած, այս դեղեցիկ և յաւէտ անմոռանալի Յորելեանին առթիւ և մեր որտերը հիտաջանչ բացադանչութիւններով կը դովարանեն Ձեր փառջը, Ձեր կարողութիւնը, Ձեր մեծ համրաւը, որոնջ կը բարձրացնեն Հայը։

Սրտագինա կը մազիեմ, որ Աստուած ընդ երկար պահէ Ձեր Թանկազին կետները ի փառո Հայաստանհայց Առաջելական Ս. Եկեղեցւոյ, ի պարծանո Ս. Յակորեանց Աթև

ռոյն և ի միրիֆարութիւն Քրիստոսի Հայ բանաւոր փոքրիկ Հօտին։

10 Հոկտ. 1929 Ազդ. Պատրիար,քարան ի Գուժգարու Խոնաբնարար ժատչելով ի համրոյը Ս. Աջոյդ Մնամ՝ որդիական ակնածանօր Քարտուզար Փոխանորդարանի ՅԱԿՈԲ ՎԱՐԺԱՊԵՏԵՍՆ



P. 7-10-929 Toplazuite

U.dhamajamler

Տ. Տ. Եղիչէ Ս. Արջեպս. Դուրհան Մեղուաջան Պատրիարջ Առ. ԱԹուոյ Ս. Երուսաղէմ

Udbu. Lag. Oungy has,

Իրը «լոյս աշխարհի», որպես «աղ երկրի», լինելով «գործակից Աստուծոյ», աստուածային կայծն որ ի Ձեզ, ի մանուկ հասակե լուսաւորեց, համեմեց, բոցավառեց Ձեզ հանդիպելու բախան ունեցող բոլոր ողիները, զաելով, բարձրացնելով, կազմելով դանոնը մարմնաւոր երելտակներ, օժտեալ անձնուիրութեան չնորեով։

U.dhi. Luq. Vingy ful.

Բազմաչարչար ազգի այն բոլոր անհատները Ձեղ կը պարտին իրենց երջանկուժեան րոպէները թշուտռութեան, հալածանաց, նոյն իսկ անձկութեանց մեջ, որովհետև ներչնչեցիք իրենց վսեմ դաղափարներ, հաւատքը՝ թե վերջապես յաղթանակը բարիին է։

Willia. Lug. Thungy ful.

Չկարողանալով այլազգ ցոյց տալ իր հրախտադիտութիւնը, կը համբուրէ Ձեր Ս․ Աջև, ի չնորհաշորութիւն Ձեր Ցիմնաժետկին մաղթելով կետն, հրջանիկ Աժեն․ Հօրդ։

> Կոչեցհալն ի Քէն ՆԵՐՍԷՍ (ՔՀՆՅ․) ԱՌԱՔԵԼԵՄՆ



9 mpfm, 12 Infm. 1929

. Ե. Դուրեան» Յոբելինական Յանձնաժողովին, ի Ս. Երուսաղէմ

Մեծ հիացումով ու խորին յարգանօք կուգամ՝ շնորհաւորութիւններս ու միանգամայն բարեմաղթութիւններս յայտնելու Սրբազան Յորելեարին՝ Ամենապատիւ Տէր Տէր Եղիչէ Արջեպիսկոպոս Դուրեանին, դիտնական և բանաստեղծ Պատրիարջին Սրբոյ Երուսաղիմայ Աթոռին, սիրելւոյն համօրէն աղդին։

ի համբոյր ժատչելով Սրբոյ Աջին եւ ապաւինելով օրհնութեան Նորին Աժենապա-

տուու թեան,

Եմ՝ խոնարհ ծառայ Կ. ԲԱՍՄՍՋԵՍՆ

Առ Հոգ . Տէրն իմ . Բարձրաշնորհ Տ . Եզիչէ Սրբազան Արջ . Եպիսկոպոս Դուրեան Պատրիարջն Սրբոց Ցակովբեանց Առաջելական Աթեռւոյն Ազգիս , որ ՛ի Ս . Երուսազէմ . Ի լրումն Ցիոնամեկին Քահանայական Ս . Օծման .

> 1879 - ՀԱԳԻՒՏԱՐ — "ԵՐՈՒՍԱՂԷՄ 1929 Բանհիշսնալ ի Փարիզ ԱՐՏԱԳԻՆ ՄԵԾԱՐԱՆՕՔ

1

Bylighy que whynegulaiti 7. եկավարող քաջարինական՝ Իսկական Հայր՝ մատագերամ Շրրջապատող սանուց հայկեսն, երն պարգեն և յար փայլական. Սրրբացա՛ն պետ՝ Քոյդ դաւացան Paning խրմբից ի լուսարփեան Բանակետորն գարդացական, Անվանի կանկութ Ձեր մարդական, Quappondfip լրնորհական, Ս.ո.ատարայի ներչնչակական, Նրմանատիպ նրարրեցան. U. . Եպիսկոպոս պետ պատուակա՜ն՝ P էնայրո՞րհ խոր հրմաական Քոյովը ձրրի՛ւք զարդարեցան, Երջանկարերը հանդիսացան Պարմանիք մեր՝ որք խոհական P սպաս եզան վայելչական Սրրբոյ Տանրն մեր Հայկագնեան կոչման բարձու արժանացան. Որոց վասըն՝ դէ՛տ Սրրբագան Պարտական Քեց Ազգն Արամեան. Ոզով երախտագիտական Սրրբագնապանծ Հօրդ աննրման։

Դուրեան դարմէն համեստական՝ Որ փայլեցար գոհարակա՜ն Իիւսեալ պրսակ ի խոնարհ տան, Բէն ընծայեաց հօտին Հայկեան Երջանկափառ ՛ի լոյս օծման, Արեգ պայծա՜ռ տէրունական, Նորադրւա՜րթ Քոյդ Յորելեան՝

Ծնծութեամն տոն անտըխրական։ 3

Վրուամչապուհ հին Քահանայն՝
Ռամկականո այս բանհիւսական
Մնժեռ խանդիւ ի չարաժան
Մորէ, յոդէ մասնակցական
Շուրջ պատելոց յայս բերկրական
Պարակցելով խընդակցական
Որջան մարմնով եմ բացական
Իրեծիմ իկեւ արկածական,
Հա՛րք եւ եղբա՛րը՝ ասպընջական
Մնձ եղերո՛ւ ը ընդունարան
Մենացելոյս ի Փարիդեան
Քաղաջամայրն ժըխորական;

Բարձրաչնործ Սրրազան Տէ՛ր,
Չեմ մերձակայ առ Սրրազնապանծ Տէրդ, գի մատեայց ի համբուրել գչնորհարաշխ
Ս. Աջն, որ եղաւ ի գլուխ իմ ի Ս. Եկեղեցւոջն Հայոց Փարիզի, սա՛կայն, մերձ եմ
հոգւովս առ Ձեզ ։ Ի ժամուն՝ յորում կատարի այդր հանդիսադրութիւն լլման Յիսնամեկին քահանայական սրբալոյս օծման Ձերոյ, մասնակից եմ ի բացուստ՝ ընդ գերյարգոյ հանդիսադիրոն, որք չուրջ պատեալ կան զՁեօք, ունիմ սփռել գհոգերուղխ
մրմունջոն իմ յոտս Ամենակալին վասն ԱՆԳԻՆ ԿԵՆԱՑ Սրբազան Տետոնդ։

Ապա՝ ըստ վայելուչ կարդադրութեան Բարձր. Տ. Թորդոմ Սրբադան Արջ.ին-Կաթողիկոսական Արժանընտիր Պատուիրակին՝ համախումբ գնալ ունիմջ ի սրածն յարդարեալ, կատարել ե՛ւ աստ դպատչաճաւոր հանդէոն ի մեծարանս Սրբագնափայլ Յոբելեարիդ, որում պարդևեսցէ Տէր կեանս արևչատս ի մեծ խնդութիւն Ազգիս և ի վա-

jbju U. Ufdannja:

11 Zahala . 1929, p Duply

Մատչելով հոգւով ի խոնարհ ողջագոյրս, Հոգ. Հով. Հայոց Փարիզի և շրջակայիցն՝ ՎՌԱՄՇԱՊՈՒՀ ԵՊԻՍ. ՔԻՊԱՐԵԱՆ (ի Տանէն Արջուկենց) Սադալա=Նիկոպոլսեցի U.d'ենապատիւ

8. Եղիչէ Ս. Արբեպիսկոպոս Գուրեան Արժանընտիր Պատրիար, Հայոց

U. bpnenung tof.

Մեծատագանդ Սրրագան Հայր.

Ձեր Բարձր Սրբազառնեան բահանայութեան Յիմնաժեայ բարեղեպ Յորելեանին առնել, իրրև արուպն ի ջահանայից, սկիդրէն ի վեր հիացող մր լինելով Ձեր Ամենապատուութեան մաքրակենցաղ, տիպար հոդևորականի կեսմեքին, կրթեական, գրական, իմաստասիրական և եկեղեցական մարզերու մեջ ի յայա բերած Ձեր աննաիրներաց, բաղմարդիւն գործունեութեան և ազգօգուտ ձեռնարկութեանց, այսօր՝ երկտողիւս կր համարձակիմ չնորհաւորել գՁեր Բարձր Սրբազնութիւն։

Միևնոյն ատեն՝ որտադին և ջերաջերժ մաղթանօր՝ խնդրելով ի բարերար Տետոնե մերմէ կետնո ձիզս և բարերաստիկս պարզևել Ձերումդ Ամենապատուութեան, բամայր ամս, ի փառո Հայաստաննայց Առաջելական Ս. Եկեղեցւոյ և ի պարծանս ազգիս Հայալ։

Աժենախորին ակնածանօր և համրուրիւ Ս. Աջոյգ՝

v. v. 4.0.200. 428. masto. U. Saifs. If youly bylen legenja Dupligh

1929 Znumbalphp 12

Սոնենապատիւ

bhlamba , 12 Zalia. 1929

Տէր Տէր Եղիչէ Արջեպիսկոպոս Գուրեան Պատրիարը Աժենայն Հայոց

Ս.ժենապատիւ Սրրազան Հա՛յր

Հայ ժողովուրդը այսօր կը տոնէ իր սիրական և անձնուէր Հայրիկին Տոնաիսնբու թեան տարեդարձը և անմուն ցնծութենամբ կը հռչակէ իր Յորելեանը. ե՛ ըանի անոնց որջ առիթեր ունին ներկայ գտնուելու այդ Ս. Քաղաջին գերազանցօրէն բարձր Պատրիարջին ձոնուած հանդէսներու և վայելել իր բարձր հովանին։

Այս առնքիւ, իմ անգօր գրչով չեմ կարող սրտիս անհուն զգացմանց մէկ գոյզն ար_ տալայտութիւնն իսկ ընհլ, և սակայն եթե, ոչ մօտից գեթե հեռուեն կր ձայնակցիմ, անթեւ շրթներէն բիսած աղօթից, աղաչելով առ բարին Աստուած որ տայ մեր Սրբագան Հայրիկին Թանկագին կենաց կատարեալ առողջութիւն և խաղաղասէր տարիներու երկար չարք մը։ Ուստի՝ Ամենապատիշ Սրրազան Հայր, հաձեցէք ընդունիլ Ձեր անարժան և երախշ

տագէտ սանուհւոյն սրտազին մաղթանքները։ Խոնարհարար համրուրելով Ձեր Ս. Աջը՝

ՄԱՐԻ Յ. ՄԱՂԱՔԵԱՆ

20.8 b00060.4 40.69-1-0

4. Պոլիս 14 Հոկտեմբեր 1929 Publing the Pouruply Phe 16

հբօնա-Բաբոյական եւ Գբական

Phr 757

U.d to town umper

S. byligh Upp. Upplay . Parplant Արժանընտիր Պատրիարը Առաջելական Աթեռույ Ս. Յակորհանց stepmening to

Շնորհագարդ Սրրագան Հայր.

Թոյլ տուէ,ը, Հայր Սրրազան, Հայ. Ս. Եկեղեցւոյ խոնարհ պայտօնեիս՝ հիացումի անկեղծ զգացումներս մատուցանել Ձերգ Սրբագնութեան, իր քահանայութեան յիսնամեայ Յոբելեանին առթիւ։

Ձեր կէս դարու դործ ոն կետնւջը, կետնւջ մը հղած է ինւջնագարգացման և սերունդներու հոգեւոր և իմացական զարգացման նուիրուած, կետնւջ մը որ յարաձուն վերելջ մըն է դէպի մտաւորական եւ բարոյական անմատչելի բարձրութիւնները, կետնւջ մը միսթիջ խոկումներու և բանաստեղծական ներչնչումի, կետնւջ մը նուիրումի՝ աչխարհիկ մտածումներէ, պայքարներէն վայելջներէ չատ վեր, կետնւջը տիպար սրբակրոն եկեղեցականի, աստուածատուր չնորհջի եւ տաղանգի, եւ միեւնոյն ատեն յարատեւ, ու դիտակից, ու բեղնաւոր աչխատանջի եւ խոր հմտութենան։

Ազգին ի ոփիշոս աչխարհի ցրուած մտաշորականունիշնը այսօր միահամուռ կը ներրող է, կ'ուսումնասիր է և ամենաբարձր գնահատունիշն մը կը բերէ այդ օրինակելի, այդ տիպար կեանւքին, ներչնչարան մը բոլոր անոնց որ դէպի աղնիշը, դէպի մաքուրը, դէպի հոգեւորական եւ մտաշորական իտէա՛լը ձգտում մը ունին, որ բարերար է ինւքնին՝ Թէ իսկ ճնարաւոր կ'ըլլայ հասնիլ իտէալ բարձրունեան, որուն վրայ կը գտնուի Ձերդ Սրր-

րացնու / իւն ։

Այդ մտածումով աճա , Հայ Խօսնակ բարերախտ կը զգայ ին քզին քը՝ Առաքելաչնորճ
Յորելեարիդ նուիրելով իր Սեպտ-Հոկտ ի միացեալ Թիւը , իր չուրջը ճաւաքած պատուական աշխատակիցներով , որոնք — և անոնց ճետ ամսագրիս խմբագրուԹիւնը — իրենց
հիացումի բաժինը կը բերեն ճոգևորական բարձր դէմ քիդ բազմակոզմանի տաղանդին և
ձիրքերուն ։

Ասով, սրբակըօն հովուապետիդ յարգանքի սրտագին հարկ մը մատուցանելով հանդերձ, կը կարձենք ծառայած բլլալ մասնաւորապես մեր նոր սերունդին, անոր առջև պատկերացնելով տիպար դեմքը, որու ամբողջ կեանքը ազնուութիւն, սրբութիւն, բարձրացում եղած է միչտ մտջի վայելքներու իտեալ ոլորտներու մեջ, որու պետք է ձգտի ինք ալ։

Ծնորհաց Աստուածը զմայլելի ձիրջերով օժտած է Ձեր Սրբազնութիւնը, որ գիտ-

ցած է ուժաւորել գանոնը ու բազմապատկել։

Մեր խորունկ հիացումի անկեղծ հարկը մատուցանելու առժիւ կը խնդրենք, Հայր Սրրազան, որ հահիք ընդունիլ զայն իրրեւ այրիին լուման՝ մտաւորականներու արժէքաւոր արտայայտուժեանց մէջտեղ, և այս առժիւ կը խնդրենք հայրական օրհնուժիւնը Ձերդ Ամենապատուուժեան, որուն ի համրոյր կը մատչիմք օծեալ Ս. Աջոյն։

Աժենախոնարհ ծառայ և որդի ՁԱՐՄԱՑՐ Ա. ՔՀՑ . ԿԷԶԻՒՐԵԱՆ

4. Պոլիս, 14 Հոկտեմբեր 1929

Սույրումերու

8. 8. նդիչէ Ս. Արջեպիսկոպոս Գուբեան

Պատրիար ը Երուսաղ էմի

Ամենապատիւ Ս. Հայր,

«Նոր Դպրոց»ը հպարտունեամբ կը խորհի նէ ինչըն ալ տեղ մը կը գրաւէ Ձեր Ա մենապատուունեան չիչատակներուն մէջ, իրը հաստատունիւն մը որ վայելած է Անոր համակրունիւնը և քաջալերունիւնը։

Ու եթե պարազաները թոյլատու ըլլային, առաջիններէն պիտի ըլլար ան իր ակնա_ ծու գորովի և հրախտագիտութեան առհաւատչեայն մատուցանելու Ձեր Ամենապատ_

ուութեան՝ Անոր բարերաստիկ Ցոբելեանին առիքիւ։

Հաւաջական այդ սրտադեղ արտայայտունիւնը ընծայելու անկարող «Նոր Դպրոց»ը կը համարձակի խնդրել Ձեր Ամենապատուունենեն որ բարեհաձի անոր Հիմնադրին անև ուամբ դրկուած դոյդն նուէրին մէջ տեսնել «Նոր Դպրոց»ի հիմնադիրներուն, ուսուցչաւ կան մարմնոյն և աչակերտունեան յարգալից երախտագիտունեան գրաւականը, ինչպէս նաև անոր հոդերուղի մաղնանքը Ձեր Ամենապատուունեան արևչատունեան համար։ Մատչելով ի համրոյր Ձերդ Ամենապատուունենան Ս. Աջոյն,

Մնամ որդիական ամենախոնարհ մեծարանօր

8. 6. 21-27-4642

4. Anglia, 15 2nhaladplep 1929

Ամենապատիւ Տ. Եղիչէ Սրբազան Արջեպիսկոպոս Առաջելաչնորե Պատրիարջ Ս. Արուսաղէմի

Աժենապատիւ Սրբագան Հայր,

Ձեր Աժենապատուութեան արգաւանդ և ժաջուր դործունեութեան յորելեանը անդաժ մը ևս և աւելի կենդանի կերպով կը պատկերացնե անուլ և պանծալի յիլատակներով լեցուն հոդւոյս՝ բոլոր այն արժանիջները և առաջինութիւնները, որոնց վրայ հիանալու և որոնցժով տոգորուելու դեղեցիկ առիթնները ունեցած եժ պատանեկութենանս մեջ՝ իրը Անոր խոնարհ մեկ սանը, և երիտասարդութեանս ընթացջին, իրը Անոր համակրութեան և բարեկամութենան արժանացած մեկը։

Ու եթե աժէն հայ խորունկ պատկառանքով և անհուն միրով իր հոգւոյն խորը կը կրէ Ձեր Աժենապատուութեան չքնաղ անձը, որքան աւելի խորունկ է ժեծարանքը և աւելի խանդակաթ է գորովը ժէկու ժը, որ այնքան ժշտեն և այնքան երկար ատեն այդ պատուական Անձէն ըդհած աղնուացուցիչ և թովիչ արդեցութեան տակ է գտնուած ։

Եւ որջա՞ն աւելի հոգերուգի՝ այն ջերմագին մագիան,թը, գոր Ձեր Ամենապատուու Թեան կը մատուցանէ իր խոնարհ որդին՝ Անոր բարերաստիկ Յորելեանին առխիւ, մագ Թանջ երկա՜ր կեանջի՝ երջանկութեանը համար այն Ազգին, գոր Ան կը սիրէ այնջան անկեղծորէն և դիտակցորէն։

Մատչելով ի համբոյր Ձերգ Աժենապատուութեան Ս. Աջոյն Որդիական աժենախոնարհ յարգանօր ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ



«*ՆՈՐ ԼՈՒՐ*» ԵՐԵԿՈՑԵԱՆ ՕՐԱԹԵՐԹ Ղալաթիա, Մէտւէսէ Փողոց. թիւ ՉՅ

W. St. Sugarofic

8. 8. Եղիչէ Ս. Արքեպիսկոպոս Դուրեան Արժանընտիր Պատրիարը Ս. Յակորեանց Ախուոյն լԵրուսադէմ

U.dta: U. Zuijp,

Իրը մին Հայ Մամուլի վաղեմի եւ համեստ աչխատաւորներէն եւ մօտէն դիտակ Պոլսոյ, Արմաչի և Երուսաղէմի մէջ Ձեր Բարձր Սրրադնութեան ունեցած երկարամեայ արդիւնաւէտ ու ազգօգուտ գործունէութեան, Ձեր Ամենապատուութեան Ուսուցչական և Քահանայական Ցիսնաժեայ արժանաւոր Ցորելեանին առթիւ, որ տեղի պիտի ունենայ մեծահանդէս, ամսոյս 26-27 ին, Երուսաղէմի և հանուր աչխարհի րոլոր հայաչատ կեղըոններու մէջ, խանդավառ մասնակցութեամբ բոլոր մերազնէից, կը խնդրեմ որ ներկայիւս բարեհահիք ընդունիլ նաև իմ որդիական ջերմադին չնորհաւորութիւններս և սրտադին ինդակցութեւններս, ի չարս հաղարատուր բարեմադ թուներու եկեղեցական թե աշխարհական։

Մաղքելով ի խորոց սրտի որ բարձրեալն Սոտուած կատարեալ առողջութիւն և արևչատութիւն պարզեւէ Ձեր Բարձր Սրբազնութեան եւ Հայ տառապետլ եւ տարաբախտ ազգը՝ Հայ. Առաք. Ս. Եկեզեցւոյ սփոփարար ու կենարար հովանիին ներքև՝ դեռ երկար տարիներ վայելէ Ձեր հայրական հոգածութիւնն ու հովանաւորութիւնը, եւ արժանանայ ցնծութեամբ տոնելու Ձեր 75 ամեայ Յորելեանը։ Մատչելով ի համբոյր ոծեալ Ս. Աջոյդ, հնամ միչտ Ձեր Սմենապատուութեան ամենախոնարհ և անձնուէր որդի՝

> ԼԵՒՈՆ ՄԻՀՐԱՆԵԱՆ (ԼԵՒՈՆԻԿ) Խմբագիր «Նոր Լուր» Օրաթերթի

4. 9nipu, 15 2nipu. 1929

THE ARMENIAN EVANGELICAL CHURCH
OF NEW YORK CITY
152 East 34th Street
A. A. BEDIKIAN, PASTOR

2n4mbdphp 2, 1929

Գեր․ Տ․ Բարզէն Եպիսկոպոս Կիշլէսէրեան Ս․ Ցակոբայ Վանչը Երուսաղէմ

Սրբազան Հայր.

Կր փափաջին Ձեր Սրբագնութեան միջոցաւ հաղորդել Ամենապատիւ Պատրիարջ Հօր, Եդիչէ Արջեպիսկոպոս Գուրեանի, իմ ջերմագին չնորհաւորութիւններս և մաղթանւթներու իր թահանայածժան լիսնաժեայ տարեդարձին առթիւ ։ Ես ալ հեռուէն խոնարճաբար կր միացնեմ ձայնս համազգային այն համերգին որ գրուատիքի, հիացման, ինչպէս նաև երախտագիտութեան խազերով կ'երգէ այս պահուս անոր անձնաւորու թեան և ծառայութեան արժանեաց փառաբանութիւնը։ Ցիրաւի մեր ազգային պատմա_ կան միակ հարստությիւնը կր կազմեն հոգեկան արժէջները, որոնջ մարմնացած եւ կո-Թողացած են այնպիսի կեան բերու մէջ որպիսին եղած է Դուրեան Պատրիար թի կեան քր ի միջի այլոց նմանեաց։ Անոն ը որ այս իրողութեան խորունկ գիտակցութիւնը ունին առաւել չափով կընան գնահատել այսպէս ապրուած անհատական կետն ջերու ճչմարիտ արժէջը։ Ոևէ մեծ մարդու մը նկարագրին արժէջը, ըստ իս, աշելի նչանակելի է ջան իր ծառայութեան արժէջը։ Մարդիկ, եթէ մեծ են, միչտ աւելի մեծ են ջան իրենց գործը։ Դուրեան Պատրիար, մեր ազգի մեծերէն մէկն եղած է, և անոր համար կր դասուի մեր մեծերուն կարգը, որովչետև իր նկարադիրը մեծ եղած է առաւել իսկ չափով ջան իր գործը։ Մնաց որ իր ծառայութիւններն ալ, եկեղեցւոյ ամենաբարձր և աշ մենապատասխանատու դիրջերուն մէջ, ազգին լաւերժական երախտագիտութեան ար_ ժանի կացուցած են զինւթը։ Իր իմացական չթնազ կարողութիւնները իր գլխուն ոսկե պսակն ու մեր սխրանաց և ներչնչմանց աղբիւրը եղած են։

Աղօթեջս՝ այն բարի Աստուծոյն որ զինքը մեր ազգին պարգևեր է, այն է որ դեռ չատ տարիներ չնորհէ իրեն որպէսզի ցաւատանջ Հայութիւնը սփոփանք գտնէ իր սըր-տին մէջ, որ պարծանքի առարկայ մբ ունենայ յանձին անոր իր ներկայ հոգեկան չջաւորութեանը մէջ, որ վերջապէս աւևլի դիւրաւ ձանչնայ և պաչտէ Ցիսուս-Քրիստոսը, որուն տիպար աչակերտն ու ծառան է ինք։

Սնկեղծ յարգանօք և ողջունիւ Ձերդ ծառայակից Տեառն Ա. Ա. ՊԵՏԻԿԵԱՆ



Գերապատիւ

Մեսրոպ Եպիսկոպոս Նչանեան Ատենապետ Գուրեան Յորել . Կեգր . Յանձնաժողովի Երուսադէմ

Գերապատիւ Ս. Հայր,

Պատիս ունեցայ ստանալու Ձեր 24 Յունիս Թուակիր նամակը եւ կը ներէք որ Բաշ ընդէն բացակայութեանս պատճառաւ պատասիսանս յապաղեցաւ ։

Թոյլ տուէջ նախ եւ առաջ Ձեզի յայանել Թէ, սկիզբէն ի վեր խանդավառ հիացող մը եղած եմ Ամէն. Եղիչէ Արջեպիսկ. Դուրեանի եկեղեցական եւ գրական, ինչպէս և քարողչական եւ ուսուցչական երկարաժետյ րեղմնաւոր գործունեութեան, որ այնքան գեղեցիկ արդիւն քներ առւած է եւ ժեր ազդին համար եղած է օրհնութեան մշտահոս ադրիւր մը։ Հետեւարար աժենաժեծ համակրան քով կր մասնակցիմ իր յիսնաժետյ Յոլրելեանին եւ աժենաջերմ մաղթան քներ կինաժետյ Յոլրելեանին եւ աժենաջերմ մաղթան քներ կ'ընեմ իր երկարակեցութեան համար։

Միեւնոյն առնիւ , իրը իմ անկեղծ հիացմունքիս աննչան մեկ արտայայտունիւնը, ներփակ Ձեզի կ'ուղղեմ հաղար ֆրանքի գումար մը , խնդրելով ընդունիլ դայն յօգուտ Ձեր օգտակար ձեռնարկին , որուն կը մաղնեմ լիակատար յաջողունիւն ։

Աժենախորին յարգանօր Ե. ԱՂԱԹՕՆ

8 Հոկտեմբեր 1929 11 Արուար Այպոնի, Բարից

U. Ste Limmy www fre

S. byligh U. U.p.phayu. Pricphate

Dumphupp Lugar U. Gracumghill

Ծնորհաշորութեան հրապարակային պարտականութիւնս կատարելէ յետոյ Նու Լուբի միջոցաւ, կուգաժ անհատապես ալ չնորհաշորել Ձեր Բարձր Սրբազնութիւնը, ջահաշ Նայական Ցիսնաժեակին առթիւ։

Այս Թոշականը հանելի յիչատակ մը կ'արինսյնէ մուջիս մէջ։ 50 տարի առաջ, Ս. Կարապետի եկեղեցին բերաւ դիս, Ձեր ընտանեկան պարադաներէն Եւդինէ անուն օրիտր-դը, երբ Ձեր Բարձր Սրբագնութքիւնը, իր ձեռնադրութքեան քառասունքը կը բոլորէր նոյն եկեղեցող մէջ։ Տակաւին վեցամեայ մանուկ՝ լսեցի Ձեր առաջին ընթերցումը Աւևտա-րանին, որուն արժանաւոր աչակերտն ու քարողիչը եղաք յետոյ։

Ամէն անդամ Ս. Կարապետի այդ պահարանը մտնելու առթիւ, կը յիչեմ մանկու-Թեանս այդ օրը՝ որուն վրայէն 50 տարիներ, փորձութիւններով, տառապան քներով լի երկար չրջան մը անցաւ, բայց Գուք Ձեր աննկուն հաւատքով և օրինակելի կեանքով, ծառայեցիք Ս. Եկեղեցող և արժանաւորապէս բարձրացաք յախոռ առաքելական։

Աղզին այս բազմատանջ վիճակին մէջ, կը մաղթեմ՝ երկար և առողջ կեան,ջ Ձեր Բարձր Սրբագնութեան յօգուտ Երուսաղէմի Ախոռին, որուն պետը կը գտնուի,ը։

Ազդը իրաշամբ կ'ակնկալէ տակաշին մեծ օդտակարութիւններ, համաձայն Ս. Աշե_ տարանի, ուր ըսուած է, «Որում չատ տուաւ չատ խնդրեսցի ինմանէ»։

> Որդիական խորին մեծարանօք և համբուրիւ Ս. Աջոյդ Ա. ՄՈՒՊԱՀԵԱՃԵԱՆ

15 Lulin. 1929

-1000000

Բարձրաչնորհ Տ. Եղիչէ Սրբադան Արջեպիսկոպոս Արժանընտիր Գահակալ Սրբց. Ցակորհանց Առաջել. Ախոռոյն Ի Մ. Երուսաղէմ

Պատուական Ս. Հոդեծնողդ իմ,

Քահանայական Յիոնաժեկի ժեծ տոներնիդ՝ համայն Ազգինն է, ժանաշանդ բոլոր հոգեծին որդշոցդ խինդն ու ցինծն է։

Վասնզի պատուականաց պատուական Սրբազան ծնողդ մեր՝ իսկապէս և չատ իրաւամբ արժանի էիջ յոբելինական այս հանդիսադրութենանց։

Խոնաբնարար և սրտադին կը մադիհո՞ք Սրբազնապանծ ծնողիդ մերում արևչատ և փառաւոր կեանք, որ Ազգն ընդերկար վայելէ Ձերդ Բարձրաչնորն Սրբազնութիւն ի ինամս Առաջելական Աթեռոյդ և ի յուրախութիւն որդիացելոցու Շնորճարաչիս Ս․Ս₋ Հոյդ Հայրական մատչելով ի ճամրոյր որդիական ակնածալից սիրով,

15 Հոկտեմրեր 1929 Փարիզ Եմ Հոգ. որդի և խոնարհ ծառայ ԳԱՐԵԳԻՆ ՔԱՀ. ՏԷՎԼԷԹԵԱՆ Պաչաշնեայ Ս. Եկեղեցւոյն Հայոց Փարիզի 27 RUE DES SABLONS. PARIS. XVIº

U.d'h Tumayampe

8. 8. Եղիչէ Սրրագան Արջեպիսկոպոս Գուրևան Պատրիարը Ս. Ախուսյն Երուսագէմայ

Սրրագան Հայր,

Երը ճարտար գրիչներ՝ աշխարհիս չորս ծագերէն, Ձեր Աժենապատուուվեան Քաճանայական Յիոնաժեակին հաժար սքանչելի տողեր կը չարադրեն, և Ձեր գրական, հրժտական ու բեժական անվիճելի կարողուվեան գովքը կը հիւսեն, ևս՝ բժիչկի տկար գրրչովս ի՞նչպէս կրնաժ արտայայտել իմ զգացումներս Ձեր այս մեծ Տօնին առժիւ։

Ձեր Սրրագնութիւնը գոր պատիւ ունիմ ճանչնալու բաւական տարիներէ ի վեր և գոր մօտէն ալ գնահատելու բարեպատենութիւնը ունեցած եմ Բարիզի մէջ և այլուր,

անկեղծորեն կ'ըսեմ թե Հայ նկեղեցիին մեծ փառքն է։

Դուջ, Սրրազան Հայր, Ձեր կէս դարու եկեղեցական կետնջով յոյժ բեղմնաւոր ե_ ղաք Աղզին, Ձեր գրչովը, լեզուով և դասակոստութիւններով, ասոր վկայ՝ Ձեր հասու_ ցած աչակերտները, որոնջ այսօր թէ Ձեզ և թէ մեզ մեծ պատիւ են։

Այս առքիշ իմ ամենաջերմ իմոդակցութիւններս ու չնորհաշորութիւններս յայտնել լով Ձեր Սրբազնութեան, կը սիրեմ յուսալ թէ դեռ չատ երկար տարիներ ժիր գործուշ նէութեամբ Ս. Աթոռին և Ազգին մեծ արդիւնչներ պիտի ընծայէ Ամենապատիշ Եղիչէ Սրբաղան Արջեպիսկոպոս Գուրեան,

Բարից , 17 Հոկտեմբեր 1929

Որու Ս․ Աջոյն մատչելով ի համբոյր Մնամ խոնաբհաբար (Տքթ․) ԱԼԼԱՀՎԷՐՏԻ ՈՐԴԻ



Ամենապատիւ Տ. Եղիչէ Արջեպս. Դուրեան Պատրիարջ Հայոց Երուսաղէմ

Ամենապատիւ Ս. Հայր,

Ձեր Քահանայութեան Ցիսնաժեայ Ցորելեանի տօնին առթիւ, կուդաժ ժիացնել իժ հիացժան ու սիրոյ զգացուժներս ժեծարանքի ժիահաղոյն արտայայտութեանց, որ Ձեր Աժենապատուութիւնը կը պաչարեն այս պահուս։ Հայ ազգը, յայտնելով Ձեզի իր երախտագիտութիւնը Ձեր ժտաւոր ու հանրային բազժավաստակ գործունէութեան հարտար, Ձեր անձին ժէջ կը պատուէ ու կը պանծացնէ իր լաւագոյն աւանդութիւններն ու իր սրտի և ժտքի բարձրագոյն առաջինութիւնները։ Կը ժաղթեժ Ձեր Աժենապատուութեան երկար կեանք, որպէսզի Ձեր լուսաւոր դէժքը դեռ տարիներով չարունակէ ժեր ազգային հոգեկան ու ժտաւոր հորիղոնին վերև իրը քաղցը ու սրտապնդիչ ու ժաջուր ջահ ժը ձառադայթել։

Աժենասիրալիր յարգան քներով Ա. 20ՊԱՆԵԱՆ

Фшрец , 17 2пци. 1929



Աժենապատիւ

8. Եգիչէ Սրրագան Արջևպիսկոպոս Գուրևան Հուրաիննամ Պատրիարը Հայոց

Gpneumy til

Սրբագան Հայր,

26p Vollawaymonene Bland Bhahmallang Suple temble un ble, lang mack p 26p metնախոնարե ծառային իր խնդակցութիւնն ու չնորեաւորութիւնը խոնարեարար դնել յուսա Ձեր դահոյից և իր սրտագին մագ թան ըները ու գգել առ Աստուած , Որ երկար ու անվորձ պահէ Ձեր թեանկագին կետնւթը և արժանի ընկ Ազգը՝ տոնելու նաև Ձեր Բարձր Սրրագ նութեան հօթանասուն եւ հինգանեակը:

Մատչելով ի համրոյր Ս. Աջոյ Ձեր Ամենապատուութեան

Կր միամ որդիական խորին պատկառանօր

17 2njm. 1929 Նիկոսիա

U.Thumpuntunps Summy լեհնե Մ. ՉԻԼԻԵԿԻՐԵՍՆ



PAPALUUR GPUMSUALS UPSP

ALTGALLING

Մեծ Ուսուցչին և Փառաչուր Յորելեարին Առաջելաչնորն Տ. Տ. Եղիչէ Ս. Արջեպիսկ ի Գուրեան Պատրիարջի Հայոց Ս. Երուսաղեմի

Երջանիկ Հայր,

Պարիկ մը ցոյց տուաւ Քեզ իմաստութեան ազբիւրը, երբ դուն, չնործայի մանուկ, չատ կանուխ ման կուդայիր, չուտրուն և տպչահար, Իւսկիւտարի բարձուն քին վրայ, լքած սգա ւոր անակդ, ուր բանաստեղծ եզբայր մը իր վերջին չունչին և օրհասականի վերջին հռնդիւնին չետ քեղ աշանդեց իր բնարը ըսելով , ա՛ռ այս , Միչրանիկ , աչա՛ իմ ժառանդութիւնս , ես անով ՍԷՐը երդեցի, դուն երգէ Ասsուած։ Եւ դուն տարիներով դրկած այդ ընտրը, սրբազան առանդ և քաղցը յիչատակ եղբայրական , որրութիւնը տաւղեցիր , իմաստութեան աղբիւրէն կչտապինդ լագեցած՝ ուրիչներու ալ պապակը անցուցիր․ օրենեալ ըլլաս։

Սիրելի ուսուցիչս, կը հիանամ բու վայելած անհուն սիրոյ և իրաւունք կուտամ հա մակիրներու հսկայ Թափօրին խանդադատան քին․ որով հետև դուն մարդեցիր բարձրադոյն աթուններու արժանաւոր սաներ, գուն ընտրեցիր այն ճանապարհը, որ մեր տոհմիկ մատենագրութեան սուրբերուն ոտքի հետքերը կը կրեն, այդ ճանապարհը դափնիներով և ծագիկներով ծածկուած կ'առաջնորդէ դէպի անմահութիւն։ Երանի՝ այն ազգին, որ կը ծնի մեծ մարդեր, այն չի մեռնիր և կ'ապրի անսահման ժամանակներ, հեզնելով աչխարհաշեր փոթեորիկը եւ վերահաս աղետներ։

Դարեր առաջ Սափա Թագուհին, Սողոմոնի իմաստութեան հռչակով խելայեղ, ծաև րագին նուէբներով լայց ելաւ մեծ Թազաւորին. Ներկայիս ալ Հայութեան ոգին իր բազմահազար գառակներով կուգայ այցելու նուիրական քաղաքին եւ կը չրջապատէ պատրիար թական գահոյթդ ու կը գուէ. ո՛վ մեծ գ , բու իմաստու Թեանդ համրաւր սԹափեցուց գիս հոգիս ալեկոծող երազներէ և դուար@ացուց դիս։ Հայրիկ ես դուրկ եմ Սափայի մբ ճոխ գանձերէն, միայն ջերմ մաղթանը մր ունիմ թեղ նուէր և կ'ադադակեմ, չատ ապրիս։

Այս պահուն Սրբոց Ցակորհանց մայրավանջին չջեղ դահլինին մեջ և այլուր ուժվ-Նապէս գոռացող լեզուներ կր բացուին դրուատալից բացադանչութիւններով Քեզ Նուիրուած . ամէնեն կարող բեմբասացներ պիտի կրճա՞ն դանել բառ և իմաստ՝ խորաչափելու իմաստութիւնդ . ես կը տարակուսիմ և կ'ըսեմ թէ անոն ը ի զու՞ր պիտի փորձեն չունչ տալ իրենց զգացումներուն , թայց դուն անոյչ քմծիծաղով մը և ազնուական ներողամառեխետմբ պիտի ընդունիս ամենուն կսօսքերը , դուն որուն դաղանիք չեն երըեք պերճախօսական ոլացրներ և խորչներ դեղեցիկ դպրուխետնց։ Այդ ամենուն հետ ուրեմն հաճէ ընդունիլ թու նախկին մէկ աչակերտիդ այս խոխովանքը իրրև մրդուղ միջատի մը բղզիւն , թեև ևս այժմ դիտուխեան աստուծոյն երկրպադու բժիչկներէ անհրաման որոնք չեն ներեր ինձ անմեղ ապաշորուխեւններս խղխին յանձնել և կր յավչտակնն դրիչը ձևուքեր, բայց ես կաղերսեմ անոնց, ո՛հ, խոյլ տուէք ինձ պահիկ մը միայն, որ ապրիմ իմ անուշ մտա ծումներուս հետ , որովհետև եխել լռեմ , աւելի պիտի դայրադնին ցաւնրս, դուցէ չարաչուք հիշանդուխիւնը իր մադիիները ցցէ ինձ դեմ , իննայնցէք ինձ , ին հռանդիս մէջ կր յասակնիմ վայրկեան մր բլլալ պատմուխենան մէջ հռչակուած այն աշհատուր բանկերն, որ մարակուած հայրենասիրութենն , մէկ չունչով 50 մզոն տեղ պացաւ անցաւ և ուր ուրենն ընդասարութեն պահ մը մահատիխ սարսափը և ներքին ձայնիս անսալով և ահա ի ծունը խոնարեած , ո՛ Հայր , փառջարի մեծուխեան պատուանդանին առջև կը կրինեմ .

Մեծ է յազքանակը, Հայր, Քեզ փառջ յաւէտ, Ջերմիկ համրոյրներ չաւզաց լուսահետ, Վեհ իմաստութիւն լոկ սիրեցիր դուն, Հայ դրականութեան մշակ եռանդուն։

> Ամենախորին մեծարանօք առ Քեղ Խոնարհ աշակերուդ ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵՍՆ

17 Zuljur. 1929 Priepfeneziez

U. Shangample

Фшриц, 18 2пци. 1929

Տ. Եղիչէ Սրը. Արջևպս. Դուրեան Պատրիարջ Ս. ԱԹուոյն Երուսաղիմայ յԵրուսաղէմ

Սրբադան Հա՛յը,

Ձեր Բարձր Սրբազնուխեան Քահանայուխեան յիսնամեայ յորելեանին առխիւ, Ս.
Ախոսիդ մեջ տեղի ունենալիք հանդիսուխեանց մասնակցելու, և անձամբ Ձեր Բարձր
Սրբազնուխիւնը, Հայ Եկեղեցականուխեան և Ուսուցչուխեան Հոյակապ Սիւնը, չնորհաւորելու երանուխենչն գրկուիլս արդարև տիսրուխեամբ կը համակէ գիս։ Կամ ք անկախ պարտադրեալ պատհառներ չորս հովերուն ցրունցին Հայկի որդիները, Թալանուած,
փիրաւոր, առօրեայ եւ անմիջական հոդերով ծանրաբեռնուած, օտար եւ անժանօխ երկինւըներու տակ ապրիլ, ու իրենց ցեղը անվխար պահել ու ապրեցնելու հարկին մէջ։

Աստանդական Հայութեհան միրիժարութիւն մըն է Ս․ Ցակոբեանց բարձուն քեն ձա_ ռազայթող լուսաւորութեան չահը, Մեծ-Վարդապետիդ ներկայութեամրը առկայծուած, անոր չունչովը հրահրուած, անոր հոգւովը վառուած։ Սիոնի ազգային դարաւոր կոթո_ դը, իրմով, և իր ձեռնասուններով կոչուած է լինելու ներկայիս Հայութենան ազգային-

կրոնական կեզրոնաձիգ ոյժը։

Իրրև մին, իր հնագոյն աշակերտներեն, որուն միտքը և հողին իր առաջին լոյսը և հուրը ընդունած է հրեսունե աշելի տարիներ առաջ անզուղական Ուսուցչիդ մտքեն րղիսող ու հուրը ընդունած է հրեսունե աշելի տարիներ առաջ անզուղական Ուսուցչիդ մտքեն րղիսող ու հոգիեն ցոլացող ձաձանչներեն, և որոնցմով տպաւորոշած ու կերաուած է իր էուժիւնը, այսօր խորին յուղումով մը կուդամ մատուցանելու հիացիկ և երախաադետ յարգանչներն Ամենապատիւ Յորելնարիդ, որտաբուղի մաղժանչներով տակաւին երկար տարիներ դինքը տեսնելու ի դլուխ Ս. Յակովբեանց մեջ իրմով ոկսած վերանորոգման դործին։
Մատչելով ի համրոյր Օծեալ Ս. Աջոյդ յարգանօք

Խոնաբե Որդիդ 3. 3. ՄԵԼԻՔՇԱՀ

18 2num. 1929, 4. Majha

Աժենապատիւ Ս. Պատրիարը Հայր,

Սինեուն ուրախութենամր կը փուխամ խոնսորեարար իմ սրտադին չնորեաւորութեիւն, ներս մատուցանել Ձեր Ամենապատութեան յիսնամեայ յորելեանին առթիւ ։

Երջանիկ կ՛զգամ ինւթզինւթս որ այս աղդային ցնժատոնին առնիւ ևս ալ բախար կ՛ունենամ մասնակցելու Ձեր թանկագին անձին համար բիւրաւոր բերաններէ բարձրայցած հռանդագին մաղթանչներուն և սրտագին յարգանչի արտայայտութեանց։ Սրդաւրև, որջան նուիրական է Հայ. Ս. Եկեղեցին, նոյնւթան նուիրական է նաև Ձեր Սրրադան Անձը, որ Հայաստանեայց Ս. Եկեղեցոյ մշանչենական փառւթը կազմող մեր մեւ ծանուն հայրերուն և հայրապետներուն արժանաւոր յաջորդը եղած էթ, և՝ ճշմարիտ «Տաճար Աստուծոյ կենդանւոյ», ուր Աստուած միայն տեղ ունի և Անսիայն կը պաշտուիչ

Որքան պատուական են հայ լեղուն և հայ մատենագրուխիւնը, նոյնքան պաշտուժի արժանի եղած էք և Դուք, որ այդ ազդային խանկազին նուիրականուխեանց կենդանի և հոյակապ գանձարանն էք, որուն վրայ իրաւամբ կր դուրդուրան հայ մտաւորականուխ խիւնը և հայ ազդը համօրէն։ Երկնաւոր մեծ վարդապետը, որ այնքան նախանձախնդիր է յաւիտենական ճշմարտուխեանց ուսուցչի պատիւը շնորհելու մէջ, և հրամայական չելտով պատուէր կուտայ «Մի՛ գոք կոչէք վարդապետ, զի մի է ուսուցիչ ձեր», չատերուն մէջէն Ձեր շնորհագարդ անձր ընտրած է արժանաւորապես կատարելու «յևուտուծոյ պատունալ» այդ սրբազան պաշտօնը, որ արդարև միչտ փառաւորունցաւ և այուտի հանդիսաւորապես կը փառաւորուի Ձեր Ամենապատուուխեան՝ մեծ ուսուցչապետիկ հռաքելաչնորհ և Վեհայուք անձովը։

Կը մաղիեմ ի Տեսունէ որ Երուսաղէմի Առաջելական Ս. Ախոռը և Պատուարժան Միաբանուխիւնը դեռ երկար տարիներ բախտը ունենան վայելելու Ձեր Բարձր Սրբագանուխեան ջաղցը և հոդեպարար հովանաւորուխիւնն, և Ազգը արժանի ըլլայ տոնելու նաև Ձեր ադամանդեայ յորելեանը։

Մատչիմ ի համբոյր Ս. Աչոյ Ձերդ Ամենապատուութեան Որդիական ամենախորին ակնածանօր Ս. Յ. ԿՈՒՐՏԻԿԵԱՆ

U.d'ենապաարւ

Եղիչէ Սրբազան Արջեպիոկոպոս Գուրեան Պատրիար,ը Հայոց.

Gracomytil

Պաշտելի Սրբազան Հայր,

Թոյլ տուէջ ինձ անխառն զգացումներու և ջերմազին մաղթեանքներու հիւսջ մ'աւելցնել այն անթեառամ գափնիին, որ կը պսակէ Ձեր Ամենապատիւ Սրբազնութեան փառապանծ ձակատը, հիւսջ մր որ միայն պիտի թեառամի կեսնջիս հետ։

Մենւք պիտի տօնենւք, մեր որտին ա՜յնւքան մօտ, համազգային մեծ տօնը, հող չէ Եէ մարդկային չար նախանձը մեզ գրկեց նախաձեռնելու դերադանցօրէն մեծ ու եզական պատիւեն, որ մեզ չնորհուած էր Ս. Ախոռոյդ միաբան Բարդէն Սրբագանէ։ Պիտի բոլորուինւք Ձեր խնկելի յիչատակ՝ այն նկարին չուրջ որ Ձերդ Ամենապատիւ Սրբագնութիւնը ինձ նուիրելու չնորհն ըրաւ, երեւակայութեան աչքերով պիտի տեսնենւք Ձեր պաչտելի Անձը չրջապատուած աւելի բախտաւորներէ։ Պիտի հայցենւք երկնից, ինչպես միչտ, պարդեւել Ձեր անդին կենաց տարիներ երկար և երջանիկ՝ ինայելու համար այն գահը գոր պանծացուցիք և արժանի ընհլու այն ազգը, որու փառջն ու պարծանջն եղաք, տուելի փառայեզօրէն տօնելու Ձեր օրհնաներ կեանչի Հարիշրաժետկը։

Մազթեան քներու միացնելով որդիական ակնածալից համրոյթներ Սրրազան Աջոյդ փուքրիկ ընտանի քիս անդամներէն ևս , մնամ Հայրական թեանկագին օրհնութեանցդ կարօտող

Ֆիլատիլֆիա , 17 Հոկտ 1929

Խոնարհ աչակերտուհին ՀՌԻՓՍԻՄԷ Գ. ԳԷՈՐԳԵՍՆ U.d li trum yamming

8. Եղիչէ Ս. Արջեպիսկոպոս Պատրիար, թ Ս. Երուսաղէմի

Խոնաբճարար կուդամ որտի անճուն բերկրութեամբ չնորճաւորել դՁեր Ամենա_ պատուութիւն Ձեր անուան տոնախմբութեան առքին և արժանապէս փառաբանել Ձեր Ամենապատուութեան դործունէութեան Ցիմնամեայ Ցոբելեանը։

Երկար և առողջաւէտ կետևը մր մաղիեկով, հնամ խորին ակնածանօք

Zunfpnepfie U. U.gnja

18 Հոկտ. 1929 "Մշակիշտար,

ZUUBBUG FZBB. FFUFPBBUE



U.d'Elimquinfie

8. Եզիչէ Արջ. Գուրեան Պատրիարջ Երուսաղէմի ԱԹոռին Երուսաղէմ

Բանաստեղծին՝ ինչպէս Շնորհալի, Հովիշին՝ ինչպէս Աչտարակեցի, Մատենագիրին՝ ինչպէս Խորենացի,— Հայ Դպրուխեան Տահարին չահ՝ ժամանակակից մեծ միտջին Յոբելեանին տոնումով՝ Ամենապատուուխեանդ անձին համար կատարուած ազգային պանծացման ցոյցին իր ինսդակցական խոնարհ այլ խանդավառ ձայնը և ծափողջոյնը կը միացնէ, որդիական յարդանջով,

Կարտան, 18 Հոկտ. 1929



U.Stammyworfic

8. Եղիչէ Սրբ. Արջ-Եպիսկոպոս Դուրեան Առաջնլաչնորհ Պատրիարջ Ս. Երուսաղէմի

Ամենապատիւ Սրբազան Հայր,

Ներկայիս երը ամբողջ ազգը Ձեր Բարձր Սրբազնութեան Քահանայական Ցիսնամեայ Ցորելեանը կը տոնէ խանդավառութեամբ, նուտստ ծառաներս չենք կրնար դաւաորն խորը մխըձուիլ անտարբեր դիտողի երևոյթով. մենք ալ մեր պաշտանքին ու հիացումին տուրքը կ'ուզենք վճարել Ամենարարձը Ցորելեարիդ։ Ուստի միևնոյն խանդավառութեամբ կուզանք և մենք ներկայ տողելով մեր խոնարհ մասնակցութիւնը բերել Ձեր Ցորելինական համաղդային տոնին, և կը խնդրենք ընդունիլ մեր սրտադին չնորհաւորութիւնները ու խնդակցութիւնները։

18 Հոկտ․ 1929 Ազգային Առաջն․ Կեսարիա Մատչելով ի Համբոյը Ձեր Ս. Աչոյն Մնամ ք ամենախորին մեծարանօք ՍՄԲԱՏ ՎՐԴ . ՍԱԼԵԱՆ - ՍԵՐՈՎԲԷ ՔՀԵՅ . ՊՈՒՐՄԱԵԱՆ Տնօրին Ազգ . Որբ . Կեսարիոյ - Առջն . Փոխ . Կեսարիոյ եւ շրջ .



Zmitaj, 18 Lulimbelphip 1929

Spp. F. Uhlinih

Ամենապատիւ Տ. Տ. Եղիչէ Արբեպիսկոպոս Գուրեան Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Buneumy &d

U. Shamyumpe U . Zujp,

Ձեր Քահանայութենան Յիոնամեայ Յորելհանին առթիւ հանեցէջ, կը ինդրեմ, իրրև դոյգն նուեր մ ընդունիլ «Մարաչի երեր ամիսները» անուն երկս, որ կը խօսի Մարաչի ֆռանսական գրաւման միջոցին տեղի ունեցող ղէպքերու վրայ. իրրև ականատես ա_ նոնց ճշմարտութեան կը վկայեմ։

Այս գործը գրուած է բուն իսկ գէպքի ատեն և կը պարունակէ կէտեր, որոնք կրթ Նան հետա,թրջրել ապագայ պատմարանն և Քէմալական կառավարութեան սկզբնական ծագման ու ֆուտնսական կիլիկետն քազաքականութեան ինչ ինչ մասերը լուսաբանել։

Կը խնդրեմ որ, հոյակապ դործերու կողջին «Գուրեան Մատենադարանի» համեստ մէկ խորչին մէջ դետեղուելու պատիւին արժանի դատուի ան։

Որուն համար իր չնորհակալութիւններն ու այս առթիւ իր խոնարհ ու ջերժ բարև_ մաղթութիւնները կը յայտնէ և երկար տարիներ կը մաղթե հայ եկեղեցւոյ մի դաւակը։ SEP. F. Uthtul

U.n. U.մենապատիւ Պատրիար, p Zuing bineumq til

8. Եղիչէ Սրբագան Արջեպիսկոպոս

Udbummunhe Stp.

Ուղեցի, որ տեսողութեանս դժուարութեանը յաղթելով այս տողերը ինչըս անձամբ

aptid:

Այսօր երբ Հայ ժողովուրդը ազնիւ ու ինչընաբուղի մղումով տօնում է Ձերդ Բարձր Սրբազնութեան յողնական, հայրենալունչ ու լուսացօղ գործունէութեան փառապանձ յիսնաժետկը, թեոյլ տուէք ինձ ևս, ո՞վ Հայրդ Հասարակաց, իմ որդիական խոնարհ չնոր-Տաշորան ըները բերել Ձեզ երախտագիտութեան խորին զգացումով։

Քաղցը է ինձ ի միտ ածել, որ Ձեր անբիծ, առաջինի կեանջն ու գործը սջանչելի պատկերն է մեր մեծ նախահարց խողած նշիրական աշանդութեանց, որոնց զդաստ ու

արթեուն պահապանն եղաք ահա ամրողջ կես դար։

Ու մեր Հայրենի բի այս ամէնէն չարարաստիկ ու դժխեմ՝ օրերին, երբ աշխարհը այնպես անգութ եղաւ, երբ ազգերի խիղճը միագնեց և իրաւուն,թի, ազատութեան խաչակիր մեր ազնիշ ցեղը վչտարեկ ու նկուն , արիւն - արցուն ը լացեց մեր անագորոյն *թել*նամեաց խժդուժ վայրագութեանց երեսից, այո՛, այս իսկ նենդ ու տմարդի օրերին դուք արդարութեան, իմաստութեան ու լոյսի սէրը տարփողեցիք Հայոց աշխարհում որպէս յաւիտենական իտէալը տառապող յուսացող ու պայքարող Հայ ադգին։

Սահակ և Մեսրոպի վառած կանթեղի դուր անխոնջ ու հաւատարին Լուսարար, Ձեր առաջինի ու պայծառ կեանքի այս վսեմ օրինակով անձեռագործ լաւազոյն յու-

շարձանը կանդնեցիք Ձեր սիրած ժողովրդի սրտում։

Du'ng 2by te belywe opher:

Ձերդ Ամենապատիշ Սրբազնութեան խոնարհ որդի U. U.ZU.PATEBUE

19 Lutintedptop 1929

Պարիզ

B . Գ .— Թողութիւն եմ հայցում այս անպաձոյձ ու տկար գրութեանո համար . որևէ գրական աշխատանք տակաշին ինձ արգիլուած է․ տեսողութիւնս չատ է թեուլացած ։ Unju

Upnt

Phylin, 20 Zulin. 1929

Գերապատիշ Եղիչէ Արջեպիսկոպոս Դուրեան Պատրիարը Հայոց Երուսաղէմի.

Սրբացան Հայր

Ձեր գրական, մանկավարժական և հոդեւորական գործունէութեան յոբելհանի առ_ թիւ Թոյլ տուէջ ինձ ևս մատուցելու Ձեզ իմ որտազին շնորհաւորութիւնները և անկեղծ բարեմադթութիւնները։ Ցանկամ Ձեզ քաջառողջ, երկար տարիներ, այսուհետև ևս Ձեր ջերմ խօսքով, դրաւոր եւ բանաւոր, ցօղելու հայրենի գրականութեան եւ բովանդակ մշակոյթի անդաստանը։

Մնամ խորին յարդան քներով , Ս. ԱԲԵՂԵՍՆ Ուսուցիչ Բեոլինի առեւելեան լեզուների դպոսցի ,

Աղև բսանդրիա, 21 Հոկտ., 1929

Գուրեան Յորելեանի Պատ. Յանձնաժողովին

Սոյն հանդիսութեան առթիւ՝ դերազանցապես ճչմարիտ կը դառնայ այն խօսւքը թե՝ մէկը կայ որ հազար կ'արժե . և այս մանաշանդ մեր մէջ և այնպիսի ժամանակ մը , երբ

գրիրոմրբեսու գանաց առևան, ունիքորես քրը մաև քրնրբեսու։

Այնւքան միամիտ չեմ որ Իկարեան Թոիչքով մը փորձեմ մեծ Յոբելեարի գովքը հիւսելու, երբ անոր մէկ արժանաւոր աշակերտը՝ Գեր. Տ. Թորդոմ Արք. Գուչակետն՝ իր ոսկի գրչովը՝ ամենակարկառուն եղանակաւ ի հանդես կը բերէ՝ իր անզուդական ուսուցչին լուսաչող կետնւքն ու դործը «Արեւ» ԹերԹին մէջ, պատկերացնելով ու պրիսամակելով ժամանակակից հայուԹեան ազդային, կրխական կրօնական, բարոյական, քարոցական և հոդեկան մշակոյժն ընդհանրապես։

Մանուկ էի` երբ կը լսէինք և անյագ եռանդով կը կարդայինք այնքան հրայրքոտ բանաստեղծութիրւնները տնմանն Պետրոս Դուրեանի որ, աւա՜ղ, լուսաճաճանչ ասուպի մր կետնքով փայլեցաւ մեր գրական երկնակամարին վրայ և այնքան չուտ անենտացաւ,

անչէջ հուր մը վառելով սակայն հայ գրականութեան բուրվառին մէջ։

Այս անգամ, բարերախտաբար հոյատեսիլ հոկայ մը՝ դաստիարակի, ոքեմաւորի, բանասերի պատմաբանի, բանաստեղծի, մատենագրողի, հռետորի ևայլն արժանիքներով՝ եկաւ դրաւելու կամ լեցնելու իր վաղամեռիկ հարադատի լքած տեղը՝ մեր մշակութային կետնքին մէջ։

Եւ այսօր ուրախութեամբ կը տեմեննը որ Երուսազեմի Հայոց Պատրիարքութեան այնքան արժանընտիր գահակալի քահանայութեան, այլ խօռքով՝ հանրային անդասիր գործունէութեան հոյակապ Յիսնամեակը տօնելու կը պատրաստուի մեր ազգը, հերքելով

ամանց այն թիւր կարծիջը թե՝ մենւք թաղել միայն գիտենւը։

Մեր ներկայ ձգնաժամային օրերու մէջ տօնեցին արդէն քանի մը Յոբելեաններ, և դեռ կը պատրաստուին ը տօնելու Մ. Նուպարեանի, Ա. Ահարոնեանի և այլոց Յոբելեանները։ Մեր պաչտօնական շրջանակները, մտաւորականները ու մեծաստւնները կարո՞ղ էին ուրենն անտեսել բաղմատաղանդ Եղիչէ Գուբեանը, որու ձակտին վրայ Աստուած իր մատը դրած է՝ դայն ստեղծելու ըսպէին։

Թող Աստուած տակաւին չատ երկարցնէ այս մեծ հայուն կեանքը, մինչև որ նուիրականացած տեսնէ՝ Երուսաղէմի մէջ Նոր Արմաչ մը կանգնելու իր գեղեցիկ երազն ու

Նպատակը։ Հ. ԵՐԱՄԵԱՆ

2mjty 21 2nhm. 1929

U. d'ենապատիւ S. S. balet Upp. Upply . Inchain Առաջելաչնորհ Պատրիար,ը Հայոց ibpacama to

U. J. L. . Upp . 2mjp .

Իրրեւ խոնարճ որդի կուգաժ չնորճաւորել Ձերդ Սրրագան Հայրութեան Քահանա յու թեան լիմնանեայ յորելեանը, և կը մաղ թեմ չատ տարիներ յաջողու թեամբ վարելու

նուիրական պաշտոնո յողուտ և ի շինունքիւն Աղգիս Հայոց։

Այս առքին կազմունլիք Գուրնան մատենագարանի մէջ, այրի կնոջ լումայի նման, իմ ալ համեստ բաժինս ուզեցի ունենալ, նուիրելով հոն Եղիպտոսի «Յուսարեր» թերթի արդի չրջանի Ա. տարի 1. Թիւկն սկսեալ, (1915 - 19) ամրողջ չորսուկես տարուան հա ւա քածոյն, որոնք մեծ պատերազմի ատեն հրատարակուած են, և չատ տեղեր ինչպես նաև Երուսաղէմը ժամանակին զուրկ էր ատոնցմէ։

Թերթերը հրահանգուած տեղ յանձնունլու պատրաստ են։

Ludgarphing Oshwi U. mgg, What dynaghay apop 2hp, LUPTUL FULL LUPTEPEULUL



SIRAGAN ORCHANIAN Armenian School MOSUL-IRAQ

22 Lulya. 929 Unenne

U.d'litumymmhe

S. S. Եղիչէ Սրբադան Դուրեան Բարեխնամ Պատրիար ը Սրբոյն Երուսագեմայ

Gpncumq 5d

Սրրագան Հայր,

Ձեր Սրբագնութեան ջահանայական Ցիսնամեայ Ցորելեանի առթիւ հարիւրաւոր եւ Թերեւս հազարաւոր չնորհաւորութիւններու երախտադիտական գրութիւններու չարջին՝ հիացողի եւ պաշտողի մր երկտողն ալ կուգայ իր 200-ի մօտ երկսես աշակերաներով միասին՝ մատուցանել իր որդիական անկեղծ եւ չերմ՝ զգացումները՝ այս բարեպատեհ առնին օրը։ Թերևւս նկատի իսկ չառնուի անիկա՝ որպէս անապատի մր հեռաւոր խարթերեն համար չնչին և աննչան թղթիկ մը, սակայն իրրեւ հոգեւոր թուն մը (աչակերտ Նարոյեան Սրբազանի) պարտականութեան ներջին ձայն մր կր մզէ գիս՝ մատչիլ ի համբոյր Ս. Աջոյդ հայրականի եւ մաղիել բաղում երջանիկ և բարերաստիկ տարիներ՝ յաթու Առաջելական Սրբոյն Երուսագեմայ։

Սրբազա՛ն Հայր, փափաջելի է ինձ ստանալ ընդփոյխ 8-10 հատոր այս տոխիս երատարակունլիք զիրքէն, որոնց փոխարժերը կ'ստանաք ինձմե անմիջապես։ Կրկին

աջ համբոյրով եւ երախտես ը

ՍԻՐԱԿԱՆ ՕՐՋԱՆԵԱՆ Shorkh U.qq . try . Ardlip . Ununup



ቃዚጊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՀԱՅՈՑ ՄՈՒՍՈՒԼԻ Uneuncl, 22 Lutin. 1929

P/L - 104

U. d'h Tumayamin fre

Տ. Տ. Եղիչէ Ար.թ.-Եպիսկոպոս Գուրևան Բարեխնամ Պատրիար, Երուսաղէմայ Հայոց Երուսաղէմ

Սրբազա'ն Հայր.

Հայ պատմունեան փալփլուն էջերուն վրայ գեղեցիկ և պատմական դրուագ մըն ալ կը յաւելու այսօր՝ կատարելով որտադինո Յիմնամեայ բարեբաստիկ Յոբելեանդ Քահա_ նայունեան։ Արարատեան հայրենի աշխարհի բարձր ոստանէն մինչև հասարակ հայ հիւ_ ղակի մը խորչը կը բարեբանուի որբուներնգ հայրապետական՝ որպէս անդասիր և պաչ_ տելի եկեղեցական, դրական մեծ հանձար և որպէս ճշմարիտ պաչտոնեայ Աւետարանի։

Սրբազան Հայր, մեն ը՝ իրրև հեռաշոր անկիւնի մր խազաղասեր դաղութը թեև բախտը չեն ը ունեցած ճանաչելու անձամր ղՁեր Սրբազնութիւնն, այլ սակայն կարպախտը չեն ը ունեցած ճանաչելու անձամր ղՁեր Սրբազնութիւնն, այլ սակայն կարպալով ամենուրե ը Ձեր բազմօգուտ և անօրինակ գրուած ըն, կ՛ունենան ը մեծ հիացում, ծնկաչօ ը պաշտում և խոնարհ պատկառում Ձեր անսեթեև ե և հմայիչ պատկերին առջև։ Սոյն բարեպատեհ և խորհրդաշոր տօնին առթիւ թաղականութիւնս իր ամբողջական կազմով և հանդերձ Մուսուլի համակ Հայ ժողովրդեամբ պարտը ունի մատուցանել իր անկերծ և սրտագին չնորհաշորութիւնները և մաղթել բազում երջանիկ և բարեբաստիկ տարիներ Ձեր Սրբազնութեան։

Մատչելով ի համբոյր Ս. Աջոյդ Հայրականի, կը մնան բ որդիական յարդան ըներով Ի դիմաց Թազական Խորհուրդի Հայոց Մուսուլի

Ատենագպիր Գ. ՃԻՆՎԻՁԵԱՆ Ստենապետ ՏՕԳԹ . ԱՂԹԱՐՃԵԱՆ

Նախագահ Գ. Բ. Տ. ՑԱԿՈԲԵԱՆ

ZU3 ՈՐԲՈՑ ԵՒ ԳԱՂՔԱԿԱՆԱՑ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆ Ս․ Եւ-ուդութիւն Եկեղեցի Բեւա, Կ․ Պոլիս 4. Պոլիս, Բերա, 22 Հոկտ. 1929 Թիւ 1311

U. Shawayampe

Տեր Տեր Եղիչէ Ս. Արջ. Եպիսկոպոս Դուրեան Աղգընտիր Պատրիարջ Ս. Վանուց Երուսաղէմի և Արժանաւոր Դահակալ Առաջելական Ախուսյն Ս. Տեղեաց Երուսաղէմ —Պաղեստին

Ամսոյս 26ին քրիստոսաւանդ Ս. Տեղեաց մէջ արժանաւորապես և մեծվայելուջ կերպով տեղի կ՝ունենայ նորին Ամենապատուուխեանդ քահանայագործուխեան լիսնամետց Ցորելեանը։ Այդ առիքիւ տիեղերքի չորս ծադերուն տարտղնուած վտարանդի հայուխիւնը իրրև միաձոյլ դանդուած միակ յուղումով մը կը փոխորկի յուղում, որ ժողովուրդները կ՝ապրին հաղուադէպօրէն երբ կը բախտաւորուին փառաբանելու աստուածատուր հանձարը, իրենց մեծագոյն և արժանաւոր դաւակներուն մէջ մարմնաւորուած։ Ամէն հայ, որու սրտին մէջ որ Աշետարանի ճչմարիտ հաւտաքեն չիխ մը կախած է, ու ամեն անկիւն, ուր Սահակ-Մեսրոպեան որբազան դործէն ճաճանչ մը սպրդած, այս երանելի պահուն, դմայլելի սրտի մը անդիմադրելի հմայքը, անպարագրելի հոգիի մը

անտանման վենութինը և ամենիմաստ մայի մր աննուն սասառնումը կ'ապրի։ Ու այդ ամէնուն գեզակերտ համադրութիւնը կազմող Նորին Սրբութեանդ անձր այս վայրկեա նիս կր տիրապետէ մեր ամէնուս որտերուն, հոգիներուն, այնքան հարադատօրէն խոր

հրդանչելով աստուածային բոլոր կատարելութիւնները։

Այն մեծ վայելուչ հանդիսու թիւնները, որոնք կը կատարուին այս նպատակաւ, կր պանծացնեն Նորին Սրբութենանդ անձին մէջ, Մեծ Եկեղեցականը, Աւետարանի ձչմարիա Հովիշը, ներհուն բանասէրը, անվոռնչ դիտունը, անհաշատարելի տրիբունը, աստուածա_ չունչ բանաստեղծը, կատարեալ իմաստասէրը և մեծ վարժապետը։ Թոյլ թեող տրուի, Ամենապատիւ Սրբազան Հայր, ժեզի անարժանաշորապէս մոտենալու երկիւզածորեն դահույքիդ, որուն վրայ այնւրան վեհապանծօրէն կը բարձրանալ ամէն կատարելութիւն. Thepod odmnewd Action is Umrap, to angenetitive Swinefelint dudwhatalphy dbdagage գառակներէն մէկը, և այս պատենութեամբ մատուցանելու սրտագին չնորհաւորութիւն, ներու հետ որդիական անկեղծ զգացումներու խանգակախ հաւաստի,ըները։

Նորին Ամենապատուութեանդ թանկացին կենացը համար անոահման արևչատութեան

բարեմաղ խու թիւններով կր մեան ը

Uming bend for Surdensp U. d'hammammene Hamby U. Bonto Որդիական ամենախորին յարդանօր և ակնածանօր Ի դիմաց Կ. Պոլսոյ Հայ Որբոց ու Գագխականաց ինամատարութ . Վարչական Ժողովոյ 4 mildanylin Umbungapp U.mli hunghin THAPUL ULUBUBUU SORP. ULLEANS Uhrsha bhobbabut Անգամբ՝ ՎԱՀԱՆ ԽԻՒՏԱՎԷՐՏԵԱՆ, ԼԵԻՈՆ ՍՈՒՐԷՆԵԱՆ, ՄԵԼԻՔ Բ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

> 1929 Zaljakasplep 22 Trusport,

Valatimymmhe Stp 8. Եգիչէ Սրբագան Արջեպիսկոպոս Գուրեան Արժանընտիր Պատրիար Հայոց Երուսադեմի 45 . 45 . 45

Երուսադեմ

Ամենապատիւ Սրրագան Հայր,

Գուրեան անունը հղած է մէկը այն չա՛տ սիրելի անուններէն՝ որոնը մի՛չտ ալ խոված են գիս աժենուն ձևա․ դժուար է ըսևլ՝ թեէ զայն ներկայացնողներէն, ո՞րն է դերազանցը՝ ին ընտախալ տազանդի եւ պաշտում հարկադրող իմացական ու բարոյական շնորհներու մէջ. անոնը կը չփոխոշին իրարոշ հետ իրենց բարձրութեամբ։

Իմ սիրելի ծննդավայրս, Պարտիզակ, դերազանց բախտը ունեցաւ երկար ատեն բլլալու գրեթե առաջին դալար Անոնցմէ Մէկուն, Ձեր պալտելի Սրրագնութեան կրձնական ու կրթական սխրալի՞ դործունեութեան․ չա՛տ փոքր էի դժրախտարար չքնադ հայրենի. րիս այդ Ոսկեդարուն, եւ հացի՛ւ կր յիչեմ իրը Տեսուչ Ձեր այցելութիւնն ու անցջը վարժարանի ընդարձակ որանկն, ծաղկոցկն, ուր՝ դեռ անտիական մանուկ, կը ծուա_ րէինւթ չարջ չարը. չունեցայ բախտը Ձեր առջին ծնրադրելու, բայց արգէն Ձեր ողին կը սաշառներ կրթական այդ ոիրելի հաստատութեան մեջ, որուն մթնոլորտը մի՛չտ դաժուկ ու խառացած մնաց Ձեր չունչովը՝ Ձեր մեկնելէն վերջն իսկ ընդերկար։ Ի՞նչ խոըստնկ տպատորութիւն, ի՞նչ անեղծ դրում, ի՞նչ քաղցը ու սիրելի յիչատակ գոր թեողած էիք առջասարակ աժենուն ժուքին մէջ, ու փուբրերս մեծերէն սովրեցանք սիրել Ձեր Անունը եւ ունենալ գայն միշտ մեր չրβներուն վրայ. դեռ կը յիչեմ սիրագեզ խանդամատարւեր ամը ատևօնիրար մմանուղն, սնով ժանաիմտինիր նուն իուստն միշմիր հաևձուն քին վրայ այն տունը, որ բախտը ունեցեր էր ըլլալու իր «Հայր Սուրբ» ին վեհավայր բնակարանը եւ գիւզին դալարագեղ զերեզմաննոցին մէջ, հինաւուրց կազնիներու

չոււ**ջին տակ**, տեսակ մը ուխտավայր դարձած էր այն պարզուկ այլ վսեմ չիրիմը՝ որո<mark>ւն</mark> վրայ <mark>կր կարդ</mark>ային,ը, բարի եւ առաջինի ծերունիի մը անունէն վերջ՝ «Հայր Պետրոսի Դուր<mark>եան»</mark>, «Երանի՜ որոց ի Տէր ննջեցին»....։

Կանդնին տարիները, որոնց միջոցին մե՛ծ պատիւն ու փառքը չե՛ն դադրիր բնաւ քայլ տու քայլ հետեւելէ Ձեր պատկառելի Սիրեցեալ Սրրազնութեան՝ Արմաչէն Ձմիւռ- չիա, Ձմիւռնիայէն Պոլիս, Պոլիսէն Երուսաղէմ, ուր կը բազմիք արժանաւորապէս Առաբելական Աթոռին վրայ Ս. Ցակոբեան Մենաստանին՝ ուր վերադարձուցիք Շղթայակիրի և իր նմաններուն փառաւոր օրերը, դրական ու կրթական այնպիսի՝ պանծալի վերածնու- թիւնով մը, որ կրինապես սիրելի դարձուց դարաւոր Մայրավանքը հանուր Հայութեան։

Բովանդակ Հայութիւնը անձկութեամբ կ'ըսպասեր ապտ քե՛ն որ Սիոնի բարձուն քե՛ն հեչե՛ր Յորելի փողը՝ անցնող կես դարը յայտարարելու համար, կես դարը այն քայրելը, այն քայրելի փողը՝ անցնող կես դարը յայտարարելու համար, կես դարը այն քա՛ն էրը քեղ, այն քա՛ն չնուհան հրարձայի, այն քա՛ն բատ անուչ և և կ'արձադան գե ամենուս սիրտերուն խորութեանց մեջ, առթեկով նոյն այն խնդութերնը՝ որով երբեմն Իսրայելի մեջ կը համակուեյն ազատագրութեան սպասող դերիներ, անիրաւուածներ եւ անարդարութեան զոհուողներ։

Այժմ, Ցորելեար Սրբագան Հայր, լիսուն տարիներու անդադար վերելքէ մը վերջ՝ հասած այս Պառնասեան բարձունքին վրայ՝ գիտեցէք արդար հրճուանքով ակնապարար համայնապատկերը՝ գոր կազմեցին ու կր կազմեն Ձեր չունչովը՝ Քրիստոնէական կեանւ քով ուռճացած եկեղեցիներ, Ձեզմով և Ձեր բազմերամ աչակերտներով կենսաւորուած վարժարաններ, Հայ պատմութեան, Լեզուի ևւ Դպրութեան գրեթե խոպան դաչտերուն մէջ լա՜յն ու խո՛ր բացուած ակօսներ, Ձեր Հովուական Սրինդէն արձակուած այնւքան անուչ մեղեղիներով ։

Իսկ մենւը, Ձեր դաշակները, մինչ կը նային ը դիտելու Ձեր լուսաճաճանչ դէմ քը, մեր բոլոր սիրտերովը կ'աղօթենւը ու կը մաղթենւը որ Երկին ը չնորհե՛ն Ձեղ դեռ երկա՛ր տարիներ եւ ոսկին փոխուի մի օր ադամանդով ...:

Որդիական ակնածանքով ու կարօտադին համրոյըներով Ձեր պատկառելի Սրբազնու թեան Ս. Աջոյն,

2.0.20.00 ՆԱՀԱՊԵՏԵԱՆ (Պարտիզակցի)



ՄԻԱՅԵԱԼ ՀՈԴԱԲԱՐՉՈՒԹԻՒՆ Մ. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ Մ. ՄԻՆԱՍ ՄԱՏՐԱՆ ԵՒ ԱԶԳ. ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ Ի Դ.Ա.ՀԻՐԵ

4 mshpt 22 Inhahafaba 1929

U. d'h hummymmpe

Տ. Տ. Եղիչէ Ս. Արջևպիսկոպոս Դուրեան Արժանընտիր Պատրիարջ Առաջելական Ս. ԱԹսռին Երուսաղէժ

Գահիրէ Ս. Եկեղեցեաց եւ Գերեղմանատան Միացեալ Հողաբարձութիւնս, որ Հայ Եկեղեցւոյ պայծառութեան գործին համար իր դուղնաքեայ ծառայութիւնները ի սպաս դրած է, ներկայիւս պարտականութիւն կը համարէ, Ձեր քահանայական յիսնամեակին առթիւ պատճութենչն օգտուելով, Ձեր Ամենապատուութեան ներկայացնել իր մաղ- խանքները և իղձերը, ղՁեղ յամս երկարս տեսնելու ի դլուխ Առաքելական Ս. Ախոռիդ, ի փառս և ի պարծանս մեր Ս. Եկեղեցիին, որուն Դուք ծառայած էք յիսուն տարի անընդհատ, ոչ միայն անոր բեմը ճոխացնելով եւ ողեւորելով, այլ և անոր պաշտօնէու- թիւնը զօրացնելով, կրխուած եւ պատրաստուած եկեղեցականներով։

Միացեալ Հոգաբարծուխեան Ատենադպիր Ստենապետ Ն. ՊԱԼԱԵԱՆ Ա. Ս. ՍԱՆՏԱԼԵԱՆ



ձիւնի - Լիրանան, 23 Հոկա. 929

Ամենապատիւ

8. 8. Եղիչէ Սրրագան Արջ - Եպսկպս . Դուրեան Բարեխնամ և Բարեչնոր՝ Պատրիարջ Հայոց

PU. bpncumqtil

Ծնորհագարդ Սրբաղան Հայր.

Ձեր Սրրազնութեան Քահանայութեան 50 ամեայ Յորելեանը պիտի աշնուի քանի մր օրէն արժանաւոր եւ փառաւոր հանդէսով։ Այս առթիւ, թեպէտև խնդութեամբ լկցուած եւ հրճուած է հողիս, ու յոյժ ցանկալի էր ինձ, իրը յետինն եւ տրուպն Ձեր Ամենա, պատուութեան բազմաթիւ ու տաղանդաւոր աշակերտներէն, անձամբ դալ և մատուցա, նել իմ չնորհաւորութիւնն եւ խնդութիւնը, բայց նկատելով որ ո՛չ արծախ ունիմ եւ ու ոսկի, ու պնակէ և մատանի, և ու իսկ վայելուչ հասակ ու փայլուն զգեստ հարսա, նեկան, ինչպէս եւ տաղանդ ու արժանիք գրական, բեմական, եւ վախնալով որ մի դուցէ իմ ներկայութիւնս չուք և ստուեր մը բերէ Յորելինական հանդէսին՝ փոխանակ փայլի, ստիպուած եմ հեռուէն, հողւով և ներկայ երկտողով չնորհաւորել Ձեր Սրրաղ, նութիւնը, և մատուցանել իմ որդիական անկեղծ և խորին խնդակցութիւնն ու չնորհա, ւորութիւնը։

Կը մաղթեմ չնորճաղարդ Սրբազան Յորելեարիդ երկար և երջանիկ կեան,ը, դրական և դրական րազմարդիւն դործունէութիւն ի փառո և ի բարեկարդութիւն Սաղիմական Աթոռին, և միևնոյն ատեն Հայ. Ս. Եկեղեցւոյս, ի պատիւ և ի պարծանս Հայ Եկեղեցականութեան և Հայ Մատենադրութեան։

Յաջողութիիւն և ճոխութիւն մաղթելով նաև Դուրեան Մատենադարանին և Մատե_ նաչարքին, կը մատչիմ ի համբոյր Շնորհազարդ Ս․ Պատրիարք Հօրդ Ս․ Աջոյն,

> Մնալով W. Ծ. ՓԱՌԷՆ Ծ. ՎՐԴ.



Աժենապատիւ

8. Եղիչէ Արջևպ. Դուրեան Պատրիարջ Երուսագէմայ

Սրբազան Հա՛յը.

Իրրև երեսուն և ութժամեայ ուսուցիչ — որ բախտը ունեցած է Ձեր Սրրազնութեան հետ պատերազմէն առաջ պաշտօնավարելու Պոլսոյ Կեդրոնական Վարժարանի մէջ — և եռամեայ հոգևորական՝ ծանօթե երկու ասպարէզներու տատասկոտ ուղիին, խորին ակնածանջով և հիացումով կուգամ չնորհաւորել Ձեր Սրրազնութեան յիսնամեայ հոգևորական – ոշսուցչական – գրական դործունէութեան յորելեանը, մաղթելով Ամենակարո₋ դէն <mark>աւելի երկա</mark>ր կեանը և գործունէութիւն յողուտ և յուրախութիւն տառապետլ Հայ Եկեղեցող զաշակներուն։

Որդիական անկեղծ նուիրումով — կարօտ Ձեր Սրբազնութեան հայրական օրհնութեան և խրտաներուն — մատչիմ ի համրոյր Ս. Աջիդ ւ

23 Lulyar. 1929, Physica

ԳՐԻԳՈՐ ՎՐԳ. ՇԱՀԼԱՄԵԱՆ Հողևոր Հովիւ Հայոց Գերմանիոյ

30%0%

Dervish Pasha St. Nº 12

6/4mu/m 23 Zalum. 1929

Սուաքելապատիւ

Տ. Եղիչէ Արջեպիսկոպոս Դուրեան Շնորճազարդ Պատր. Առաջ. ԱԹոռոյ Ս. Յակորայ Երուսաղէմ

Առաջելաչնորհ Սրբագան Հայր,

Ներկայիւս նուիրական պարտք կ'ղզաժ իրրեւ ժի հաժեստ ժչակը Ս. Եկեղեցւոյ, Ձեր անդուգական Ցորելեանի աշնախմբուժեան առժիւ փուժացնել Ձեր Աժենապատուտենան որդիական որտաբուդի խնդակցուժիւններս եւ խնդրել Ձեր Բարձր ներողատնտուժիւնը՝ որ այս բարեպատեհ առիժով Ձեր պատուական Գերապատուուժեան հանդակ ունեցած ժէկէ աւելի հիացուժներս անվերապահշրէն յայտնեժ ժէ՝ որպէս անձնդիր քաջարի հովիւ իրաւունք էր և վայելուչ՝ վայելել ամբողջ հայուժեան սրտադին երախտակիտուժիւնն ու գնահատանքը, ըստ որուժ Ձեր Սրբազնուժեան համակ կեանքը դարձած է խոսուն պատկեր մը սիրունիկ, յորուժ միաձայն կը ճառագայժէ համաստեղուտ ժիւն մը, իմաստասէրի, քերժողի, պերձախոսուժեան, հմուտ դրագէտի եւ աւելին ու դերադանցելին Ձեր մաքրակենցաղ սիրուած եկեղեցականի անրասիր կեանքը, նղական ու տիպար բրարիոնն ու պսակը բոլոր բարեժամնուժեանց, որ իր առինքնող ու ներչնչող քաղցրուժամրը լուսաւէտ կեդրոն մը դարձած է հասարակաց խորհուրդը դեղեցկացնող է

Մաղթենը որ Բարձրեալն Աստուած երկար տարիներ երջանկութեամբ պահէ Ձեր Սրրագնութիւնը Ս․ Ցակորայ աթեռոին վրայ, որ չնորհիւ Ձեր Ամենապատուութեան Սիոն առաւել եւս պայծառանայ եւ լուսաւորուի ի պատիւ և ի փառո Հայց․ Եկեղեցւոյ, և ի չինութիւն մտաց ու խորհրգոց։ Համրուրիւ Ս․ Աջիդ Ս․ Վեհիդ, Ձեր պատուական Հայ-

րական օրճնութեանց կարօտ աժենախոնարե որդի Ձեր

ՑԱՐՈՒԹԻՒՆ Ա. ՔՀՆՑ. ԹՈՒՄԱՑԵԱՆ

ው ԱՂԱԿԱՆ ከብቦ ՀብՒቦች Ս - ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂ - ZUSN8 ԱՆԳՐ - ՆԱՀՐ ԹԻՒ 19 ՊԵՅՐՈՒԹ

Atipach, 23 Labatalphe 1929

Պատուական

Դուրեան Յորելեանի Կեդրոնական Յանձնաժողովոյ

P bpncumntd

Ն. Ամենապատուութեան Տ. Տ. Եզիչէ Ս. Պատրիարք Հօր Յիսնամեայ Յորելեանի առթիւ, Թաղական խորհուրդս կուզայ իր ամենաջերմ բարեմաղթութիւնները յղել Կեդը․ Ցանձնաժողովոյդ միջոցաւ մեր սիրելի ու գիտուն Ս. Պատրիարք Հօր, մաղթելով միան գամայն երջանիկ ու բարերաստիկ տարիներ։

Համրուրելով Իր Ս. Աջը, կը մնամ ը միչա խոնարհ ծառաները.

ի Գիմաց Անդր - Նահրի Թաղ . Խորհուրդի

Ատենադպիր Ատենապետ ՆԻԿՈՂՈՍ ԲԵՀԼԻՎԱՆԵԱՆ Թ. ՆՈՐՇԱՀԵԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐԶՈՒԹԻՒՆ «ՍԱՀԱԿ — ՄԵՍՐՈՎ»Ի Պէյրութ, 23 Հոկտեմբեր 1929

Պատուական Գուրեան Յորելեանի Կեգրոնական <mark>Յանձնաժողով</mark>ոյ Ի Երուսադէմ

Ն. Աժենապատուութեան Տ. Տ. Եղիչէ Ս. Պատրիարը Գուրեանի Յիսնաժեայ Յոբելեանին առթիւ, խմբագրութիւնս՝ կը փութայ իր աժենաջերժագին բարեժաղթութիւնւները յղել Կեդրոնական Յանձնաժողովոյդ միջոցաւ ժեր սիրելի ու բաղմագէտ ծերունագարդ Ս. Պատրիարջին, միանգաժայն, ժաղթելով օրհնաբեր և բարեբաստիկ տարիներ իրեն։

Համբուրելով Ս. Աջը կը մնամ ը միչտ իր խոնարհ ու հաւատարիմ ծառան. ՄԻՀՐ․ Ս. ՆԱՃԱՐԵՍՆ

ՁԷՑԹՈՒՆԻ ՀԱՑՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒՔԻԻՆ ՊԷՑՐՈՒԹ, ԼԻԲԱՆԱՆ 24 2nhm. 1929

U.dthuywope

8. 8. Եղիչէ Արքեպս. Դուրեան Բարեջան Պատրիարք Հայոց Երուսաղէմի Երուսաղէմ

Քանդուած Հայ Արծիւներու բոյնին անտուն զաւակներս՝ կտոր մը անչունչ Թուղթով կուղանը թարդման հանդիսանալ տարազնուած՝ դժբախտ Ջէյթունցւոց։

Զէյթունցիք խոր յարգանք ունին ամէն անոնց՝ որոնք, ցեղին եւ մարդկութեան համար աշխատած եւ օգտակար եղած են։

Դուջ Ձեր անրասիր կեանչքով, ցեղէն ժառանդած մեծ հանձարով եւ աղդօդուտ գործերով կուդաջ պատուոյ մեծ տեղ մը գրաւել Հայ ցեղի արիւնոտ պատմութեան մէջ։ Հայ սերունդին և Զէյթունցւոց հոգւոյն խորջը յասէտ անմահացած Դուրեան դերդաստանը, պիտի օրհնուի, ջանի ի՛նչքը ցեղը կ՛ապրի։ Ձեր բոլոր դործերուն մէջ՝ Հայ Ողին և Ջէյթունի անթիւ նահատակները՝ Ձեղ պահապան և առաջնորդ ըլլան և ապրիջ չա՛տ երկար։ Ձեր Յորելեանի առթիւ լաւադոյն մաղթանչներով՝

Ի դիմաց Զէյթունի Հայրենակցական Միութեան Կեդը․ Վարչութեան Ատենապետ Ատենադպիր ԳՐ․ Գ․ ԳՈՒՏՈՒԼԵԱՆ ՊԱՂՏԱՍԱՐ ՍԱԼԱԹԵԱՆ

Նիկոսիա, 24 Հոկտ. 1929

Ամենապատիւ Սրբազան Հայր.

Այնւքան հանդիսաւոր ու պաչտօնական խօսքերու, դիրերու քով, որոնք Ձեր ներող ժպիտովը կը կչոէք հիմայ, դժուար գրուած այս տողերուն ալ բարի նղէք տալու այն իրական կսկիծը գոր չեմ բացատրած, պաչտօնական ըլլալ չկրնալուս։ Բայց կարելի է մխիթարուիլ։ Ի՛նչ հարկ, կը խորհիմ, վերադիրներու և չինուած նախադասութիւններու։ Դուք վեր էք անոնցժէ։

Երախտապարտ եմ Ձերի այն չատ դեղեցիկ երևոյնին համար որ Ձեր միտքը կր
կոչուի և Ձեր ձեռակերտն է ամրողջունեամբ։ Բայց չէք սպասեր որ երախտապարտ
ըլլամ Ձեղի Ձեր կեանքին համար ալ։ Վասնգի այդ կեանքին արծանք է լիունեան ու
ասոր թերաստուերին մէջ ես Թափանցումն ըրի զիս չարչարող մռայլ խորհուրդին։ Ես
փնտռած եմ տարիներով դաղտնիքը մեր սրբացած եկեղեցականներուն։ Այսօր կնճիռը
լուծուած է։ Ու ի՛նչ սրտառուչ պարզունիւն է ճամբունը որ օգտակար կեանք կր կոչուի։ Երախտապարտ ենք քեղի մենք բոլորս։ Կը սորվեցնեք մեղ համեստ ու քաղցը
ըլլալ ու մեղ կր խելամտեք ժողովրդական խղճմտանքին որ մեր պատմիչներուն մօտ
սրբունեան լուսապսակը կը դառնայ։ Ձեղմով այնքան նափանցիկ է այս խորհուրդը։
Ահա՛ թէ ինչու բարիք մըն է Ձեր կեանքը։

Ու ինչպէս որ նշանաշոր էջի մը մէջ գաս կ'ուղէք Ձեր հին մէկ նախահայրէն, ներեցէք որ Ձեր անարժան մէկ աշակերտը դարձնէ Ձեր բառերը Ձեզի ու ծունկի հկած

put 26p hwa phis

— Բարութեան դաս մը՝ կեանքէ՛գ, Սրբազան ուսուցիչու

Համբուրելով Ձեր համբուրելի Աջը Սէրով ու կսկիծով Յ․ 0ՇԱԿԱՆ

ANATOLIA COLLEGE SALONICA, GREECE

> Դեր․ Տ․ Տ․ Բարկէն Ս․ Արջեպիսկոպոս Նախագահ Դուրեան Յոբելինական Յանձնախումբին Երուսաղէմ

Գերաչնորն Սրբագան Հայր.

Հայոցս, Երուսաղէմի արժանընտիր Պատրիարը Ամեն. Տ. Տ. Եղիչէ Սրբազան Արջեպիսկոպոս Դուրեանի՝ քահանայութեան, ուսուցչութեան և գրական դործունէութեան յիսնամեայ յորելեանին առթիւ, համակուած հիացումով, յարդանքով ու սէրով, կը փութանք անրասիր, ներհուն, զգայուն քերթող, պերձաբան Յոբելեարին մատուցանել ակնածանօք Պատ. Յանձնախումրիդ միջոցաւ սրտագին չնորհաւորութիւններ և բարեմաղխութիւններ։

24 Հոկտ. 1929 Սելանիկ Ի դիմաց Սելանիկի Անաթօլիա Գօլէճի Հայ Ուսանողութեան ՐԱՖԹ Յ․ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ԱՐԱՄ Ռ․ ՏՕՆԻԿԵԱՆ

ԳԱԼՖԱՅԵԱՆ ԱՂՋԿԱՆՑ ՈՐԲԱՆՈՑ ՀԱՍՏԱՏԵԱԼ 1866 ԽԱՍԳԻՒՂ, ՀԱԼԸՎ-ՕՂԼՈՒ 4. Anthu 24 Lutin. 1929

Ամենապատիւ

Տ. Եղիչէ Արջեպ. Դուրեան Պատրիարջ Սրբոյ ԱԹոռոյն Երուսաղեմայ

Սրբազան Հայր. Հայ երախտագէտ ազգը դիտէ գնահատել իր արժանաւոր գաւկին տքնաջան աշխա տութիւնը։ Ամէն կողմ կատարուած Յոբելինական հանդիսութիւնները, բնոյթել ունին պսակելու Ձեր նուիրումի գործը, որ արդարև, յոյժ օգտակար և բազմակողմանի ե դած է։ Թո՛յլ տուէջ, Սրբազան Հայր, որ ես ալ իմ՝ և Գալֆայեան ուխտի քոյրերու հայ մակրանքի ձայնը խառնեմ համազգային այս տոնակատարութեան, մաղթելով Ձեզ երկա՛ր և երջանիկ կետնւջ, որպէսզի հայ աղջատ գրականութիւնը ձոխացնէջ Ձեր հերհուն և ներչնչուն բանաստեղծութիւններով, ուսումնասիրութիւններով և բանասիրութիւններով։

Տա՛յր, թե երկին ը Հայ ազգին նուիրեր Ձեզ նման անրասիր, և անձնանուեր եկե_

ղեցականներ, պատկ և պարծանք եկեղեցւոյն։

Ulfrud who p danghend h sudpage U. Ugaga Thud

ի դիմաց Գալֆայնան Ուիտին Մայր՝ ԱՂԱԻՆԻ ՄԱՅՐ - Կ - ՔԷՕՍԷԵԱՆ

U.Stanujumpe

8.8. Եղիչէ Ս. Արջեպիսկոպոս Գուրեան Հայրախնում Պատրիարջ Առաջելական Ս. Ախոռոյ Վանուց Սրբոց Յակորեանց լԵրուսադէմ

Շնորհագարդ Սրբագան Հայր.

ի ծառայել իմում այնոցիկ, որը են ծառայը Տետոն իմոյ, համարիմ պաչուսն մա_ տուցանել նմին իսկ Տետոն։

Սրբակրօն վարուջ, ոսկիաբան խոսիւջ, իմաստասէր մաօջ, ուղղափառ ուսուցմամբ և օրհնաբեր արդեամբջ, լրիւ կէս դար ողջոյն Աժենակալին մերոյ Աստուծոյ ծառայող Հայրապետիդ, իմոյ սրտադին մեծարանաց մատուցանեմ ղծառայական ողջունադիրու

Եւ յաւուրս մեծի տօնի Յորելինի Ձերոյ Սրրազնութեան, հայցեմ ի Տեառնէ չնորհել Ձեղ աննուագ առողջութիւն, գի մի՛ պակասեսցի ալևոր ի տանէ իւրմէ, և որպես լուաւ բազկատարածութեանն Մովսէսի, ի ջախջախել գթյնամիոն Իսրայէլի, տացէ՛ և մեզ արժանաւորութիւն մտանելոյ ընդ բազկացդ և չնորհիւք աղօթիցդ արդիւնաւորելոյ գօրհնութիւնն Աստուածային ի վերայ Սրրոյ Եկեղեցւոյս և համօրէն Ազգիս և մեր մեդաւորացս։

24 Հոկտ. 1929, Գահիրե Ձերդ Բարծը Սրբազնութեան Նորընծայ Ծառայ ՊՍԱԿ ՔԱՀԱՆԱՑ Մ․ ԽԱՉԻԿԵԱՆ

U. C. C. & P. Beyrouth

Atspace , 24 Laturatory 1929

ՊՈԼՍՈՑ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ՀԱՅՐԿՑ. ՄԻՈՒԹԻՒՆ ՊԵՑՐՈՒԹ

U. Ste Sungminfer

Տ. Տ. Եգիչէ Ս. Արջևպսկ. Դուրհան Բարհիմնամ Պատրիարջ Ս. Երուսաղէմի Երուսաղէմ

Ամենապատիւ Սրրագան Հայր,

Ձեր ազդօդուտ ծառայունիւնները ամէն հայու հոգւոյն խորքը դրոչմած է խորին մեծարանք Ձեզ հանդէպ։

Այսօր յարգան քի տուրք մր կը մատուցանել հայ ժողովուրդը Ձեղ՝ իր մեծ դաւկին, որ դիտցաւ ցեղին փոխանցել իր մեծ հանձարը։ U. Եղիչէի անման հոգին կ'ապրի Ձևր մէջ։ U. Սանակ և. U. Մեսրոպը ցեղին մէջ կենդանացնող Ձևր չունչը սերունդներ կրթեց։

Հայ ոգին Ձեր բոլոր գործերուն մէջ Ձեզ առաջնորդ ըլլայ և հայ ժողովուրդը Օչա-

կանի մէջ լսէ ու կարգայ ցեղային նկարագիրը կերտող հոգելունչ քարողները։

Աստնւր են մեր և մեր հայրեակիցներուն լաւագոյն մաղթեան ըները Ձեր Յորելեանին առթիւ ։

(եների

Որդիական խորին ակնածանօւք Ի դիմաց Պոլսոլ եւ Շրջ. Հկցկ. Միութեան. Ա.դպիր Ա.պետ Ց. ՍԱԼԵԱՆ ՏՕՔԹ. Բ. ԳՈՒԼԱԳԵԱՆ

THE GOTCHNAG An Armenian Weekly

40.80.080.50 40250.4

331 Fourth Avenue.

New York

Սունապատիւ

8. Եղիչէ Արքեպսկ. Դուրեան,

Արժանընտիր Պատրիարը Ս. Յակորհանց Աթոռոյն

Երուսաղէմ, Պաղեստին

2nhim. 24, 1929

Բարձրաչնորհ Սրրազան Հայր,

Ձեր Ամենապատուութեան ջահանայացման լիսնամեայ Յորելեանին առթիւ ՀԱ ՅԱՍՏԱՆԻ ԿՈՉՆԱԿ ին Խմբագրութիւնը պատիւ ունի մատուցանելու իր սրտադին խըն_

դակցութիւններն ու չնորհաւորութիւնները։

Թերթիս Խմբադրութիւնը, Հայ Ժողովուրդի հոգևոր և իմացական լուսաւորութեան Ջերմ Նախանձախնդիր, մեծապէս կը դնահատէ այն ջանքերը զորս Ս. Ցակորեանց Միա_ բանութիւնը կը կատարէ, մանաւանդ Ձեր գահակալութեան չնորհարեր թուականէն ի վեր, եկեղեցական, կրթական և դրական մարզերու մէջ։

Թոյլ տուէջ, Սրրազան Հայր որ Խմբագրութիւնս, ներկայ պատենութենեն օգտուելով Ձեզմէ խնդրէ Ամանորի Պատգամ մը, Հայաստանի Կոչնակի ընթերցողներուն

ուղղուած, զոր կը սիրենք հրատարակել Նոր Տարուան առաջին Թիւով։

կը մաղթենւք որ Երկնային Նախախնամութիւնը Ձեզի չնորհէ երկար եւ առողջ կեանչ, որպէսզի Հայաստանեայց Հօտը կարենայ ասկէ վերջն ալ չատ տարիներ առաջ նորդուիլ Ձեր իմաստութեան լուսովը և ներչնչուիլ Ձեր առաջինութեանց օրինակովը։

Մնամ ամենախորին յարգանօք

ի դիմաց Հայաստանի Կոչնակի Խմբագրութեան Խ․ Կ․ ՊԷՆՆԷԵՍՆ

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ՆԻԿՈՍԻԱ (ԿԻՊՐՈՍ) Նիկոսիա 24 Հոկտ. 1929

Ամենապատիւ Տ. Եղիչէ Ս. Արջեպս. Դուրեան Պատրիարջ Հայոց

Երուսաղեն

Ամենապատիշ եւ Սիրելի Սրրադան Հայր,

Հովուական Ձեր յոգնամբոխ պարապումներու մէջ, չեմ գիտեր Թէ այս տողերուն ստորագրութիւնը պիտի կրնա՞յ մոսցուած հին անունի մը արձագանգը արժնցնել պահ մը։ Արժանի պատիժը պիտի ըլլար իրեն համար տեւական մոսացումը, եթե ան չունե_

նար ծոյակապ Սրրազանը երբեք մոսցուած չրլլալու ու զայն, Թեև ծևռուէն ու լոին, որդիական կախողին սիրով պաչտելու չքնեղանքը։ Թղուկները կ'աւրուին մեր յիչողութնան ու համակրանքի տախտակներէն, բայց հսկաները խորաքանդակ դրոչմուած կը մեան ու համակրանքի տախտակներէն, բայց հսկաները խորաքանդակ դրոչմուած կը մեան հոն։ Եւ սա պահուն, նոյնքան պայծառուժեամբ մուքիս առջեւ կը տեսարանագրուն դասարանը՝ որ, տասնեակ մր տարիներ առաջ, չարտեր «Նոր Գպրոց»ի բարձրագոյն դասարանը՝ որ, տասնեակ մր տարիներ առաջ, չարաքը երկու անդամ կը լեցուէր քաղցրուժեան, չնորհի, դիտուժեան ու րանաստեղծութեան չյացուցիչ լոյսովը, որուն մէջ իմ ալ հոդիս կ'օծուէր աչակերտներու հոդիին հետ, երբ իրըև ուսուցիչ – ուսանող զմայլագին կը հետևէր Ձեր դասերուն։

Ու այսօր, երբ ազդն համօրէն կը տօնախմբէ պատուական հայրապետիդ յորելեանը, Թոյլ տուէք որ ես ալ, Մելդոնեան հաստատուխեան անունով ուղղելի պաշտօնական հեռագրէս գատ, իմ որդիական սիրոյս հետ յայտնեմ իմ ջերմ խնդակցուխիւններս ու լաւագոյն բարեմաղխուխիւններս, ու դուրդուրադին համրուրեմ Սիրելի Սրբազանիս չբնորհալի Ս. Աջը։

Գ. ԿԻՐԱԿՈՍԵՍՆ



Brugyt. 25 Lulin. 929

Ամենապատիւ

Տ. Տ. Եղիչէ Ս. Արքեպսկ. Դուրեան Բարեխնամ Պատրիարը Առաջելական Ս. Աթոռոյ Երուսաղէմի

Սրբազան Հայր,

Ձերդ Ամենապատուութեան Գահակալութեան Գոդ. տարւոյ և անուան տարեդարձին երջանկարար գուդադիպող Մեծի Գաճանայութեան Յիսնաժեայ Յոբելեանի առիթով պատիւ եւ համարձակութիւն ունիմ ամենախոնարհ յարդանքներով յայտնել իմ ջերմաջերմ ընորհաւորութիւններս, մաղթելով ի բոլոր սրտէ որ Նախախնամողն Աստուած երջանկութիւն պարդեւէ Ձեղ, և առողջ ու անփորձ կեանքով անսասան պահէ ղՁեղ Պատրիար-քական Գահուն վրայ։

Մատչիմ ի համրոյը Աջոյն Ձեր Բարձր Սրբազնութեան, եւ մնամ

որդիական խորին յարդանքներով Երաժիչա–Ուսուցիչ Յոպպէի վանուց Յ․ Ա․ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ



U.Stimmyumpe

Տ. Տ. Եզիչէ Սբբ. Արջեպիսկոպոս Դուրեան Պատրիարջ Առաջ. Ս. Աթուռյն Սբրոցն Յակորեանց յԵրուսաղէմ

U. Մեն . U . Պատրիար, 2 Հայր .

Սրբափայլ և պանծալի Ս․ Անունիդ, պատուարեր զահակալուԹեանդ, անդրանիկ Ցիսնաժեայ Քահանայութեանդ հռչակաւոր Յորելեանիդ առթիւ, ես և ժանկունք իմ ծնկաչոք կուզանք համրուրել Սրբաղան Աջրդ և ժաղթել Ձեղ երջանկարեր շատ տարիներ։

Սրրագան Աջրգ համրուրող խոնարհ որդին Ձեր ՅՈՎՀԱԵՆԷՍ ԽԱՉԱԿԻՐ ՔՀ․ ՍԻՄԷՈՆԵՍՆ Ժամարար Յոպպէի Հայոց Վանուց

25 Հոկտ. 1929 Եաֆա U. Stammywante

Տէր Եղիչէ Սրբազան Արջեպիոկոպոս Գուրեան Արժանընտիր Գահակալ Առաջելական Սուրբ Ախոռոյն Երուսագեմայ

Սրրազան Պատրիար,ը Հայր.

Զևըմագոյն բարևմագիլութիւններս կը մատուցանեմ Ամենապատուութեանդ պատ_ կառելի Ցիմնամեայ գրական գործունէութեան։

Կը ցանկամ բազմարդիւն դրչիդ բեղմնաւորութիւն. անվիչտ ապրիք տարիներ հր-

կար որ մշտատև հնչէ քնարդ անմահ:

Հայր Պատուական, կ'ադաչեմ որ բարեհաձիք ընդունիլ խորին մեծարանացս հաւ ւաստիքն։

25 Հոկտեմբեր 1929 Երուսաղեն Որդիական ակնածանօր Մատչիմ Ս. Աջոյգ ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՎԻՐԳԻՆԷ ՎԱՐԴ - ՊԱՏՐԻԿԵԱՆ

ԱՌԱԶՆՈՐԳԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԳԱՀԵՐԷ 9-m5/pt 25 Lulin. 1929

U. d'thumuning

8. 8. Եղիչէ Սրբազան Արջեպիսկոպոս Դուրեան Պատրիարջ Ս. Երոշսազէմայ ի Վանս Ս. Ցակոբայ Հայոց Երոշսաղէմ

Աժենապատիւ Սրբադան Հայր,

Ձեր Սրբազնուխեան Քահանայուխեան վունամեակին առխիւ, ջերմապէս կը փափա_ թէի դալ անձամը յայտնելու համար իմ սրտադին ընորհաւորուխիւնններս եւ հոդերուդիս մաղխանջներս, բայց կը ցաւիմ բոելու որ մեր Սբրազան Առաջնորդ Հօր ասկից բացա_ կայ ըլլալուն պատճառաւ, Առաջնորդարանի ընթեացիկ և ստիպողական գործերը հարկա_ դրած են գիս, որ չկարենամ կատարել իմ որդիական պարտականութիւններս։

Ներկայ գրովս յարդանքով եւ ակնածանօք Ձերդ Ամենապատուութեան կր ներկա յացնեմ իրը հարազատ զդացումիս արտայայտութիւնը, իմ ջերմ մաղթանքներս Ձեր Սրբավնութեան արևւչատութեան համար, որպէսզի այս վտարանդի եւ չորս հովերուն տրուած ազգը վայելէ Ձեր արդիւնաչատ եւ բազմաբեղուն մաջին արտադրութիւնները

եւ 11 . Ավժոռը՝ Ձեր բարձր հովանին։

Ամէն անոնը որ Ձեր Ամենապատուութեան մօտէն ծանօթե են, յանձին Ձեր կը տեսնեն արդի ժամանակներու Շնորհալին, որ կը ծառայէ աղդին թե իր դրչի ու մտքի դործունէութեամբ և թե հովուապետական պաչաօնով։ Հայ ժողովուրդը ընդհանրապես կը կարօտի Ձեր մտաւորական աշխատութենան, եւ Ս. Սթեոռը՝ Ձեր հովուապետական բարձր հովանին։

Ուստի սրտադին զգացումներով ես ե՛ւս կուդամ միացնել իմ՝ հոդեռանդ աղօքեքս, հաղարաշոր ուրիչ չատերու ազօքեքնն, որ առ Բարձրեալն կ՛ուղղուին այս պահուս աչխարհի չորս կողմը ցրուած Հայերու կողմէ, որպէսզի ամենուս Աստուածը, Ձեզ պարգևէ երկար կեանը և առողջութիւն, և պահէ հաստատուն պատրիարքական գահուն վրայ։

Այս ազգը դեռ չատ պետք ունի Ձեր Սրբազնութեան բարձր հովանիին եւ մանա_ ւանդ Ձեր դրական ձիրջերուն, որոնք կոչուած են դատարկութիւններ լնուլ և ջախջախ_ ուած ժողովուրդը առաջնորդել բարձրացնելու համար հոգեկան բարձրագոյն ոլորտներուն։

Մնամ որդիական յարգանօր եւ ակնածանօր համրուրիւ Ձեր Ս. Աջոյն

ՑԱՐՈՒԹԻՒՆ ՔՀՆՑ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

LUB UPUSUPUTUULTU UUUTUBP PUZEPE, (EEEMSAU) 4-45/pt, 204016/php 25, 1929

Ցորելինական Ցանձնախումը Հայոց Պատրիար,քարան

bpncumq td

Ամեն. Տ. Եղիչէ Ս. Արջեպ. Գուրեանի բարերաստիկ Յորելեանին առնիւ՝ հպարտ և հրճուալից՝ կը փուխանք Գահիրէի Հայ Աւետ. Համայնջին անխառն խնդակցունիւն, ները բերել ազգային հանդիսունեանց. և սրտադին մաղժել, որ Բարձրեալը չարունակէ իր չնորհջին մէջ պահելու Նորին Սրբագնունեան մաջրակրօն հոգին և ազգանուէր բաղանարեղուն միտջը, դեռ երկար տարիներ օրինակ հանդիսանալու համար իր կեանջին ու գործին վրայ սջանչացողներու ստուար բազմունեանց։

(hhbhh)

Հիացումի եւ մեծարանքի հաւաստիքներով Մնանք Ձերդ Ցանուն Գահիրէի Հայ Աւետ․ Համայնքին Հովիշ Կ․ Ս․ ՖԱՐԱՃԵՍՆ

ՆՈՒՊԱՐԵԱՆ ԿԲԹԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ ՀԵԼԻՈՊՈԼԻՍ Հելիոպոլիո 25 Հոկա. 1929

Գերապատիւ .

Մեսրոպ Եպիսկոպոս Նշանեան

Ս. Նախագահ Ն. Ս. Եղիչէ Արջ. Դուրեան Պատրիարջի Ցիսնաժեայ Քահանայութեան Յորելիանական Ցանձնաժողովին

bpncumq td

Physiquempe Zuje,

Նուպարեան կրխասիրաց Միուխեան Վարչութիւնս ներկայիւս կը յայտնէ իր խորին յարգանչըն ու անկեղծ համակրանչըն, Մեծ ուսուցչին, Հմուտ բանասերին, Սրբազան ըերթողին Ն. Ս. Եզիչէ Ար.ը. Դուրեան Պատրիարչի յիսնամեայ Քահանայութեան յուրելեանի առթիւ և Արջութեան Արեւասերաց Միութեան

(White)

Ատենապետ Ատենադպիր ՏՐԴԱՏ ՀԱՊԷՇԵԱՆ - Ե. Մ. ՊՉԱՔՃԵԱՆ

K. MELCON Saptieh - Cairo Cairo, 25 Հոկտեմբեր 1929

U.Sh humampe

Տ. Տ. Եղիչէ Արջեպիսկոպոս Դուրեան Առաջելաչնորհ Ս. Պատրիարջ Ս. Յակովբայ Վանուց Երուսադէմ

Բարձրաչնորհ Սրբագան Տէր իմ.

Ձերդ Բարձը Սրբազնութեան աշխարհականութեան շրջանի յիսուներեքանեայ ուսանող սանը կը փուխայ Ձեր Սրբութեան կրմնաւորի յիմնամեայ Յոբելեանի առթիւ իւր որդիական ջերմ և անկեղծ բարեմաղթութիւնները մատուցանել յոտս Ձեր Առաքելական Ս․ Գահուն, մաղթելով Ձեղ երջանիկ և քաջառողջ երկար տարիներ ի պայծառութիւն Հայաստանեայց Ս․ Եկեղեցւոյն և Սաղիմական Առաքելական Ս․ Վանուց։

> Ի համբոյր մատչելով Ձեր պատուական Ս. Աջոյն Մնամ Ձերդ Բարձր Սրբազնութեան Ամենախոնարհ և երախատգետ Որդի Մ․ ԴԱՅՀԳՃԵԱՆ

Գահիրէ, 25 Հոկտեմբեր 1929

Und brumay worthe

Տ. Եղիչէ Ա. Ե. Գուրևան Պատրիարը Հայոց Առաքելական Ս. Ախուոյ Երուսաղէմ

Williammumpe Sty.

Ձեր Սրբազնու Թեան Քահանայական Յիմնաժեայ Յոբելեանին առթիւ , կուգաժ խոնար_ հարար յայտնել իմ անկեղծ չնորհաւորութիւններս , մաղթելով երկար և երջանիկ կեան ը։

Սրրագնութեանդ բազմաթիւ աչակերտներու, բարեկամներու և հիացողներու կարգին, որոնք այսօր աչխարհի ամէն կողմերէն կուգան իրենց համակրանքի զգացումները բերել՝ այն փառաւոր Յորելինական հանդէսին, որ վաղը տեղի կ'ունենայ բազմադարեան Առաքելական Ս. Յակոբայ վանքին մէջ, իմ չնորհաւորութիւններս ալ խառնելով անոնց ձայնին, կր կարծեմ թէ հայրենակցի մը և մեր Պոլսոյ Հայոց սիրեցեալ Պատրիարքին ու վաղեմի մեծանուն բարեկամին հանդէպ ունեցած հիացումս պիտի նկատէք դայու

Մատչելով ի համբոյը Ս. Աչոյդ Մնամ ամենախորին յարդանօր ՎԱՀԱՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ



ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՈՒՐԲ «ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ» ԵԿԵՂԵՑՒՈՅ ԱԹԹՈՍ Այթոս, 25 Հոկտեմբեր 1929

Ս. Մենապատիւ Տէր

Տ. Եղիչէ Սրբագ . Արջեպիսկ . Գուրեան Առաջինագարդ Պատրիարջին Մերոյ Սրրոյն Աթեուոյ Երուսադէմայ

Առաքելաչնորհ Ցորելեար,

Պուլկարանայ դաղութեն երճուան քով լի՝ Ձերում Ամենապատիւ Սրբազնութեան Յուրելեանը Տօնելու՝ իր երախտագիտական անագանգը կը ճնչեցնէ ամենուրեք՝ ընդ որում և տեղւոյս նայ նամայնքը երկիւղած օրէն՝ անթասիր՝ նրբամիտ՝ գործունեայ՝ խստակրօն խոնսորն՝ նեղանամիոյր՝ լեղուագէտ և բանաստեղծ - Հայ - Եկեղեցականութեան փառքն ու պարծանքը Ձերում Ամենապատիւ Հայրութեան նամբաւաւոր անունին։

Եւ այսու՝ խորապէս զգածուած՝ որդիական երախտագիտութեամբ պարտք կ՛զգանք փութալ՝ որպէս թարգմանը համայնքիս — հոգեզուարձ բերկրութեամբ չնորհաւորել 27 ը Հոկտ. ը Առաջինազարգ Սրբազնութեանդ Յորելեանին նուիրուած՝ հայ – ժողովուրդի որտին մէջ ջանդակուած և դրոչմուած այդ պատուական օրը։

Ջերմապէս և անտահման մաղթան քներով առլցուն կը հայցենք ի Տեառնէ՝ որ Հայ-Ազդը ունենայ բազդը` կրկին անգամ տոնելու 50 ամեակը Ձերում Ամենապատիւ Սըրրաղնութեան՝ որուն խաղաղաչնորհ և Սրբաղնեալ Ս. Աջոյն եմք՝ համբուրիւ

> Նախագահ Յ․ Ք․ ՆԱԽՆԻՔ

որդիական ակնածանօւք Ի դիմաց Թաղական Սորհրդոյ Ատենադպիր Ատենապետ ՀԱՃԻ Ս․ ՊԱՔԼԱԵԱՆ Գ․ ՌԱՖԱՅԵԼԵԱՆ

(WOTER)

9-m5/pt, 25 2nfm. 1929

«ՑՈՒՍԱԲԵՐ» օՐԱթեՐԹ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԳՐԱՏՈՒՆ ԳԱՀՒՐԵ

Ս.մենապատիւ

Տ. Եղիչէ Արջեպսկ. Դուրեան Ազգընտիր Պատրիարջ Հայոց Ս. Երուսաղէմայ

Սրբագան Հայր,

Բախար չունիմ Ձեզ մօտ ըլլալու, թեև մօտ եմ միչտ սրտով :

Կը փութամ սրտագին չնորհաւորութիւններս յայտնել Ձերդ Սրբագնութեան երջանիկ յորելեանին առթիւ, որ պանձացումն է հայ դպրութեան և Հայաստանեայց Եկեղեցիին։

Երկու քն ալ, ըլլայ դպրութիւնը ըլլայ հկեղեցին, սգաւո՛ր, չատ քիչերու կարգին և անոնց գլուին և Նահապետը մեծարուած, Ձե՛զ ունին իրրև սփոփանք։

Ձեզմով հարուստ կը խուի ինձ հայ ժողովուրդը, ճչմարտօրէն, առանց Ձեզի՝ աղ ջատ։ Թոյլ տուէ ք ինձ, Սրբազան Հայր, որ բոլորին հետ, ես ալ, մաղթեմ, որ հայը միչա հարուստ մնայ Ձեզմով։

Որդիական յարգանքներով ԳՈՒՐԳԷՆ ՄԽԻԹԱՐ**Ե**ԱՆ



Հալէպ, 25 Հոկտեմբեր 1929

Աժենապատիւ

8. Եղիչէ Ս. Արջեպիսկոպոս Դուրեան Պատրիարջ Հայոց Ս. Երուսաղէմի

Սրբագան Հայրիկ.

Նորին Սրբազնութեանդ Քահանայութեան Յիսնաժետյ Յորելեանին առթիւ զգացած ուրախութեանս չափն ու սահմանը՝ Ձեր հմայքին և անխոնջ գործունեութեան համեյմատական է, արդարև կեանք մը բեղուն և արդիւնաւոր՝ լի տքնաջան աչխատութեամբ ամեն մարզի մէջ գրեթե աննման աստիճանով, իբրև կրօնական՝ ապրեցաք դերազան, ցապես օրինակելի, եզական և անբասիր, իբրև ուսուցիչ՝ յարատև և խղճաժիտ, անհատասեր կերպով տիպար, իբրև պատմագիր եղաք ներհուն և հեռատես, իբրև իմաստասեր՝ խորաթափանց և մանրագնին, իրրև բանաստեղծ՝ ինչնատիպ և զդայուն, իբրև քաղաքարիչ՝ պերճաբան և վեհիմաստ, իբրև լեզուագետ-բանասեր՝ հմուտ և խորագնին, տարիներու ծանր բեռան տակ կքած՝ կարծես կ'երիտասարդանաք հոգեկան նոր աւիւնով և աչխատելու անսահման փափաքով առլցուն։

Ձեզի յատուկ բարոյական կորոմի եւ ուսուցանելու անչէջ եռանդը՝ չանյայտանար երբեջ Ձեր բազմերաիստ աչակերտին յիչողուխենկն՝ ցորչափ կը չնչէ ան, եւ յիրաւի պիտի չի կրնամ երբեջ ձերբադատուիլ այն խանդավառ ոզիի աղդեցուխենկն որ Ձերն է, Ձեզ կը յտականչէ եւ տեւական հետջ մը պիտի ձգէ սերունդէ սերունդ, իրրեւ կաշմուրջ գործածելով Ձեր անխիւ սաները։

Նիւխական գնահատում մը՝ որչափ ալ մեծարժէք և սրտարուխ ըլլայ, պիտի չկրնայ երբեք արտայայտել այն վսեմ ուխտը, որով աղգային ծառայութեան նուիրական դործին տրամադրած էք ինւքզինւքնիդ կէս դարէ իվեր, հաղուագիւտ յարատևութեամբ մը։

Սրբազան Հայրիկ, այս հրճուագին օրուան հանդիսութեանց պահուն կ'ապրիմ անուչ եղեմական կեանքը Ձեր վաղամեռիկ սանին՝ անմոռանալի Դպրեվանքին, ուր նահապե֊ տական սեղանին չուրջ կը վայելէինք Ձեր յանկուցիչ չունչին հմայքը՝ կազդուրիչ և կենդանաբար, և հիմայ որ կը տոչորիմ կարօտովը անցեալի գրաշիչ յիչատակներուն, չեմ կլնար ինչըդինչըս գսպել յետադարձ ակնարկով մ'ըմբոչիննելու հուրքը հմայիչ հաս-տատուժեան մը՝ որու հոգին եղաչը ընդերկար, և որ, աւա՜ղ, ոչ ևս է հիմայ. բայց ու-րախ ենչը որ անոր հոգին Ձեղմով կ'ապրի և կը սաւառնի տէրունական Ս. Տեղեաց վրայմիչտ արթուն՝ յաւէտ եռանդուն։

Օգտուելով Ձեր երջանիկ Յորելեանին առթած ցնծութեննեն՝ պիտի իներբեր Աժենա_ կալեն՝ չնորհել ժեղ ընդերկար այն աննման անձնաւորութիւնը, որ Ձերն է, և որ իր պատանութեննեն ի վեր լոյս սփռած է իր չուրջը երդններանդ փարոսի մը պէս և չյոդնիր բարերարելէ իր բարոյական դաւակները՝ որոնց բարդաւաձման նուիրած է իր անձը յաւէտ։

Արդ, Սրրազան Հայր, մատչելով ի համերդը Ձեր Սրրազնութեան Ս. Աջոյն՝ կը խնդրեմ ընդունիլ Ձեր նախկին աննչան սանին անհուն մաղթեան ըներն ու սրտադին չնորհաւորութիւնները։

Ձեր խոնարհ ծառան ՄԻՍԱՔ ՔԵԼԻՇԵԱՆ



8ՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ ՊՕՂՈՍԵԱՆ ԱԶԳ. ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ Աղև քսանդրիա, 25 Հոկտ. 1929

U.d'bbuuyumpe

Š. Եղիչէ Արքեպիսկոպոս Դուրեան Պատրիարք Առաքելական ԱԹուոյն Մ. Երուսաղէմի

Բարձրաչնորն Սրբազան Յոբելեա՛ր.

Աղեջսանդրիոլ Պօղոսեան Ազգ. Երկսեռ Վարժարանի և Մելջոնեան Մանկապարտեզի կրխական ամբողջ պաշտօնեուժիւնը Ձեր Բարձրաշնորհ Սրբազնուժեան Ցիսնամհայ Քահանայուժեան Ցորելեանին առժիւ, հայ ժողովրդեան՝ մասնաւորաբար եկեղեցականուժեան և մտաւորականուժեան զանազան աստիձանի և դասակարգի ներկայացուցիչներու՝ հոգևոր մշակներու, բանասերներու, բանաստեղծներու, մատենագիրներու և
առհասարակ դրասերներու և դրազետներու կարգին՝ մասնաւորապես և յատկապես կ՝ողջունե այսօր՝ յանձին Ձեր յիսնամեայ բազմարդիւն ծառայուժեամբ վաստակարեկ Ամենապատուուժեան՝ հայ ձշմարիտ դաստիարակը և դրական մշակը, և խորին հիացումով
ու անվերապահ նուիրումով կը խոնարհի Ձեր բազմաբեղուն կեանջի գործունեուժեան
վեհաշուջ կոժողին առջև, և կը մատուցանե իր պատկառանջի և երախաագիտուժեան
ջերմագին դգացումներուն հետ՝ սրտեռանդն շնորհաւորուժիւններն ու մաղժան ջները
Ձեր Սրբազնուժեան ժանկագին կեանջի երկարուժեան և երկարատև հովուուժեան և
հովանաւորուժեան խոնում իղձերով, յօգուտ և ի բարեզարդուժիւն Ս. Ցակովբեան հը-

Մատչելով ի համրոյր Ձեր Սրբազնութեան Շնորհազարգ Աջոյն և խնդրելով Ձեր աղօթե_ ըրն ու հայրական օրհնութիւններն ամէնջիս և մեր Վարժարաններու աղգային մանկտւոյն ,

ամենախորին ակնածութենամբ եմ բ և մնամ բ

Ձեր Սրրազնութեան անձնուէր և խոնարհ որդիք

Ուսուցիչ-Ուսուցչունի ը Պօպոս . Ազգ . Վրժ ի և Մել բոնեան Մնկպրտեզի .

- 9. ๆ08นสยนา นี. 8 รษุกษุรษุกษณา บ. ๆธรากขอนา น. ๆกะรนรอนา
- Վ. ԱՐԾՐՈՒՆԻ Ռ. ԶԷՑԹՈՒՆՑԵԱՆ Ա. ՇԱՏԱԽՑԵԱՆ Ա. ԹԻՐԵԱՔԵԱՆ Չ. ՊՕՂՈՍԵԱՆ Հ. Ա. ԳՈՒՑՈՒՄՃԵԱՆ Ց. ՉԷՔԻՐԵԱՆ Կ. ԴԱՄԻԿԵԱՆ
- 8. ՄԱՀՏԵՍԵԱՆ Մ. Կ. ՃԻՉՄԷՃԵԱՆ Կ. ՃԻՊԻՆԼԵԱՆ Վ. ՁԱՔԱՐԵԱՆ
- Չ. ՍԷՖԷՐԵԱՆ Գ. ՍՊԱՐԹԱԼԵԱՆ Ա. ՄԽԱԼԵԱՆ ՀԱՄԱԶԱՍՊ ՓԱՆՈՍԵԱՆ Ա. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ա. ՏԷՑԻՐՄԷՆՃԵԱՆ ԱԼԻՍ ԱՃԷՄԵԱՆ

ԹԱՂ. ԽՈՐՀՈՒՐԳ ՀԱՅՈՑ Up. 20.40PU.

Upt . 2mhopm, 25 Zahm. 1929

U.d'ենապատիւ

S. S. Եգիչէ U. Արբեպիսկոպոս Գուրեան Պատրիարը Առաջելական Մայր Ախոռոյ Buneaung til

Բարձրաչնորն Սրբազան Հայր.

Սրախ անհուն բերկրան,ում, մամուլէն կը տեղեկանանը թե; մօտերս կը տոնուի Ձերդ

Ամենապատուու թեան Քահանայական Յիսնոսմեակը։

Այս առնիւ, որքան կը խայտան մեր հոգիները եւ մեր կունիւնները, ցնծունեան դրոշը պարզելով՝ ներկայով կուդանը մեր որդիական անկեղծ շնորհաւորութիւնները ներ կայացնելու յոտո Ձերդ Սրբագնութեան և ի սրտէ մազթելու որ Տէրը անսասան պահէ Ձերգ Ամենապատուութիւնը, որպէսզի իրըև անձնուէր պատրիարը Առաջելական Մայր Աթժուոյ, անչանախնգիր կղերական, գաստիարակ, բանաստեղծ, լեղուագետ ու իմաս_ տասէր, այս օտար ափերու վրայ մեզի միրիթարութիւն ունենանը Ձեր հայրական թան_ կագին խրատները, գրութիւնները, որոնք կուգան ներկայի հայ կղերին գրական գոհարները ըլլալու և տարիներու դժրախտութեանց ընթացրին շիջելու մօտ եղող հայ դրա_ կանութեան լուսաւոր կանթեղը ու զարգը ըլլալու։ Նոյնպէս ի սրտէ կը մաղթենք, որ բաղգը ունենանը Ձեր Քահանայական Հարիւրամեակը տօնելու։

Ամենապատիւ Սրբազան Հայր, հաճեցէր այս առնիւ ընդունելու մեր որդիական ջերմ՝ չնորհաւորութիւնները և թոյլ տուէք խորին ակնածանքով մատչելու ի համրոյր

U. U.gnj 2hpnj:

(Listor)

Որդիական յարգան քներով՝ D դիմաց Թաղ . Խորհրդոյ Հայոց Upupu-Quipopuile (Anelhuphu) Umbhumuhhum' U.mthuqupp' hU.214 4U.4U.26U.6 4. 4. ՔԻՐԻՄԵՍՆ

Писрушу 25 2при. 1929

Ս.մենապատիւ Տ. Տ. Եղիչէ Սրջեպսկ. Գուրեան ղ. Ս.Նղուգական Պատրիար,ք Հայոց Մ. Երուսաղէմ

Ամենապատիւ Սրբազան Հա՛յր

Վազն ի Ս. Երուսազէմ, ի Սոֆիա և բոլոր Պուլկարիոլ բազաբներն կը տօնեն Մեծ Bորելեարիդ լիմնաժեակն . բախտին դժբախդ մի՛ դուդադիպութեամբն չը պիտի կընամ ո՛չ մէկին անձամբ ներկայ գտնուիլ, գի վաղն առտու իսկ կնոջս ու աղջիկներուս հետ կր մեկնին ը լԱղէ քսանդրիա, չարունակելով մեր տարագրեալի կեան քն եւ ուղղուելով ரு பிரிய விரிய மிரி

Թէև անձամբ չը պիտի կընամ ներկայ դտնուիլ, բայց բոլորիւ որտիւ ներկայ պիտի րլլամ այդ հանդիսու Թևանց, որ ը տեղի պիտի ունենան Մեծ Հայուն, սրբակրոն բարձ րաստիճան կրօնաւորին, հանճարեղ գրագէտին, հոգիներու վրայ իչխող բանաստեղծին և համեստութեան ու պարկելտութեան հազուագիւտ ներկայացուցչին ի պատիւ։

կը չնորճաւորեմ , Սրբազան Հա՛յր եւ կը բարեմագԹեմ որ Ձերգ բարձր Սրբազնու թիւն ապրի յամս երջանիկ ու երկար կատարեալ երջանկութեամբ և վայելէ տառապետլ ու կոտորեալ Հայութեան երջանկաւէտ օրերն տեսնալու։

Ես և ընտանիքս մատչելով ի համբոյը սուրբ և պատուական աջից, կը խնդրեմք որ Ձեր Ս. օրենութիրենները անպակաս ընկք ժեղ համար ևւս։

Մնամ Ամենապատիւ Սրբազնութեանդ խոնարհ որդի՝ BUARE ZUUTUU ZEUL րտիթաբնան Միաբանութթին Ի գրոնննա 4. philium, 26 Lulin. 1929

P. 229

Առ Աժենապատիւ և Սբրազան Տ․ Եղիչէ Եպ․ ԴՈՒՐԵԱՆ

Jumphupp Zuing U. Upneumg til

Beneumnty

Արհիապատիւ Յոբելեաը.

Կարաձմեռն ձմեռները որթակոտոր ըրին Հայ Անդաստանը և Այդւոյն տէրը սգով համակունցաւ ի տես կարկտահար Այդւոյն։

Բայց ուրախունքիւն է ոգաւորին երբ յաջորդող զարնան նկատէ իւր Այգւոյն մէջ Մշակներ, որոնք անցեալէն փորձառու և աննկուն իրենց ջանքերու մէջ, անձնատուր են վերակենդանացնել Այգին և հետախաղաղ ջնջել աւերին նչմարները։

Մխիթարհան Միաբանութիւնս խնդակից Ազգին հետ, ի Ձեզ, Սրբազան Յոբելեար, կը տեսնե Հայ Այդւոյն վաստակասեր Մչակը։ Գուջ անցեալի մեջ նուիրեցիջ Ձեր կեան, բը այդ Այդւոյն ի բարգաւաճանս, և ներկայիս կը վաստակիջ անձնագոհ նոյն ասպարբերի վրայ, մոռացնել տալու մորմուջեալ սրտերու ցաւն ու կսկիծը, զուարթ ապագայի յուսով խրախուսելու վչտահարը։

Բովանդակ Ազգը հրախտագէտ ունիք Ձեր բրտինքներուն, առ Ձեզ կը հոսեն ուղ-

խօրէն անկեղծ դգացուններու և սիրոյ իղձերը։

Բարձր գնահատելով Սրբազան Յոբելեարիդ 50ամեայ գարուններու վաստակը, հովուական և գրական ասպարէզներու վրայ, կուգամ Թարգմանը ըլլալու Միարանութեանս իզձերուն և չնորհաւորական զգացումներուն հանդէպ Սրբազան Յորելեարիդ, անկեղծ մաղթանջներով, որ հաճի Ամենատերն չնորհել Վաստակաւորիդ յամայր ամս, հանդերձ առողջութեամբ ի մխիթարութիւն Ազգիս։

Հանեցէ ը ընդունել անկեղծ զգացումներու հետ, խորին մեծարանաց հաւաստին,

apad but

Ձերդ Արհիապատիւ Սրրազնութեան Խ. Ծ. և Ազօթարար Հ. ՎԱՐԴԱՆ ՎՐ. ՄԵԼՔԻՍԵԴԵԿԵԱՆ Աթոռակալ Մխիթարեան Միարանութեան

-10000000

D. TCHITOUNY 139, Av. de la Gare. 139 ER 40NT (S.-&-O.) Փարիդ - Էրժոն, 26 Հոկտեմեր 1929

Գերաչնորհ Նախագահ

Դուրեան Սրբագանի Յոբելեանին

Geneumyto

Հիացումս ու յարգան քներս,

Վարդապետ, քարոզիչ, դասագիր, ուսուցիչ, հեղինակ, բանասեր, լեզուագետ, բանաստեղծ, իմաստասեր, տեսուչ, եպիսկոպոս, կրկնակի պատրիարջ, Թեկնածու կա Թողիկոս, անբասիր եկեղեցական, ու բաղմահմուտ դրագետ,

Եղիչէ Սրբացան Գուրեանին,

Որ՝ եթէ ապրած ըլլար մեր Ոսկեդարու «Թարդմանչաց» մեծ շրջանին, — Մագիսsrnumկան տիտղոսներով, անյաղբ, վեծ, շնունալի մակդիլներով մկրտուած, ու Հայ Եկեղեցւոյ սուբերուն կարգը դասուած պիտի դտնեին,ը իր պատկառելի անձն ու անունը։ Խոնարհարար

21-10-11-61-12

ԱԶԴԱՐԱՐ ՕՐԱԹԵՐԹ ՂԱԼԱՑԻԱ 4. Authu, 26 Lulin. 1929

U. ali timymorpe

8. Եղիչէ Արքեպսկ. Դուրեան Սրբ. Պատրիարջ Հայոց Երուսաղէմի

Սրբագան Հա' յր,

Ձեր Յորելեանին առիքիւ ոչինչ ունիմ առելցնելիք այն տողերուն վրայ, գոր հրատարակեցի կամ գրեցի Ազդառաբի մեջ, իրրեւ այս թերթին խմբագրապետը։ Միայն կ՚ուզեմ յիչեցնել Ձեր Սրբազնութեան, թէ անձնապէս ալ հաձելի տպաւորութիւններ ունիմ Ձեր կեանքէն։

ԵԹԷ չէջ մոռցած, ընդհ. պատերազմի ընթացջին, Պ. Խօճասարհանի տնօրէնու_ Թեան օրով, Էսահանի մէջ Ձեղի պաչուշնակից ըլլալու պատիւն ունեցած եմ ։ Այդ մի_ ջոցին, չափագիտութիւն կ՛աւանդէի և առիթ ունեցայ Ձեր խոր հմտութիւնը տեսնելու նաեւ այդ դիտութեան գլխաւոր սկզբունջներուն վրայ։

Եօթեր տարիէ ի վեր կր վարեմ Ազդաբարը և ինձի համար անկեղծ բարերախտության մր եղաւ որ կրցայ յօդուածներով եւ խմբագրականներով հիացումս յայտնել այն մեծ մարդուն, որ Եղիչէ Գուրեան կր կոչուի։

Կ'ուղէի այսօր հեռագրել, բայց դժնղակ պայմանները արգելք կը հանդիսանան։ Այնպէս որ, ստիպուեցայ այս երկտողը փուժացնել, անդամ մըն ալ չնորհաւորելու համար յոբելեանը, որուն այնքան արժանի էիք։ Այս ազգը կրնայ պարծիլ Ձեր անձով և գործով։ Ակնածանքով կը համրուրեմ Ձեր Ս. աջր

TUSANY UULUSEUS



Tubunhu, 26 Zalya. 1929

U. Shammyminhe

Տէր Եղիչէ Սրբազան Սրջեպիսկոպոս Դուրեան Պատրիարք Հայոց Սուրբ Երուսաղէմի

Bpnenung tif

Աժենապատիւ Սրբագան Հայր

Յիսուն տարիներէ ի վեր գրական ու կրմնական ասպարէզի մէջ եւ Ազգին ցարդ անհամար ծառայութիւններ մատուցած անկոնջ վաստակաւորի մր Յորելեանի առխիւ երբ սովորութիւնը կը պահանջէ որ՝ նոյնիսկ իրարու բոլորովին անտարբեր անձեր ամէն տեսակ յարգան քներ ու րարեմագխութիւններ կ՛րնեն, չատ տարօրինակ պիտի ըլլար Ամենապատիւ Ազգականի մր մասին լուռ մնալ ։

Այն օրը, թերթի մը մէջ երը առաջին անդամ տեսայ Ձերդ Ամենապատուութեան Յորելեանի թուականը, չի մուցայ երբեք, եւ ի յիչատակ մեր ընտանեաց վաղեմի սիրոյն՝ այս քանի մր տողը Ձերդ Ամենապատուութեան Յորելեանին առթիւ գրելու հաճոյքն ունենալով հանդերձ, պիտի խնդրեմ որ հաճէիք ընդունիլ մեր անկեղծ չնորհաւորութերւները, մաղթելով նաեւ երկար կետն, ու յարատեւ յաջողութիւններ։

Որդիական ակնածանօք եւ Սուրբ Աջին համբուրմամբ Մնամ խոնարհ ծառայ ՄԿՐՏԻՉ Ս. ՓԱՓԱՋԵԱՆ



ԱՑ ԱԶԳ. ՍԱՀԱԿԵԱՆ ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆ ԵՒ ԶՕՐ. ԱՆԳ. ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ ՊԵՑՐՈՒԹ (Լիբանան) Mtspnep, 26 2nhm. 1929

1117,612

Առ Շնորհալի Յորհլեար Ամեն . Տ . Եղիչէ Արջ – Եպիսկոպոս Դուրեան Հանձարալոյս Պատրիարջ Հայոց Սրրոյն Երուսաղէմի

Ո՛վ սրրածուր խանդ լուսադեղ՝ մարմնացեալ, Ո՛վ աստղ պայծառ չուչանաչող երկնափայլ, Ցօդ դրպրութեան և կրօնի ծածանեալ Սրփռես չնորհ պերձացոլակ, անայլայլ։

Ո՛վ Յորելեար, Հայր Դուրեան՝ Կեա՛ց յար անչէջ յաւիտեան։

Ո՛վ կենսաբոյը բերան ոսկի զերազան, Ծաւալող սուրբ երանութեան ծիածան, Բարւոյն, գեղոյ, ճըչմարտութեան սրբբազան Ճառագայթեող արչալոյսներ զանազան։

Ցարգանը բանիցդ սուրբ, բուրեան՝ Ո՛վ պերձախօս Հայր Դուրեան։

Ո՛վ 5ըրեշտակ գերաԹըռիչ լուսաւոր, Որ ոսկեփայլ չողացուցեալ քո չեփոր Հընչեցնես Սիրոյ երգը քացրոլոր, Ցապուչ կըրԹեալ լըսողները զայն բոլոր։

Պատիւ երգոցգ սուրբ, բուրեան Ո՛վ հռետոր մեծ Դուրեան։

Ո՛վ պերձալոյս քնարերգու սուրբ հանձար, Որ վերացեալ յար վեհունեան ի կատար, Ցիսուն ամեր ածեցիր միչտ սուրբ Քընար, Հիահրաչ են քո տազեր և անձառ։

Պատիւ՝ ոգւոյգ սուրբ, բուրեան Ո՞վ բանաստեղծ Հայր Դուրեան։

Ո՛վ առաջեալ զերդ Տեառնեղբայր՝ ի Սիօն Սըրբազարդեալ պատարագես երբ ի Տօն Քև կը պանծայ, պայծառագեղ սուրբ կրօն, Ուրախանայ Եկեղեցին, օն և օն։

Փա՜ռը չընորհացդ սուրը, բուրեան Ո՛վ ձրչմարիտ Հայր, Դուրեան։

Մեծդ Ցորելեա՛ր, յաւէտ պարծանք ես Ազգին, Շուրջըդ փայլող սուրր ցոլքերով քո կեանքին, Ցիսուն ջահերդ՝ անչէջ լոյսիդ՝ Թանկագին Մին քան ըզմիւս կենսանչոյլ, սիրածին։

Պատի՜ւ կեան քիգ աննըման , Կեցցե՜ս Հայրիկ մեր Դուրեան ։ ԳիՄՍԷԴԱ



ԵՍԱԵԱՆ ԱԶԳ. ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆ

Հաստատեալ 1895 ին 8500E50N@DNG

P/12 431

U.d'h humampe 8.8.69/24 Ս. Արջեպիսկ. Դուրեան Ս.թժանընտիր Պատրիար,թ Հայոց Ս. Երուսաղեմի

Սիրելի Սրբազան Հայր, Ձեր Քահանայութեան Ցիսնաժեայ Յորելեանին առթիւ՝ երբ այս պահուս ամէն կոցմ Ձերդ Ամենապատուութեան Քարողչական, Գրական, Բանասիրական եւ ուսուցչական բազմակողմանի եւ ամենարեզուն գուծունկութիւնը կը պանծացնկ ի սփիւոս աշխարհի ափռուած Հայութիւնը, թոյլ տուէք ինձ՝ Ձեր հին համեստ աչակերտներէն մէկուն, որ պեսզի վեր հանեմ Ձերդ Սրբազնութեան մէկ ուրիչ թեանկագին հանգաման,թը, որ՝ ցատ իս՝ վերև յիչուածներէն ոչ նուազ մեծ բարիք մր, ոչ նուազ փայլուն պարդև մր եղած է Ձեր հասցուցած բազմահազար աչակերտներուն համար։ Այդ հանդաման թթ Սրբապան Հայր, կը խորհիմ Թէ Ձեր աննման դաստիասակի հանդաման քն է, ցեղը կրթելու, այ-Նուացնելու, վեր բարձրացնելու դաստիարակչական այն վսեմ հոգին է՝ որ կը ներչել է Պերճախօս Քարոզիչը, Նուրբ Գրագէտը, Ծնորճալի Բանաստեղծը և Ներհուն Ուսուցիչը։

Այդ միևնոյն եոգին է որ նոյնպես եմայուծ է ու կը եմայէ Ձեր դաստիարակած ըաջ մայժիշ ուսանողական սերունդները, այդ միևնոյն վսեմ հոգին է որ խաղաղեցուցած է ու կը խաղաղեցնե վրդովուած միտքերը, այդ միևնոյն հոդին է որ սէր և պատկառանք միանգաժայն ներջնչած է ու կը ներջնչէ իր անմիջական շրջապատին մէջ թե հեռու

ները, ամէն կողմ անխարը։

26 Luhuntulpto 1929

Թոյլ տուէջ ինձ ուրենն, Սիրելի Սրբազան Հայր, որ՝ իբրև հազարէ աւելի երկսես հայ մանուկ եւ պատանի հոգիներու դաստիարակութեան գործին լծուած համեստ դաս տիարակ մը, և Ձեր եին մէկ աչակերտը, պատկառան բով խոնարեիմ Մեծ Դաստիարա_ կիդ այդ Մեծ Հոգիին առջև, եւ ի սրտէ մաղթեմ Տիրոջմեն, որ այդ վսեմ հոգին տա կաշին չա՛տ երկար տարիներ ներչնչէ բոլոր հայ դաստիարակները և համայն ցեղը՝ որոշն ի սպաս գրիջ Դուջ յիսուն երկար տարիներէ ի վեր Ձեր ազնուական միտջն ու զգայուն սիրար ։

Այս զգացումներով տողորուած կը փութամ հոգևին չնորհաւորել Ձեր Ամենապա

տուութեան Ցիմնամեայ Ցորելեանը եւ պատկառանքով համրուրել Ս. Աջը։

Որդիական ամենախորին ակնածանօք Ս. . ՄԵՍՐՈՊԵԱՆ

Shorkh humbuh U.qq. 4rdmg. Fbrujh

6 / 11 / 1929

U.n.w.pbjuzunps

8. 8. Եղիչէ Արբեպիսկոպոս Դուրեան Պատրիարը Հայոց Երուսադէմալ.

Սրբազան Հայր,

Երբ աչխարհի չորս ծագերուն մէջ գտնուած հայորդիները որդիական անխառն ցբնծութեամբ մր արժանաշորապէս կը տոնեն այսօր բազմարդիւն գործնէութեանդ յիսնամեայ յոբելեանը, երբ բանգէտն ու անգէտ սրտաբուխ մաղթան բներով կր պանծացնեն անունդ՝ դասևլով քեզ մեր այնքան երջանկայիչատակ առաքեալներու կարդը, երբ հաւտտացեալն ու անհաւատն միանդամայն խոնարհելով պատկառազդու հաւտաքիդ եւ
այն հաւտաքին ներչնչած հոդեկան բարձրութենանդ առջև՝ հոդեպարար զմայլանքով մբ
կր վերլուծեն սրբավայել կենցաղիդ մէն մի անկիւնադարձը, ստորագրեալս՝ իբրեւ մէկ
խոնարհ եւ յետին անդամը քեզ ծնունդ տուոզ մեծ գերդաստանին, այս փղձկեցնող եւ
անօրինակ համակրական արտայայտութեանց ի տես չի կրնալով լուռ հանդիսատեսի մբ
դիրքին մէջ մնալ, կուղամ՝ կետնքիս սա վերջին հանդրուանին մէջ դուցէ վերջին պատեհութիւն մը այդ արտայայտութեանց միացնել նաև՝ ներկայ թոթով լեզուովս արտատեհութիւն մր այդ արտայանութեանց միացնել նաև՝ ներկայ թոթով լեզուովս արտա-

ՄՆալով միչտ կարօտ Սրբագան օրհնութեանցը, Աղօթարար արեւչատութեանդ եւ ի համրոյր Ս․ Աջոյդ ԲԵՐՈՒՁ ՑՈՎՀԱՆՆԵՍ ԴՈՒՐԵԱՆ

A. MIKAELIAN Candie, (Crète) 26, Luqualdphp 1929

U.d'h hwayworfer

8. 8. Եղիչէ Ս. Դուրեան Արժանընտիր Պատրիարը Առաքելական Ախոռոյ Ս. Երուսաղէմի

Ամենապատիշ Սրբագան Հայր.

Ձեր Սրբազնութեան Քահանայութեան Ցիսնաժեայ Յորելեանին տարւոյս վերջերը տեղի ունենալիջը վեր վար տարի մը առաջ ազգային թերթերու մէջ կարդացեր էի։

Այսօր Աթէնւքի «Նոր Օր»ի մէջ տեսայ յայտարարութիւն մը, որով կը ծանուցուի թե վազը Աթէնւքի մէջ պիտի կատարուի Յորելինական հանդէս մը, ի պատիւ Ձեր Ամեշ նապատուութեան Քահանայական Յիսնամեկին, և իրաւամբ կ'ենթադրեմ որ Երուսա- դէմի մէջ ալ դուցէ վաղուան օրը տեղի պիտի ունենայ Ձեր Սրբազնութեան արդիւնա- չատ և անբասիր Քահանայութեան Յիսնամեայ Յորելեանի փառաւոր հանդէսը, և կը փութամ իմ և իմիններուս ջերմադին չնորհաւորութիւնները մատուցանել Ձերդ Ամեշ նապատուութեան՝ արևչատութեան և բարօրութեան անկեղծ մաղթանըներով է

Ձերդ ՑԿԲ. ՄԻԲԱՅԷԼԵԱՆ

Ձահլէ, Լիբանան, 26 Հոկտ. 1929

Ամեն . Ե . Ս . Արջեպս . Դուրեան Առաջելաչնորհ Պատրիարջ Երուսաղէմ՝, Պաղեստին

U.J. U. 2mjp.

Մեզի համար անզուգական առիթ մըն է խնդակցիլ Ձեր Քահանայութեան Ցիսնամհայ Ոսկի Ցորևլհանին համար։ Այս առթիւ ընդունեցէջ նաև մեր անկեղծ չնորհաւորութիւնները։ Ձեզի երկար կհանչ և երջանիկ տարիներ ցանկանալով կը մաղթենչ տօնել նաև Ձեր ադամանդեայ Ցորևլհանը։

Մատչելով ի համրոյը Ս․ Աջոյդ ՄԱՆՈՒԿ ԳԷՐՋՈՒՐԵԱՆ

(Ժառանդաւորաց ուսուցիչ Կ. Ցարութիւնեանի հօրեղբայրը) ԱՌԱԶՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՑՈՑ ԳԱՀԵՐԷ Գահիրէ, 26 Հոկտեմբեր 1929

Ամենապատիւ 8. 8. Եղիչէ Ս. Արջեպ. Գուրեան Պատրիարը Հայոց

buncamptd

Ձեր քահանայական ձեռնադրութեան յիսնաժեակը, որ այսօր կը տօնուի համարդային գնահատանքի արտայայտութեւններու ժեք, արժանաւոր վարձատրութեւնն է որ ազգը կ'ընծայէ Ձեր Աժենապատուութեան, Ձեր բեղմնաւոր գործունեութեան համար և միևնոյն ատեն դրաւականը և տրիտուրը այն յարդանքին, որ ունի ազգը հանդեպ Ձեր Սրրագնութեան իրը գրչի ժշակի և աժենահմուտ բանասերի։

Դու ջ կէս դարու պատկառելի ժամանակամիջոցի մը մէջ, այս ազդին լեզուն ման_ ըաղնին կերպով ուսումնասիրեցիջ և անոր մատենագրութեան վերլուծումը կատարե

ցիք, խոր հմաութեամբ մը որ անհաւասարելի է։

Իրը վարդապետաց վարդապետ, իրը քահանայապետ, իրը պետ վանական հաստա տութեան մը, որ կրնայ լուսաւորութեան կեղրոն մը ըլլալ միայն և միմիայն Ձեր իմաշ տուն առաջնորդութեամբ, ազգը տակաւին Ձեզմէ կ'ակնկալէ բազմաբեղուն արդիւն բներ։

Մաղթելով որ ազդին բոլոր այս ակնկալութիւնները լրանան, Աստուածային օժան_ դակութեամբ, կը մատուցանեմ որդիական ակնածանացս հաւաստիջը։

U.PTU4 U.L.908U.ZbU.L



ԽሆԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ«**ՎԻԲԱՆԱՆ**»

ՉԷՋՈՔ ԵՒ ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹԻ

Beyrouth le 26 Lulin., 1929

Աժենապատիւ

Տ․ Եղիչէ Արջ․ Դուրեան Արժանընտիր Պատրիարջ Ս․ Յակոբեանց Առաջելական Ախոռոյ յԵրուսաղէմ՝

Ձեր Ամենապատուութեան Քահանայական յիսնամեայ գործունէութեան, զոր կը լուսապսակեն անբիծ անուն մը և սրբակեաց կետնք մը, յոբելինական հանդէսին առ թիւ, «Լիբանան»ի Վարչութիւնս կուդայ յայտնել իր ամենաանկեղծ չնորհաւորութիւնները, մաղթելով բարերաստիկ և երկար կետնք Ս․Ցակոբեանց Աթեուոյ արժանընտիր Գահակալիդ։

Համազգային խանդավառ ու աննախընթաց յարգանքը, որ յորելինական փառաւոր հանդիսութեամբ մը կը պսակուի, իրական վարձատրութիւնն է Ամենապատուութեանգ յիսնամեայ անրիծ ու անձանձիր նուիրումին։ Ցեղը հպարտ է Պատրիարքական զոյգ Ա- թուներով Ձեր Սրբազնութիւնը պատուելէ վերջ, այսօրուան գերագոյն յարգանքի մի- ջոցաւ յաւերժացնելով Ձեր անաղարտ անունը և ոսկեդարևան ոսկեղինիկ արժանիքը, որու անմահ յուչարձանները ըլլալու կոչուած են «Դուրեան Մատենադարանն» ու «Դուրեան Մատենաչարը»։

Բարերաստիկ օրերու մաղթան քներով և համրուրիւ Ս․ ԱՋոյդ Ի դիմաց

«Լիրանան» Հայաթերթի Վարչութեան 8. ՊԱԼԵԱՆ

(46bB)

ԵՐԱԺՇՏԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՑ ԵԿԵՂԵՑԵԱՑ Կ. ՊՈԼԻՍ

4 . Պոլիս , 26 Հոկտ . 1929 Բերա

U. d'Etim mumpe

8.8. Եղիչէ Ս. Արքեպսկ. Դուրեան Արժանընտիր Պատրիարը Առաքելական Մայր Ախոսոյ Սրրոյն Սադիմայ։

Ձեր Բարձր Աժենապատուութեան Քաչանայութեան Օիոնաժետկին առիքիւ այսօր Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ կատարուած Յորելինական հանդիսութեանց Պոլսոյ Երաժչտապետաց հետ մեր մասնակցութիւնը բերելէ վերջ, կուգանք յայտնել մեր ամեւնաչերմ չնորհաւորութիւնները, որդիական մաղթանքներով Ձերդ Աժենապատիւ Սրբաղ-նութեան երջանկարեր կեանք եւ արեւչատութիւն մաղթելով։

Համրութիւ Ս. Աջոյգ մնամ որդիական տկնածանօր ԲանկալԹիի Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ Երաժչտապետ ԳՐԻԳՈՐ ԿԻՒՄԻԻՇԵԱՆ



U. Strummunhe

Տ. Տ. Եղիչէ Ս. Արջեպսկ. Դուրեան Արժանընտիր Պատրիարջ Հայոց Ս. Երուսաղէմի յերուսաղէմ

Առաքելաչաւիղ Սրրագան Հայր

Ինչպէս Հայ. Առաքելական Ս. Եկեղեցեր տօները աչխարհի աժէն կողժերը ժիև_ նոյն Թուականին ու ժիևնոյն օրը կը տօնուին, այսօր ալ Ձեր Քահանայութեան յիս_ նաժեակը ուր ուրեք որ հայ ու Հայ Եկեղեցի կայ ժեծ խնդութեամբ կը տօնուի։

Սոյն յարգան թի իրաշամբ արժանի եղած էր Ձեր առաջելաչաւիղ գործ քերովը իբր ուսուցիչ, քահանայ, բանին կենաց քարոգիչ, եպիսկոպոս, առաջնորդ ու Հայ Եկեղե ցւոյ տոհմիկ Թարգմանիչ Ս.Վարդապետաց ճչմարիտ հետևող։

Ընդհանրապես Հայ Ազգիս, մասնաշորապես Ս. Ցակոբեանց միաբանուխեան յարդանքի ու ուրախութեան այս բարերաստիկ օրուան տօնին ի սրտէ մասնակցելով՝ կը փութամ խոնարհարար չնորհաւորել մեծ-Յորևլեարդ, մազթելով Աստուծմէ Ձեզի երկար ու առողջ կեանք ի չինութիւն Սուրբ եկեղեցւոյ, ի բարօրութիւն Ս. Սթոռոյդ եւ յօդուտ Ազգիս։

Մատչելով` ի համրոյր Ս. Աջոյդ և խնդրելով հայրապետական օրհնունիևաներդ եմ ու կը մնամ միչտ

26 Հոկտ. 1929 Աղէքսանդրիա որդիական ակնածանոք ՄԻՍԱԳ ԳԱԶԱԶԵԱՆ



U.d'ենապատիւ

8. Եղիչէ Ս. Արջեպիսկոպոս Գուրեան Պատրիարը Սրրոյ Երուսաղեմայ

Սրրազան Հայր․ Ձեր քահանայութեան յիսնաժետկը զոր հայութիւնը կ'ողջունէ այսօր, իսանդով և հրճուանքով կը լեցնէ ամէն ազգայինի սիրաը։

Յիսուն երկար տարիներ դուջ նուիրունցաջ այս ցեղին, ուսուցանելով, ջարողելով

և երկասիրելով։

Այն կենդանի կոխողները, Ձեր արժանաւոր աչակերտները, որոնք ի սփիւռո աչխարհի այսօր, սպասաւորելով ազգին և եկեզեցւոյ և որոնց նահատակ մեկ խումրը՝ իրենց արեամբ փոխարինեցին ի՞նչ վաստակ որ տածած էիք իրենց համար, այն հրաչալի քարողները որ Ձեր առանձնայատկութիւնն են և Ձեր գրական գոհարները, որ կր գարդարեն հայ դպրութեան բազմադան էջերը, Ձեր պանծալի անունը իրաւամը եւ անջինջ դրոչմած են ամեն Հայու սիրտը։

Այսօրուան պէս կը յիչեմ Իզմիր, ըսան տարիներ տոաջ՝ Վարդանանց տօնի հանդէսին Ձեր մէկ ատենախօսուիկենը, ուր ըսեր էիք իքէ՝ Ազգը ունեցած է բազում մե ծահարուստ անձեր, ո՞ւր է հիմայ անոնց յիչատակը, և սակայն դարեր կարեր անցեր է

և կ'ապրի Վարդանայ անունը, որովհետև ապրած և մեռած է ազգին համար։

Նոյնպես ալ գու ը, Սրրագան Հայր, յաւէտ պիտի ապրի ը Ձեր անրասիր եւ անձև

գիր հովիշի, հանձարեղ գրողի և ազգայեն գործիչի բարձր հանգաժան քով:

ի բոլոր սրտէ չնորհաշորելով Ձեր սոյն ոսկեղէն Յորելհանը, կը մաղվեն՝ որ բարձրեալը դեռ երկար տարիներ ամենայն առողջութեամբ պահէ պահպանէ Ձեր Թանկագին կեանջը։

26 Lulin. 1929, U.P. Lu.

Մնամ ջերմ համրուրիւ Ս. Աջոյդ Ամենախոնաբն Որդի ՅՈՎՀԱՆՆԷՍ Կ. ՄՍՐԵԱՆ

Ամենապատիւ

Տ. Եզիչէ Ս. Արջեպսկ. Դուրեան, Պատրիարջ Ս. Երուսադէմի

Սրբազան Հա՛յր,

Այս ի՞նչ բարի եւ նչանաւոր օր է այսօր։ Աժեն կողժե կուղան Ձեզ չնորհաւորելու

Ձեր քահանայութեան Յիսնաժեայ տօնին առթեր:

Արժանի էջ այս յարդանջին, վասն զի Դուջ աժէն ինչ թեղլուցիջ և Ցիսուսին ենտևեցաջ, 50 տարի վարդապետական պաշտոն վարեցիջ, սրրազան եռվիւ եղաջ, արդարութեաժբ, անժեղութեաժբ, մաջրութեաժբ կեանջ անցուցիջ, Ս. Երրորդութիւնը սիրեց Ձեզ եւ արժանացուց Պատրիարջական Աթեուին, առիկա ժեծ փառջ եւ պատիւ է Աստուծժէ։

Մենւք ևս, մեր բոլոր պարագաներով, մեծ և փոջը, կը յարդենւք և կը պատուենջ Ձեզ։ Գրիչս անկարող է յայտնել մեր զգացումները․ բայց Դուք, Սրրագան Հայր, կ՛րգգաք մեր սիրտը։

Այս զգացումներով կը փուխանչը չնորհաւորել Ձեր Սրրագնութեան անուան տօնը, Ձեր գահակալութեան տարեդարձը և Ձեր յիսնամեայ յորելեանը, և կ'ազօթենչը որ Բարերարն Աստուած պահէ զՁեզ ամէն տեսակ փորձութիւններէ, եւ կարողութիւն եւ երկար կեանչը տայ Ձեզ ւ

1929 Հոկտ. 26 Երիքով Համբուրելով Ձեր Ս․ Աջր Մնամ աղախին Սրրադնութեանդ (ՕՐ․) ՄԱՐԻԱՆԷ ՄՆԱՑԱԿԱՆԵՍՆ

Մարսեյլ Հոկա. 26

U. Stowayworks

Տեր Եղիչէ Արբեպիսկոպոս Գուրեան

bpacumq & d'

Սիրեցեալ Սրբագան Հայր.

Ձեր հաշատարիմ բարեկամը ջերմաջերմ չնորհաշորութիւններ կ՛ընկ Ձեր Բարձր Սր**րազնութեան** բարերաստիկ Յոբելեանին առթիւ, ո՞ մեծանուն գերյոբելեար, կը մաղթե Ձեց երկար կեանը եւ ամէն բարօրութիւն։

Ձեր Սրբազնութեան խոնարհ որգի ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵՍՆ

Ձեր Յորելեանին արգելը չրյլալու համար որոշեցի Յորելեանս յետաձգել 1930 Մայիսին։

Ամեն. Տ. Տ. Եղիչէ Ս. Արջեպսկ. Դուրեան Հայոց Պատրիարջ Երուսաղէմի

Ձեր Բարձր Սրրադնուխեան 50 ամեայ Յորելեանին առխիւ , իր որդիական բարեմաղ-Թուխիւնները կը մատուցանէ , համրուրելով Սրբագնուխեանդ Ս . ԱՋը , Աթէնք

26 Lulin. 1929

- 10000000

Ամենապատիւ Տեառն Տ․ Եղիչէ Արքեպիսկոպոսի Դուրեան Ս․Երուսադեմայ Սրզազան Պատրիարքին Ս․Ցակոբեանց Առաքելական ԱԹուռյն արժանաւոր Գահակալին

Ընթացողին զենտ ոտից վարդապնտի ճշմարտին,
Եւ առաջին Ս. Թարգմանչացն ոսկի գրիչ աշակնրտին,
Աստուածնղէն իմաստութեան ոսկներիրան քարոզողին,
Ներսիսի Ծնորճալւոյն չնորճօքն լի Հայրապնտին,
Նարնկացւոյն ոգւոմն անրիծ մաքրակննցաղ վանականին,
Պառնասայ վեճ բարձանց բնակիչ սրտախռով բանաստեղծին,
Հարցն Գողթան ծնունդ ընտիր բամբրահարին,
Լեզուաց բազմաց վարժ ի բարբառ լնգուագիտին,
Քնրթողաճօրն Մովսիսի մնրում հանգոյն պատմաբանին,
Մնխոնջ, անդուլ վաստակելոյն բազմահմուտ բանասիրին,
Փիլիսոփայ անյազթ աստուածաչունչ աստուածարանին,

Որոյ քահանայունեան գյիսնաժեայ Ցորելեան՝ համայն Ազգս Հայոց, Որ ի սփիշոս աշխարհի, Տօնէ այսօր ցնծունեամը,

Մատուցեալ հանդերձ ընտանեսը Ի համբոյր Հայրապետական Ս. Աջոյն, Որդիարար խնդրեմ՝ գօրհնութիւն հայրական։ Մ. ԿԱՊՐԱՇ

Պէյրութե, ի ԻԷ, աւուր ամոհանն Հոկտեմբերի, Թուականիս Հայոց ՌՅՀԹ U. Shanymape

8. 8. Եղիչէ Սրրագան Արջեպսկ, Դուրեան Արժանընտիր Պատրիարջ Ս. Երուսազէմի Երուսաղէմ

Մեծանուն Յորելեար Սրրազան.

Ձեր Բարձր Սրրագնուխեան Յորելեանը առիթը միայն կ'րնծայէ ինձ յայտնելու այն խորունկ պատկառանքն ու հիացումը զորս կը մնուցանեմ Ձեզ հանդէպ, սկսեալ Պէրպէրեան Վարժարանի մէջ Ձեր ունեցած այնքան օգտաչատ դասաւանդութիւներէն։

Աներկրայ եմ որ Ազգը կը տոնե իր ամենեն արժանաւոր և բացառիկ ու լուսաչող դեմ ջ մր ներկայացնող իր Մեծ զաւկին յորելեանը, որուն հանդիսութեանց ես ալ հետուեն կը մասնակցիմ բոլոր սրտովս, մաղթելով որ Ձեր Սրրազնութեան բարձր չուցը երկար տարիներ անպակաս ըլլայ ազգին վրայեն, սրուն բարորութեան նուիրեցիջ Ձեր անմատչելի միտջն ու անապական հոգին։

27 Zaljan. 1929

Մատչելով ի համրոյը Ս․ Աջոյդ Մնամ Ձեր երախտագէտ սանը՝ ՁԱՐԵՀ ՐԷԻՁԵԱՆ

Umputy, 27 Zalim. 1929

Բարձրաչնորհ

Տէր Եղիչէ Արջեպսկ. Դուրեան Սրբազան Պատրիարջ Հայոց Երուսաղէմի

Սիրելի Սրբազան.

Հաձեցէջ ընդունիլ մեր չնորհաւորութիւնները Ձեր Սրրազնութեան Յորելեանին առթիւ

Որդիս եւ ես համրուրելով Ս. ԱԶգ Ռ. ՇԱՀԻՆԵԱՆ

ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՑԱՆՁՆԱԽՈՒՄԲ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ (ԵԳԻՊՏՈՍ)

Alexandria, 27 2nhm. 1929 P. O. Box 285,

Պատ․ Կեդը․ Ցանձնաժողով Դուրեան Յորելեանի Երուսաղէմ

Ներկայիւս կը փութանք յայտնել Պատ․ Ցանձնաժողովիդ ԹԷ՝ Հայ Գիւղատնտեսականի Կեղը․ Վարչութիւնս․, ի պատիւ Սրրաղան Ցորելեարին․, այս տարի Եգիպտոսէ․, մեր նահատակ սերունդին չառաւիղներէն․, Միացեալ Նահանգաց երկրագործական համալսարանները ղրկուած հետևեալ երեք ուսանողները անուանած է «Դուրեան Սաներ»։

1. Պետրոս Նանիկեան՝ ուսանող Թեքսասի Երկը. Գոլենին մեջ.

2. Յակոր Յակորեան՝ ուսանող հիւսիսային Քարօլայնի Գոլէնին մէջ.

3. Մարտիրոս Թորոյեան՝ ուսանող Քօլօրատոյի Գօլէձին մէջ։

Վստահ են ը Թէ՝ հայ իսոնարհ և ազնիշ մշակներու անունով, հայ միտքի մեծադոյն և ազնուագոյն մշակին եղած յարդանքի այս անկեղծ արտայայտութիւնը, պիտի արժանանայ Նորին Բարձր Սրբադնութեան հայրական մասնաւոր դնահատանքին, մանա ւանդ որ այդ գիւղատնտես ուսանողները, երկրադործական ուրիչ ճարտարարուեստնե թու չարջին, պիտի հետևին նաև արդիական հաշարուծութեան, որ այնքան սիրական հիշգը հղած է Սրբազան Յորելեարին։ Մեծ յոյս ունինք որ «Դուրեան Սաներ»ը, որ պէս հմուտ հաշարոյծներ, մօտաւոր ապագայի մէջ, Հայաստանի տնտեսութեւնը պիտի յաջողին օժտել «Դուրեան» աղնոշացեղ թեռչնաղզիներով, ինչ որ հրճուտնքի ալիքաներով պիտի ողողէ մեծ հոգին հայրենասէր Առաքեային։

Սորին մեծարան քներով Ս. ՍՏԵՓԱՆԵՍՆ Ղ. ՓԱՓԱԶԵԱՆ ՄԱՄԲՐԷ Ծ. ՎՐԴ. ՍԻՐՈՒՆԵԱՆ Քարտուզար Գանձապահ Նախագահ (ԿՆԻՔ)



Հայր Պրիճժեն Նիս Եորքեն նաժակ մը ուղղած է Ս. Պատրիարքին, որուն մեջ կ'ըսէ Յորելեանի մասին.

— «Ծնողջո չատ գնահատեցին Ձեր դրկած պատգամը եւ իրենջ ալ բարեմադթեւթիւններ կ՛րնեն Ձեր Յոբելեանին առթիւ։

Շատ կը ցաւիմ որ Ձեզի մօտ չեմ, բայց պիտի յիչեմ Ձեր Ամենապատուութիւնը սեղանի առջեւ ազօթելով որ Աստուած Ձեղ մեզի պարգեւէ դեռ չատ մբ աւելի օգտա կար տարիներու համար»։



Ն. Ամենապատուունքիւն Տ. Եղիչէ Արջեպս․ Դուրեան Պատրիարջարան Հայոց Երուսաղէմ 1929 Հոկտ. 29 Երուսաղեն

Սիրելի և Պատուական Բարեկամո.

Ինձ համար չատ մեծ պատիւ մը եղաւ ներկայ գտնուիլ Ձեր Սրբազնութեան Յուրելեանին առիքը կատարուած հանդիսութեանց, որոնց մէջ իմ վրաս ամէնէն չատ տրապաւորութեիւն ընող և ամէնէն չատ նչանակութեւն ունեցող պարագան եղաւ Ձեր սուրը պատարագ մատուցանելը իրրև ջահանայ, թեափուր ձգելով պատրիարջական աթեուը։

thoppe withblefite upont sombout but

Երբ Ձեր Ամենապատուութեան կը մատուցանեմ իմ չնորհաւորուխիւններո ո՛չ միայն Ձեր ջահանայական ձեռնագրութեան յիսուն տարիները կր յիչեմ, — որոնց թիւին վրըայ չէ խնդիրը — այլ մա՛նաւանդ Ձեր հոգևոր առաջնորդութիւնը, Ձեր ժողովուրդին հովուուխիւնը որ գրաւած է Ձեր բոլոր կետնւքը։ Այս երկրի մէջ իմ անցուցած տարիշներու ընթացքին քիչ մը բան կրցայ սորվիլ այն ազդեցութեան մասին, որ արդիւնւք հղած է Ձեր կետնւքին։ Եւ ես վստահ եմ որ այս ազդեցութիւնը տարիներով պիտի ապրի չատ, չատ կետնւքիրու մէջ այս աչխարհի վրայ, տասնեակ տարիներով նոյն իսկ դարերով։

Թող Աստուած պահէ Ձեր կետևքը և կարողութիւն տայ Ձեզի չատ տարիներ ծա-

nungligne :

Prod. Ubgjhbrklik

Խորին յարգան քներով Ձեր Սրբազնութեան անկեղծ և խանդակաթ բարեկամ ԷՏՎԸՐՏ Վ․ ՊԼԷՉՖՕՐՏ



ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՑՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Lundur 1075

4. Anglin, 28 Lulin. 1929

U.d'h hanqampe

ատրը Տ. Տ. Եղիչէ Ս. Արջիալ. Գուրհան Արժանընտիր Գահակալ Ս. Ախոռոյն Երուսագեմայ

Ամասյա 26 ին , Շարախ օր , տոնեցինը հոս Ձեր Բ. Սրբազնուխեան եկեղեցական , ուսուցչական և դրական դործուներութեան լիսնամեակը փառաւոր հանդիսուխեամը և ժողովրդական խանդավառ ցոյցերու մէջ ։ Առաւօտուն Ս . Պատարագ մատուցինը Բերայի Ս . Երրորդուխիւն եկեղեցող մէջ , ուր՝ հակառակ անձրեստ օդին ու գործի օրուան , ներկայ էր երկսես խուռն բազմութիւն մր ամէն դասակարգէ , եկեղեցականներ , ազգ . երեսփոխաններ , Կրոնական և Քաղաքական ժողովոց անդամեներ , վարչական մարմիններ , մատուրականներ , ուսուցիչներ և ուսանողութիւն , վածառականներ , արձեստաւորներ , նւն , որոնք փուխացած էին իրենց ներկայութեամի իրենց յարդանքի ու մեծարանքի բաժինը բերել Սրբազան Ցորելեարիդ ։ Ի ժամու Ս . Պատարադի քարող խոսեցանք , բացատրելով օրուան տոնին նշանակութեւնն ու կարևորութիւնը ու Ձեր Բ . Սրբազնութեան արև չատութեան համար մաղթանքեր ըրինք , որոնց մատանակցեցաւ ժողովուրդը իր սրտառուչ «ամէնանրով ։ Ցաւարտ Ս . Պատարագի հոգենան պահան պաշտոն կատարուեցաւ Դուրեան դերդաստանի ննջեցելոց համար ։ Ապա Աղգ . Մատենադարանին մէջ տեղի ունեցաւ մասնաւոր ընդուններ ու խնդակցութիւններ ։

Ձեր Բ. Սրբազմութեան պատուական անձին հանդէպ ցոյց տրուած ժողովրդական այս անօրինակ համակրանքի ու ժեծարանքի արտայայտութիւնը ժատուցանելով Սրբագան Յոբելեարիդ, նաև կատարած կ՛րլլանք այն հաճելի պարտականութիւնը, գոր ժեշ ծայարդ Բրօֆ. Արրահաժ Տ. Յակոբեան, Աղդ. Ընդե. Ժողովի Ատենապետը, դրաւ ժեր վրայ նոյն օր Ադդ. Մատենադարանի ժէջ իր խօսած ճառովը։

Կրկնելով մեր ջերմագին մաղթան ջները, մնամ ջ ողջունիւ սիրոյ և մեծարանաց Աղօթակից Պատրիարջ Կ. Պոլսոյ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊՍ .

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՌՈՒՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՆԱՍՏԱՍ ՍՐԲԱԶԱՆԻՆ ՖՐԱՆՍԵՐԷՆ ՈՒՎԵՐՁԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ.

Ն. Ամենապատուութիւն Երուսաղէմի Հայոց Պատրիարջին

Ամենապատիւ Տէր.

Հովիւներուն երկնային Պետը հաճած է չնորհել Ձեր Քահանայութեան լիմնաժ ետկը, և մենք կը փութանք դալ Ձեր Աժենապատուութեան միւս հիացողներուն հետ՝ մասնակցելու համար ընդհանուր ուրախութեան և բերել Ձեղի մեր անմենաանկեղծ չընորհաւորութիւնները։

Ձեր հովուական դործունեութիւնը, լի՛ հռանդով ու նուիրումով, կը կրե հրկու հոդևոր ձիրջերու կնիջը, որոնջ իսկութիւնն են ջրիստոնեական ձչմարիտ կհանջին, այսինւին խորունկ իմաստութիւն և անկեղծ սէր։ Մէկ կողմեն եթե քրիստանեական սերը Ձեր Ամենապատուութիւնը սիրեցեալ հայրը ըրած է Ձեր հօտին— և այդ սէրն է որ այս վաղնջական վանքին կամարներուն տակ ժողոված է տարադիրներու բազմութիւն մը և խեղծ որրեր, վերջին պատերադժին դոհեր ամենքն ալ—, միւս կողմեն իմաստութեան ձիրքը, գոր Տերը պարդևած է Ձեր Ամենապատուութեան, Դուք ցոյց տուած էք աստուածարանական աշխատութեանց և վարդապետութեան մեջ, ինչպես նաև պատմութեան և գրականութեան փայլուն աշխատութիւններու մեջ, բանաստեղծական դործերու մեջ, որով չէր դադրած ձոխացնել հայ լեզուին ժառանդութիւնը։

Ձեր լուսաչող լայնաժտութիւնը, ինչպէս նաև Ձեր բարհսրաութիւնը ոչ ժիայն ան_ խզելի կապերով միացուցած է Ձեր Աժենապատուութիւնը Ձեր հօտին, այլ նաև Երու-

սաղ էմի բրիստոննեայ եկեղեցիներու ներկայացուցիչներուն։

Ռուս Օրթեստութս Եկեղեցին խորապես կ՛դգայ այն կապերը որջ դինւքը կը միացնեն Հայոց Եկեղեցուն. որովհետև ամեն ատեն երկու եկեղեցիներուն ճակատարիրը առհատարակ կապուած են իրարու, և այսօր ալ Հայոց Եկեղեցուն վարչական կեդրոնը կը դանուի մեր Հայրենիքի սահմաններուն մեջ, որ դրեթե Հայրենիքը եղած է Հայաստանի թշուտո ժողովուրդին։ Ինչպես միևնոյն աղետներ և միևնոյն անդոհներ, նոյնպես միև նոյն յոյսեր, դեպի առելի լաւ ճակատաղիր մը կը չարունակեն ամրապնդել Հայոց և Ռուսաց միութեան դիծերը։

Կը յուսանը Թէ Ձեր Աժենապատուութենան, ինչպէս նաև Հայոց պատրիարքութեան Ցորելհանին այս օրը բարերաստիկ նչան մը պիտի ըլլայ մեր փափաքներուն ու մեր բաղձանքներուն իրագործման և պիտի ըլլայ նախակարապետը ուրիչ Ցոբելհանի մը, երը որ մեր եկեղեցիները ազատուած ըլլան հալածիչներու և անաստուածներու լուծէն։

Թող Տէրը հաճի մօտեցնել այդ հասարակաց ուրախուխեան գալուստը՝ լիացնելով Ձեր Ամենապատուութիւնը իր օրհնութեամբ և չնորհէ Ձեղի երկար և երջանիկ տարիներ տեսնելու վերջին փրկութիւնը։

1929 Zulym. 28

bpncumg til

W

4. Jujhu, 28 Zulym. 1929

UTAUISHU UP-PEMEULONNI

U. Shangmape

8. 8. Եղիչէ Սրբագան Արջեպիսկոպոս Դուրհան Արժանընտիր Պատրիարջ եւ Գահակալ Սրրոց Յակոբհանց Առաջելական Ս. Ախոսոյն

յերուսաղեմ

Ամենապատիւ եւ Շնորհագարդ Սրբագան Հայրիկ

Հանուր Հայութեան կողմէ իրաշամբ և արժանաւորարար ամենուրեք տօնախմբուած Ձերդ Ամենապատուութեան Յորելիանական հանդիսութեանց ի Քաղաքիս ներկայ գրտնուիլը իմ կողմէ ևւս ամենաքաղցը ու նուիրական պարտականութիւն մը ըլլալով հանդերձ՝ չատ ու չատ կը ցաւիմ որ յակամայս թերացայ անոր մէջ, մի միայն իմ վերջերս ենթարկուած ծանր հիւանդութեանս պատճառաւ։

Բայց ակամայ պարտազանցութիշնա չէր կրնար արդիլել գիս զմնէ դրաշոր կերպով ներկայացնելու Ձերդ Բարձր Սրբագնութեան իմ որդիական աժենաանկեղծ ու յարդալիր չնորհաշորութիշններս Ձերդ Աժենապատուութեան արժանաւոր եւ պատուական Յոբելհանին առթիշ, ինչպէս նաեւ իմ սրտաբուղիս ու խոնարհ բարեմաղթութիւններս Ձերդ Աժենապատուութեան թանկադին արեչատութեան համար՝ ի փառո և ի պատիւ Առաջե-լական Ս. Աթոռին և հանուր Հայ Ազդին։ կը ներէ ը Սրբազան Հայր իմ, որ տկար գրիչս չէ՛ կարող արժանաշոր Թարդմանը ըլլալ իմ սրտագին զգացումներուս Ձեզ հանդեպ․ բայց հաշատացեր, պատոշական հայ-ըլլալ իմ սրտագին զգացումներուս Ձեզ հանդեպ․ ընթ Սրբազան չնորհագարդութեան թիկ Թէ իրը Հայ Ազգին յետին մէկ անհատը, Ձերդ Սրբազան չնորհագարդութեան հանդեպ իմ տածած խորին մեծարանաց, ջերմազին սիրոյ և հրախտադետ զգացմանց աշմենաանկեղծ հաշաստիչը մինչև սրանչացում ու հիացում կը տանին դիս իրաշամը։

Որդիական ակնածանօր եւ ամենախորին յարդանօր մատչելով ի համրոյը Ամենա-

պատուութեանդ Ս. Աջոյն և հայցելով Ձեր Աստուածահանոյ օրհնութիւնը,

Մնամ խոնարհ ծառայ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄՈՍՏԻՉԵԱՆ

CENTRAL SUPPROPURT

Philiad to 10, 28 Lulin. 1929

ዋንኮሀժէՎՕ, ሀበՖԻԱ ՊՈՒԼԿԱՐԻԱ

P/12 1364

U.ifh Townyworfic

8. 8. Եղիչէ Արջեպիսկոպոս Դուրեան Արժանընտիր Պատրիարջ Հայոց

Երուսաղէմ

Ամեն . Սրբազան Հայր .

Թոյլ տուէջ Ձեր մէկ կրտսեր աչակերտին յետիններէն մէկն ըլլալ՝ յայտնելու իր հիացումի ու պաշտումի խորունկ զգացումները Ձերգ Հայրութեան հանդէպ։ Մանկոււ խեննես մինչեւ այսօր Ձեր դէմքը կը մնայ տիտան մը եւ մտատիպար մը ցանկալի։ Եւ եթե օրուան հոգերը, ծանրատաղտուկ աշխատանքը, հևիհև վաղջը լուսաւորութեան գործին հտևէն արդելջ կ՛րլլան ինձ յաճախ դրելու Ձեր Ամենապատուութեան՝ Նոր Դարու Շնորհալիիդ՝ հայրական օրհնութեանդ ի խնդիր, լոյսի կարօտ աչջերս միչտ դէպի Ձեղ կը նային՝ Փարոսիդ։

Ինչպէս ամէն տարի, այս տարի ալ մանաշանդ, Թարդմանչաց Տօնին, Մեսրոպեան Ճեմարանին ալ տօնը դարձած, մեր սրահին միջ, մեր սաներուն, ուսուցչական կազմին ու ժողովուրդի ներկայութեան, հանդիսաւոր կերպով տօնախմրեցինը ե՛ւ Ձեր խնկելի տարեդարձը, կէս դարու դումարութիւն։ Սնդրին դոր կանդնեցինը մեր լոյսի տաճարին մէջ՝ եօթնարփեան թարդմանչաց եօթիը չնորհներով օծուն հայրութեանդ Պարթեև հասակն էր ան։

Հայրական օրհնութեանդ կարօտով,

Որդիական սրտարուի մաղթան,ջներով, եւ համրուրիւ Ս. Աջոյդ

Մնամ մին Ձեր յետին աշակերտներեն ԳԷՈՐԳ ՄԵՍՐՈՊ

THE ARMENIAN EVANGELICAL UNION OF AMERICA ՀԱՑ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՑԻ (ORGANIZED 1902) 30 Zulin. 1929

Ամեն . Տ . Եղիչէ Ս . Ար.թ . Դուրեան Արժանընտիր Պատրիար ջ Երուսաղէմի Երուսաղէմ , Պաղեստին

Ամեն . Սրբազան Հայր .

Ամերիկայի Հայ Աւետ․ Միութեեան եկեղեցիները այս մեծ երկրին մէջ, ուր որ հրնարաւոր եղաւ, Առաջելական Մայր Եկեղեցւոյ զաւակներու հետ, միասնաբար ու խանդավառօրէն, տօնակատարեցին Ձեր Քահանայութեան Յիսնամեայ Յորելեանը պատչան լբեզութեսամը, յանձին Ձեր պանժացնելով բարձր իմագականութիւնը, անրասիր կդերը և արժանաւոր մարդը, որ նդած է անձնուէր ուսուցիչը դպրոցներէ ներս, պերճախօս բարողիչը՝ բեմի վրայ և սրբակենցաղ հոգևորականը՝ կրօնական մարզին մէջ։ Ձերդ Սրբազմութեան անունով կացմակերպուած Յոբելեանակական բոլոր հանդէմները Ատլանդեանէն մինչև հաղաղականի ափերը տարածուած հայաչատ կեդրոններու մէջ արտայայտութիւնն էին այն անկեղծ յարգան քին ու հիաց քին զոր աժէն քո կ'զգան ք Ձևթ պայծառ ու խորհրդապալա անհատականութեան հանդէպ։

Սրտագին կը մաղ թենւը, որ Ամենաբարին Աստուած արևչատութիւն չնորեէ Ձերդ Սրբագնունեան, որ չարունակեր հոգևոր չունչով օծուն Ձեր բանաստեղծական ընարին լարերը թրթուացնել ներջնչութիւն տալու մեր հոգիներուն, Ձեր ձչմարտութեան պատգամիները պատգամել, Սիմնի լեռնէն, առելի ազգու չնչտերով ու տիրականօրէն, ու Ձեր արբանուէր կեան բովը օրինակը հանդիսանալ Ձեր հօտին , Ձեր բեղուն իմացականութեամբ ու բարեպաչտիկ հոգիին ցոլացումներով լուսաւորուելու, ազնուացնելու և բարձրացնե_ յու համար անոր այ միտ.թր, սիրտն ու հոգին ։

Որդիական ամենախորին յարգան ըներով h aprilug

Udbpfilaif Las Victor. Upne but Քարտուղար Ա. Ա. ԿԷՕՐԿԻՁԵՍՆ Նախագահ 8. Մ. ՏԵՓՈՅԵՍՆ



Phr 596

U.d'hanymmpe 8. 8. Եղիչէ Ս. Արջևպիսկոպոս Դուրևան Առարեյայնորե Պատրիարը Երուսագենի

Աժենապատիւ Սրբազան Հայ ը Ձերդ Աժենապատուութեան 50 աժեայ Քահանայական ու մշակութային Յորելեանի Տանգիսու թեանց սրտարուիս պատրաստակամու թեամբ մենւը եւս, Պուլկարիոյ Առաջնոր դուքշիւնս, Քահանայական դաս, Թեժական խորհուրդ, Սօֆիայի Թազական խորհուրդ, Ազգ. Վարժարանի հոգարարձուխիւն, Մեսրոպետն ձեմարան, մշակուխային, լսարանա_ կան, մարժնակրթական միութիւններ և Հայ հասարակութիւնը բերինք մեր մասնակցու թիւնը՝ ասնելով Ձերդ Սրրագնութեան Յորելանական հանդէսը։

Unacom մատուցմամբ U. Պատարագի դուաբանական մաղ խան բներ եղան Ձերդ Ամեն . Սրրազնութեան արև լատութեան համար . յետ միջօրեի , ջաղաքիս մէկ լջեզ սրանին մէջ հանդիսութիւնք կատարունցան, բանախօսութիւններ և խոր յարգանքի ար-

տայայտունիւններ տեղի ունեցան։

Այս առթիւ Թաղ. Խորճուրդս ի դիմաց Սօֆիայի ամբողջ Հայ ժողովրդեան կուզայ յայանել իւր որդիական խորին չնորհաւորութիւնները և կը մազթե որ դեռ երկար տա րինսեր ապրի Ձերդ Սրբագնութիւնը, և հայ միտջը, հայ գիրը և հայ բեմը դեռ ևս բախտն ունենայ վայելելու Ձերդ Հայրութեան օրհնարեր չնորհ բը:

Ակնաժական համբուրիւ Ս. Աջոլ Ամեն. Սրրազան Հայրութեան Ձերում

Մնամ բ խոնարհ որդի h դիմաց Թաղ . Խորհրդոյ 1.inthumpton Սահնագպիր ԱՐՏ. ՁԱՔԱՐԵԱՆ Ե. ՅԱԿՈԲԵԱՆ

3 Vajtifptop 1929 Uo \$pm

(White)



Մանչեսթերը 4 Նոյեմբեր 1929

U.d'hangampe

Տ. Տ. Եղիչէ Ս. Արջևոլս, Դուրեան Արժանընտիր Պատրիարջ Սրբոյ Երուսաղէմի յԵրուսաղէմ

Շատ սիրելի Սրբազան Հայր.

կը խորհիմ թէ՝ ի՞նչպիսի բառեր դանելով չարագրեմ նամակ մը, որով հողւոյս խոր ընթէն ըդիսած բոլոր զգացումներուս Թարդմանը ըլլայ, և այսպէսով միևնոյն ատեն պարտը մր հատուցած ըլլամ դերադոյն վարդապետի տիպար հետևորդին։

ձիչզը ըսելու համար Բարիզէն անցնելու պահուս էր որ իմացայ ձեր Թանկազին Սրրազնութեան դիմնաժետյ Յորելեանի ուրախասին լուրը։ Միջանկեալ կերպով ըսեմ թէ տարիներէ ի վեր հայ թերի մի կարդալու պատիւէն զրկուած եմ . ես որ Իզմիրի մէջ պրեթէ քան և հինդ տարիներ անընդհատ րոլոր մեր խերթերը կը լափէի, քանի մր տարիներէ ի վեր կամովին դադրած եմ, քանի որ բոլորն ալ կուսակցական խերթեր ըլլաւով, իրարու հանդէպ հայհուչներով լեցուն են, և տարակոյս չկայ որ՝ այդ խերթերը ենէ կարդալու ջանամ, պիտի ջղայնանամ ու հիշանդ պիտի ըլլամ, ահա այս է զլխաւոր պատձառը որ՝ Յոբելեանի աւհախոր այս վերջին օրերուս մէջ իմանալու բաղդն ուշնեցայ, և ահաւասիկ Մանչեսթիրկն կը չտապեմ գրկելու ներկայս, որպէսզի Ձեր Բարձր Սրրազնութեան հանդեպ հիացում ունեցողներու շարջերեն դուրս չմնամ։

Միրելի Սրբազան Հայր. ի տղայ տիոց դպրոցական գրասեղաններու վրայէն ժանկաւ կան անժեղունակ գոհունակութեաժը կը կարդայինքը Հայ. Ս. Եկեղեցւոյ ժեծ զաւակւներուն գրուած ըները. այդ բոլորն ալ ժեծ ախորժակով աչ ըէ կ'անցընէինք և գիրար կը լրացնէին Խրիժեան, Սլիչան, Սրուանձտեանց, Այվազովսքի, Մելք. Մուրատեանց, Օրժանեան և այլք ընդ նոսին, որոնց անունները ժի առ ժի չեժ յիչեր այս պահուս չեժ դիտեր որ՝ ասկէ յիսուն տարիներ յետոյ եկող սերունդին ժէջ պիտի կրնան գրտևնուր Հայ Եկեղեցւոյ րանիրուն ժշակներ, որոնք իրը հայ ժողովրդեան ծոցէն րարձրացած հովանաւոր սօսիներ իրենց չուրջը կարենան պահել բաղժահաղար հայութիւնը ի սփիւռո աչխարհի. այս հարցուժիս պատասխանելը խիստ դժուարին կացութեան ժէջ կը դնեն զիս։

1924-ի Ս. Զատիկը՝ Սիօնի բարձունքին վրայ ձեր բարձր և սիրելի Սրբազնուխեան հովանւոյն ներքև տօնելու բարերադդութիւնն ունեցայ. աչօք բացօք տեսայ գձեզ ձեր աշխատասենետկին մէջ շրջապատուած բարձրագոյն կարգի Ժառանդաւորաց աշակերտ. ներով, որոնց իրը մտքի լուսաւորիչ կը ներչնչէիք Գուրեաններու հոգին և դդացումները, և ես անձնապես պահ մը մխիխարուած էի ի տես այդ բարձր և գնահատելի ընթացքին, սակայն դարձեալ, միչտ դարձեալ սրտիս խորերէն հետևեալ հարցումը կ'ուղդեմ ես ինւրդինւթիս.

Յետ այսու ո՞վ պիտի պատմէ մեզի Ներսէս մեծ հայրապետին պարթե հասակը և փառջէ պսակը ո՞վ պիտի ներբողէ մեզի Սահակին գրիչն ու արցունջը ո՞վ պիտի ներբոչէ մեզի Մանդակունինն կուրծ ջն ու կրտկը, ո՞ր հայ եկեղեցականն է որ պիտի ուսուցանէ մեզի Ծնորհալիին ջնարն ու օրհնութիւնը. և ասկէ վերջը ո՞ր հայ եպիսկոպոսն է որ մեղի պիտի նկարագրէ Երիմեանին իրը հայրիկ դործելակերպն ու ժողովրդականութիւնը, և կամ ո՞վ մեզի պիտի ներկայացնէ Օրմանեանն իրը որւներէն մին Հայ. Ս. Եկեղեցող։

Բայց ի՞նչ ծարկ երկարարանել այս մասին, ես պիտի փափարէի որ ծայ ազգի բոլոր հաշատարիմ դաշակները ձեր քածանայութեան յիսնաժեակի յորելեանին առթիշ ռւխs մր դնէին իրենցմէ ծնունդ առած ծոգեհատորներու սրտերուն մէջ, այն է՝ ապագայ սերունդներն ևս արժանանային նորանոր Գուրեաններու Յորելեանները աշնելու և այդ րլյար առ յաւէտ։

Ահա, Սրրազան Հայր, Ձեր բարեպատեն Յորելեանվն առֆիշ իմ վերջին փափաջս ու մաղթանջս... Ձեր Հայրական Ս. Օրհնութիւններն խնդրելով

Հեր Հայրական Ս. ՕրհնուԹիւններն իներինք Միչա կը մնամ՝ Ձեր հարագատ իսնարհ սանը ԳՐԻԳՈՐ Պ. ՔՐՔՔԻՍԵԼԻ

Պընիկն, 7 Նոյեմբեր 1929

U.d' b'bunquinfic

8. Եղիչէ Ս. Արջեպիսկոպոս Դուրեան Պատրիարջ Հայոց Երուսաղէմի

U. Stebungumpe U . Zujp ,

Պընիէն զիւղին մեջ եօթեր տարիներե ի վեր Զուիցերիացի հայասերներու նուիրատուութեամբ ընթացող Հայ Դպրոցը երեկ «Ձորեքչարիի օրուան հաւաքոյի» անունով
ծանօթ իր ամսօրնայ մեկ հաւաքոյին ամբողջութենամբ յատկացուց Թարգմանչաց Տօնին
և Ձերդ Սրրազնութեան յորելեանին։ Այս առթիւ մեր սաներու կողմե արտասանութիւններ եղան Ձեր ոտանաւսը և արձակ գրութիւններեն, և մեր ուսուցիչներեն Տիկ. Գարմեն
(Իսկուհի Աշագեան), որ ատենօք Ձեր սանուհիներեն եղած եւ Ձեղ հետ միաժամանակ
պաշտօնավարած է Էսաեան Վարժարանին մեջ, Ձեր մասին կուռ բանախօսութիւն մը
ըրաւ, որմէ վերջ մեր 54 երկսես սաներու և 5 հայ ուսուցիչներու կողմեն միահամուռ
փափաք յայտնունցաւ երկտողով մը չնորհաւորել Ձերդ Սրբաղնութեան յոբելեանը։

Արդ, ներկայիւս կուդամ որդիական այդ անկեղծ զգացումներուն Թարդման հանդիսանալ եւ մեր չնորհաւորութիւններուն հետ ներկայացնել մեր ջերմ մադթանչըները

երկար ու պողառատ կեանքի մը համար։

Ձերդ խոնսորհարար ՆՇԱՆ ՊԷԿԵՍՆ (Տնօրեն Պընիենի Հայ Դպրոցին)

Փարիզ , 8 Նոյեմբեր 1929

U.d. L'un uyum on fre

8. Եղիչէ Արջեպիսկոպոս Դուրեան Պատրիարը Ս. Երուսաղէմի

bpneumg td ,

U.fbumumpe U. Zmjp,

Խորին երախտագիտութեամբ ստացալ Ձեր Ամենապատուութեան հեռագիրը, ի չը-

նորհաւորութիւն անուանակոչութեանս տօնին։

կ'օգտուիմ առիքէն, յայտնելու համար խնդակցութիւններս համազդային սիրոյ եւ համակրութեան այն արտայայտութեանց համար, որոնք տեղի ունեցան Ձեր Բահանայութեան յիսնամեայ Յորելեանի առթիւ, և ի սրտէ կը մաղթեմ Ձեր Ամենապատուութեան երկար ու բարերախտ տարիներ, յօգուտ եւ ի պայծառութիւն Ս. Աթոռիդ։

Մնամ որդիական խորին յարդանօք Գ. ՆՈՐԱՏՈՒԵԿԵԱՆ

Նորապսակ Տ. Տաճատ Եպիսկոպոս Պասմաճեան, Էջմիածինեն Կ. Պոլիս վերադառ Նալե հաջը, Ամեն. Ս. Պատրիարը Հօր ուղղած իր Նոյմբեր. 10 թեռւակիր անձնական Նամակին վերջը, հետևեալ տեղեկութիւնը կուտայ.

—«Ձեւդ Սւբազնութեան Ցիսնամեայ Յոբելեանը Եւեւանի մեջ soնեցինք ճամակիւնեւու բազմութեան մը նեւկայութեանը, կւկնեցինք մեւ աւտաբուղի խնդւուածքը առ Աստուած ու պաւզեւե Ձեզ՝ իմ սիւեցեալ Հոգեւու ծնողիս՝ եւկաւ կեանք եւ առողջութիւն, նեւկայիւս կը կւկնեմ իմ անկեղծ շնունաւուութիւննեւս մաջչելով պատկառելի Ս. Աջոյդ ճամբոււման»։

d. t. t. t. 1929

M. GARABEDIAN Antiquités GENEVE

> Ամենապատիւ Եղիչէ Արբևպիսկ. Դուրևան Պատրիարը Երուսադեմի

Uppurquite Acuncylisa,

ՍԻՈՆի վերջին Թիւէն տեղեկացայ վաստակաւոր Սրրազնութեանդ փայլուն Յորելեանի տոնաիսկութիններ։ Ձեր բոլոր աչակերտաց և ամբողջ հայութեան համար իւնդու խետան օր մըն է այդ օրը, որուն արձագանգը երկրէ երկիր կը տարածուի Հայ դադութ ներուն մեջ ։ Սրտագին կր չնորճաւորեն՝ մատչելով Ձեր Ս. Աջին և կր մաղթեմ երկար տարիներ ու առող կուքժիւն։

Արմայի Դպրեվան թի 1895/97 ի չրջանին Ձեր Քննադատական Ազգային Պատմութեան դասաշանդութիւններն ու բանաստեղծական գեղեցիկ պատկերներով լի քարոզները միչա խոր տպաւորութեան տակ պահած են գիս. հոն, այդ շրջանին էր որ մտաւոր ատաղձո

կազմունցաւ և հրախտապարտ կը մնամ Սրբազան Ուսուցչիս։

Ուրախութեամբ կարդացի այն լուրը գոր ՍԻՈՆ կուտար, ըստ որում Ազգ. Բարև րար մր ստանձնած է Մատենադարանի չինութեան բոլոր ծախջերը․ իմացայ նաեւ որ «Դուրեան Մատենադարան» տիտղոսին տակ հաւաքուած ժողովրդական նուիրատուու Թիշնները պիտի յատկացուին (տոկոսները) նոր հրատարակութեանց համար։

Արդ , արդեօջ աշելի նպատակայարմար և օգտաշէտ չպի՞տի րլյար եթեէ «Գուրեան Թանգարան» մը կազմուէը, հոն հաւաջելով մեր պատմութեան, գեղարուեստի և առ հասարակ մեր հին կեանքի նչխարները, որոնցմէ չատ Թանկագին բեկորներ կը գտնուին Տայ հարուստներու և մասնաւոր հաւա**ջածո**յ ունեցողներուն քով։ Մեր անցեալի այդ կենդանի վկաները չատ աշելի հետաջըջրական են մեզի և քաղաքակիրի ժողովուրդներու համար։ Հա՛յ թե օտար բազմաթիւ անձինը գրեթե ընաւ տեղեկութիւն չունին մեր անցեային նկատմամբ ու կր չփոխեն, յաճախ, մեր ընդունակ ցեղը, Ասիական ան մչակ ցեղերու հետ։ Վենետիկի փոբրիկ Թանգարանէն զատ ո՛և է Թանգարան չունինը. րայց բառական մասնաւոր հառաքածոյներ կան հայերու մօտ, որոնք հատիկ հատիկ ժողված են ու կը պահեն մինչեւ որ գոյութիւն ունենայ ապահով հայ թանդարան մը անոր նուիրելու համար։ Օտար Թանգարաններու մեջ ցանցառ նմոլչներ կան բոլոր Եւրոպայի մէջ, որոնը կարելի է ետ առնել և գետեղել մեր հայ Թանգարանին մէջ, փոխանակելով Եւրոպական կամ Արևւելեան հնութենանց հետո

Քանի մը կտոր հայկական հնուխիւններ ես ալ ունիմ գոր չեմ՝ ձեռքե հաներ՝ հակառակ որ հնագիտութեան վաճառականութեամբ կ'զբաղիմ։ Միչտ յոյս ունէի որ հայ թեանդարան մր պիտի ունենանւք օր մը և անոր պիտի նու իրեմ այդ հետա,քրքրական նչխաբները։ Այս հոգեբանութեամբ չատ հայեր կան Եգիպտոս, Բարիզ և Լօնտօն, որոնց քով աշելի հոյակապ ճմոյչներ կան մեր անցեալին վերաբերող ։ Ուրեմն , Սրբազա՛ն Ուսուցիչս , չատ յարմար առիթիլ չէ՞ արգեօք, հիմա, ըննելու եւ իրականացնելու չատ մը հայերու այս երա՛զն «Գուրեան Թանգարան» տիտղոսին տակ․ չատ աւելի անման անուն մբ պիտի թլլայ Գուրեան անունը կապելով իրեն՝ այսինքն Ազգ․ քննագատական պատմութեան հեղինակին անունը Թանզարանին հետ միացնելով ւ

Չմոռնամ ըսելու որ հայ և օտար այցելուներու համար չափազանց հետա,քր,քրական պիտի րլլայ այցելել հայ Թանգարանը կիրակի եւ տօն օրերը 0,50 չիլին եւ լուր օրերը մեկ շիլին մուտքով:

Կրկին չնորհաւորելով Ձեր բեղմնաւոր Յիմնամեակը կը համբուրեմ Ձեր Ս. Ա<u>ջ</u>ը։ Մ. 40.00.96860.6



BORULUU ԲՐՕԴ. Կ. ԹՈՒՄԱՄԱՆԻ ՏԻՍՆԱՄԵԱՑ ԿՐԲԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՑԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԲԵԱՆ PROF. G. TOUMAIAN JUBILEE COMMITTEE [Suite 404] 276 Fith Avenue NEW YORK, N. Y.

ъпр. 11, 1929

Աժեն. 8. Եղիչէ Արքեպս. Դուրեան Պատրիարք Երուսաղէժի Պաղեստին

Աժեն . Սրրագան Հայր .

Բրօֆ. Կ. Թումանանի Ցորելեանի (որ տեղի պիտի ունենայ 1930 ին սկիզբները) —
Կեդրոնական Ցանձնախումբը Ձեր քահանայագործութեան Ցիսնամետյ Ցորելեանին առ_
թիւ, որ տեղի ունեցաւ երէկ ի քաղաքիս հանդիսաւոր շքեղութեամբ, կը փութայ չընորհաւորել Ձեր Սրբազնութիւնը, և կը մաղթե որ Ամենաբարին Աստուած չնորհէ Ձեզ
երկար ու երջանիկ տարիներ՝ իրը նոր Լուսաւորիչ՝ չարունակելու Ձեր վսեմ գործը, և
հողենորող պատղամներով ներչնչելու մեր սիրելի ազդը Սիօնի երկնամերձ բարձունքեն,
և քաղցը խրախոյս և հղօր ազդակ ըլլալու Հայ նոր սերնդեան հետևելու Ձեր լուսաչաւիղ հետքերուն։

Մատչելով ի համբոյր Ձեր Աջոյն Ամենախորին յարգանօջ ՓԱՌՆԱԿ ԻՍՔԷՆՏԷՐԵԱՆ Ա. Կ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ Ատենադպիր Ատենապետ

598 MADISON AVENUE NEW YORK 11 ใหญ่ให้สุดสุด 1929

Ամենապատիւ Տէր Եղիչէ Արջեպիսկոպոս Դուրեան Պատրիարջ Հայոց Երուսադէմ

Ամենասիրելի Սրրազան Հայր իմ.

Երէկ՝ զմայլելի աշնան օրով մը, հունձ քը կատարեցինք Նիւ Եորքի Հայոց սիրտերուն մէջ Ձեր Սրրազնութեան հանդէպ ուռմացած հիացման ու սիրոյն։ Իրրև ՅորելիՑանձնաժողովի անդամ և Ձեր Սրրազնութեան հինաւուրց հիացող, հանդէսին մէջ պատենութիւն տրունցաւ զգացումներուս հրապարակային արտայայտութիւնն ընելու։ «Խ
խորոց սրտի» քանի մը խոսք գրած էի, անոնք կարդացի, աւա՞ղ որ — ունկնդիրներու
միսիթարական փաղաքուշ խոսքերուն հակառակ — այն տպաւորութիւնն ունկցայ որ
«ադամանդէ պալատին՝ խեցիէ դուռ չինեցի...», ես որ սիրտիս ամէնէն նուիրական
խորչերուն մէջ պիտի ուղէի սուղուիլ, հոնկէ մարդրի՝ տ դուրս բերելու Ձեզի համար...։

Թոյլ տուէ՝ թ որ հասարակաց հանդիսութեանց մասնակցելէ վերջ, առանձնապես ևս չնորհաւորեմ Ձեզ այս երկտողով,— կ'ենթագրեմ թե նամակներու դեզի մը առջև կը գտնեք դուբ Ձեզ այս օրերուս, և հետևարար կարձ գրելը Ձեզ սիրելու ապացոյց է,—
ու մաղթեմ որ դեռ չատ ու չատ տարիներ Ազգն ու Եկեղեցին վայելեն Ձեր ներկայութիւնը, և դուք ալ հրձուիք անոնց երախտագիտութեամբ ու սիրով։

կր համրուրեն Ձեր Ս. Աջը, և Ձեր անուչ ժպիտին ու օրհնութեան կարստով, կը

Moud միջա Ձեր Սրրագնութեան անձնուէր.

BUARE ULSALBUL

Վալանա, 12 Նոյ. 1929

Գերաչնորհ.

8. 8. Եղիչէ Ս. Արջեպսկ. Գուրեան Պատրիարջ Հայոց Ս. Երուսաղէժի.

Սրրազան Հայր. Ներեցէջ ինձ, որ իմ անկեղծ չնորհաւորութիւններս ու իմնդակցութիւններս յայտ Նեմ Ձերդ Սրբազնութեան, Ձեր արժանաւոր գործունէութեան եւ 50 ամեայ Յոբելինա կան տօնախմբութեանդ առթիւ։ Արդարև հայ ժողովուրդը դիտէ գնահատել Ձեր Սրրազ նութեան ձիրջերն ու բարեմասնութիւնները։

կը մաղթեն՝ որ մեր երկնաւոր Հայրը անսասան ու անչարժ պահէ Հայ Առաջելական Ս. Աթեուը, եւ անոր պահապանը հանդիսացող Ս. Պատրիարջին երկար կեանջ ու առողջութիւն պարդեւէ. վասն գի հայ ժողովուրդը պէտք ունի լուսաւորիչներու եւ աշ նոնց աւանդը պահող հոգեւոր հայրերու։

Մատչելով ի համբոյր Ս․ Աջոյդ Ձեր խոնարհ ծառան, ՊՍՍԿ․ ՔՀՆՅ․ ՍԱՐԳԻՍԵԱՆ Հոգևոr նովիւ Վալանսայի թեմին, Ֆրանսա.



Պարիզ , 20 Նոյ. 1929

Սիրելի Սրբազան Հայր. Ընդունեցէ, ը, խնդրեմ, իմ ալ ջերմազին չնորհաւորութիւնները ու ողջոյնները Ձեր գրական և հանրային գործունէութեան յիսնաժեակի առթիւ։ Ուչացայ. տկար էի. նեւ րողաժիտ եղէ,ը։

Մաղթելով Ձեզ երկար կետևը և առողջութիւն, մետո

Խորին յարդանօք Ձերդ ՄԻՔ. ՎԱՐԱՆԴԵԱՆ



Фшрфа, 21 Ъпзый. 1929

Աժենասիրելի Սրբազանո

.... Ուզեցի յիչատակներէս քանի մը էջ գրկել Յորելինական Հատորին համար, կամ քերթուած մը, որ դար իմ անհուն հիացումս արձագանդել Սաղիմական երկինքին տակ։ Բայց ... ահաւասիկ չեմ համարձակիր չփոթահար երգ մը լսել տալ։ Ու չա՛տ հեշ ռու էք, որպէսդի գրելէ առաջ, երջանկութիւնը տայի ինքզինքիս Ձեզի ներկայանալու

և ըսելու, Ձեր մեկ հրաչալի եջը վերյուչելով.

_ «Մե՛ծ վարդապետ, աղուոր ա. բ. գ. էդ դաս մը տուր խնձի»։

Բառերէն աւելի սրտառուչ, անոնցմէ աւելի թանկազին բան մը ունիմ սիրտիս մէջ. զգացումներուս բովանդակ մերկ անկեղծութիւնը, զոր ո՛չ մէկ քերթուած պիտի կարենար հաղուեցնել։

Կը խնդրեմ, Ամենասիրելի Սրրազան, որ պատիւր ընդը ընդունելու գայն, Ձեր մեծ

Buptilanilia multher

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

With humaning

8. 8. Եղիչէ Ս. Արջևպս. Դուրեան Պատրիարջ Հայոց Երուսաղէմի

bpneumg til

Դաւառական Վարչութենան Քաղաքական Ժողովս, որդիական ակնածանօք մատչև_ լով ի համրոյր Ձեր Ս. Աջոյն, կր ներկայացնե իր չնորհաւորութիւնները և ինդակցու_ թիւնները Ձերդ Աժենապատուութեան քահանայական յիսնաժետկին տոքիւ, որ ժիևնոյն ատեն յիսնաժետկն է Ձեր հանրային, գրական, ուսուցչական բազմարեղուն դորժունե_ ութեան։

Ձեր մտաշոր գերակչոութեամբ, խոր հմտութեամբ, անժխտելի տաղանդով, այս Ազգին գուրգուրանքին առարկան եզած էջ, նոյնիսկ Ձեր երիտասարդութեան օրերէն և Ձեր ասպարէզի սկզբնաշորութեան չրջանէն, և այսօր իրը պետը՝ Միարանութեան մը որ կոչուած է ազգային վերակազմութեան դործին մէջ կարևոր դեր մը կատարելու, Ձեր բարձր հովանաշորութեամբ և հայրական խնամջով, բովանդակ ազգին յոյսը կը ներկայացնէջ։

Ազգը Ձեզմէ կ'սպասէ իր Եկեղեցիին ամրապնդումը, իր դարաւոր գոյութեան միակ սիւնը, իր տևականութեան դլիսաւոր ազգակը, իր լեզուին և մատենագրութեան հետ, որուն ևս մեծ մչակներէն մին հանդիսացած էր Դուր։

Այս բարերաստիկ առնիւ Ներկայացնելով Ձերդ Աժենապատուունեան ժեր ջերժ չը_ Նործաւորունիւնները և ժեր յոյսերը՝ Ձեր նոր ու արդիւնաւէտ աչխատունիւնները վա_ յելելու,

Մնամ ը որդիական ակնածանօք

Ի դիմաց Քաղ. Ժողովոյ Ատենադպիր Ատենապետ ՄԻՔ. ՆԱԲԱՆԵԱՆ Կ. Գ. ՍԷՖԷՐԵԱՆ

ԱՌԱՋՆՈՐԳԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԵԳԻՊՏՈՍԻ

P/1 1143

U. Shimmymmhre

8. 8. եզիչէ Ս. Արջեպոկ Դուրեան Արժանընաիր Գահակալ Ս. Ցակոբեանց Առաջելական Ախոռին

Երուսաղէմ ոհաւորուԹիւններ

Վիձակիս Կրօն. Ժողովը կուդայ խոնարհարար իր ջերմազին չնորհաւորութիւնները ներկայացնելու Ձերդ Ամենապատուութեան քահանայական յիսնամեակին առթիւ, մաղթեկով Ձեղ երկար կեանք եւ արևչատութիւն, որպէսզի հայ ժողովուրդը տակաւին երկար տահն կարենայ վայելել Ձեր բազմաբեղուն արդիւնքները, ի փառս և ի պարծանս
Հայ Առաքելական Եկեղեցւոյ, որուն սիւներէն մին էք, ոչ միայն իրը անոր Նուիրապետութեան կարեւորադոյն դէմքերէն մին և Առաքելական Ախոռի մը իրը Գահակալ, այլ
իրը վարդապետ եւ ուսուցիչ բաղմաթիւ պատրաստուած եկեղեցւոյ մշակներու, ղորս
երբեմն մարդեցիք յԱրմաչ եւ այսօր կը հրահանգէք յԵրուսաղէմ։

Դուք Ձեր կեանւքով հանդիսացած էք իսկական վարդապետը, եւ այսօր Հայ եկե ղեցույ Նուիրապետութիւնը Ձեզի կը պարտի իր ամենեն կարող հովիւները, որոն ը ա

ռաջնորդելու կոչուած են հոգեւորապես այս ժողովուրդը։

Հայ ժողովուրդը՝ այսօր յիչատակելով Ձեր իբը եկեղեցական կէս դարու բաղժար դիւն դործունէու թիւնը, հրախտագիտական պարտը մրն է որ կը հատուցանէ և Հայ ե կեղեցին ու անոր պաչառնեունիւնը պետը չէ մոռնան այն մեծ ծառայունիւնը գոր Գութ անոր մատուցիք, իրը անոր կետևքին եւ կենսունակունեան մեծ գործաւորը։

Մատչելով որդիական ակնաժանօր ի համբուր Ձեր Ս. Աջոյն և ներկայացնելով կրկին

մեր չնորհաւորու թիւնները և իրը եկեղեցական մեր երախտապարտու թիւնը,

Մնամ ը՝ խոնարհ որգիք Ձեր

Uhamil p Apolimbul Jugaday Auspoth ՂԵՒՈՆԳ ՔՀՆՑ. ՏԵՐ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ, ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՀՆՑ. ՍԱՐԳԻՍԵԱՆ ԴԱՒՒԹ ՔԱՀԱՆԱՑ, ԱՐՇԱՒԻՐ ՔՀԵՑ. ՎԱՐԴԵՐԵՍԵՍՆ



ԱՌԱՋՆՈՐԳԱՐԱՆ ՀԱՅՈՑ **LAHMSUNH** Phr 1150

Ս,ժենապատիւ

S. S. bylet U. Upptaul. Porplain Պատրիարք Հայոց bracumgto

Ձերդ Աժենապատուութեան քահանայական ձեռնադրութեան յիսնաժեակին առթիւ Գահիրէի Թեմական Ժոզովը կուգայ իր ջերմագին չնորհաւորութիւնները յայտնել Սրրրազան Յորելեարիդ, որ իրբ Պետ Ազդային Նուիրապետութեան աժէնէն կարևոր աթեռո ներէն մէկուն, իրը բազմանմուտ մատենագիր և խորաքնին բանասէր, կր պատկանիք համայն հայ ժողովուրգին և Ձեր Ցորելեանը համազգային տօնակատարութիւն մ'է, «րուն ժեն ը ևս կր բերեն ը ժեր մասնակցութիւնը, իբր Գահիրէի հայ ժողովուրդին ներկայացուցիչ մարմին։

Թեմական Ժողովս, սրտադին չնորհաւորելով Ձեր յիմնամեայ գործունէութեան այս երջանիկ տարեդարձը, կը մադթե Ձեզ երկար կեանը, որպեսզի միչտ բարձր հովանիի տակ պաներ ու պանպաներ Ս. Ցակոբեանց Աթուր, և դայն դարձներ մտաւոր լուսա-

ւորութեան կեդրոն մր և ազդային զարգացման վառարան մր։

Մատչելով ի համրոյր Ձեր Ս. Աջոյն P gliding Philippin dagaing U.mbhang app U.mli Lunglem 9. U. ... L. 9. Phahabut



ԳՈՒՐԵԱՆ ՅՈՐԵԼԵԱՆԸ ՊԷՐՊԷՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՋ

Պէրպէրեան Վարժարանի մէջ Գուրեան Յորելեանը տեղի ունեցաւ ի ներկայութեան Ազգ - իչիսմութեան անդամներուն , Պէրպէրեան Վարժարանի հնամակալութեան և ընտիր խուռն բազմութեան մը ։

Գահիրէի Դուրևան Յորելինական հանդիսութեանց այս նակօրեակը (Շաբաթ երեկոլ, Հիտոք. 26) բացառ Պրն. Ծննիկ Պէրպէրեան՝ որ նախ ոգնկոչնց մեծ անուն Յոբելեարին փա_ ոտւոր դիսնաժետյ գործունեութիւնը իր նորօրինակ նկարագրին ժեջ։ Ապա Պ. Պերպերեան թանի մը ընդհանուր գիծևրով ներկայացուց Ս. Յորելեարին անձը։ Ըստւ որ կարելի է ճարցնել թե, այդ անձին մեջ բանաստե՞գծն է որ բերած է կրոնքի միստիք գիտակցութիւնը թե ոչ միստիք ապրումի ծնունց է հոն բանաստեղծականութիւնը: Կրոնքի մարդն է Գութ. եան, որովենաև բանաստեղծն է, թե ոչ բանաստեղծն է, որովենտև կրձևրի մարդն է։ Այս հարցումը ցոյց կուտայ թեէ գժուար է դատել Գուրեանի անձին մէջ այս երկու գիճակները։ Երկու այս վիճակներուն մէջ ան միևնոյն սիրոյ յայանատեսութքիւնն է որ ունի է Այս յայտնատեսութինենն է, որուն կը համնի, որ ներչնչարանը կ'րլլայ այս իր գոր... ծուներութեան սկզրուն թին , այսին թն համերաշխութեան սկզրուն թին։ Ու Պ. Պէրպերեան յիչեց Պատրիարջին մէկ բերթուածը, «Անառակը», որուն մէջ Դուրեան ոչ թե Անեծքին կու տայ ուղղիչ արժեք մր այլ Օբննուրեան։ Պ. Օ. Պերպերեան վերջացուց իր խօսքերը հուսկ ուրեմն ցոյց տալով նոյն սջանչելի միութիւնը որ Դուրեանի անձը կը կազմէ երբ այդ անձր սիրոյ մեջեն կր ճանչնայ գեստուած, ենոր սերն է որ կերդե և ենոր սերուն է որ կը տենչայ մարդոց ներդաչնակութեան գործը կատարել։ Բացման այս խօռքերը աշար տելէ առաջ Պ. Պերպէրեան ցաւ յայտնեց Թէ կը պակսի բարձրայնորհ ներկայութիւնը *թեմին Ս.* Առաջնորդ Հօր, որ ամենայն իրաշամբ հանդիսացած է աշագ աշնակատարը Գուրեան Յորելեանի ու յարդանքի ցոյց մր կատարեց հանգէպ Թորգոմ Սրբադանի։

Ապա Վարժարանին հրդչախումբը քառաձայն հրդեց «Տէր կեցո դու գնայտ» մաղ*խանթը*, որուն՝ հասարակու ֆիւնը յունվայս ունկնդրեց. ուրկե վերջ խօսք առաւ Պ. Շա-հան Պէրպէրհան որ ներկայացուց Գուրեանի մէջ եկեղեցականը, բանաստեղծը, հմուտը և ուսուցիչը։ Ինչ որ, ըսաւ Պ. Շ. Պէրպէրեան, այգ գանագան մարդերուն գրոչմ կու տայ՝ թանաստեղծի այն խորունկ նկարագիրն է գոր Գուրեան բերած է այդ ամէնուն մէջ։ Գուրեանի հմտութիւնը, ըլլայ ան կրմնի և պատմական գիտութեանց կամ բանա_ սիրական, կը Թափանցէ իրերու իսկութեան ա՛յն Թափով որ բանաստեղծ հոգիի մր միայն յատուկ է. եկեղեցականը իր մեջ բանաստեղծական սառառնումի մր պահուն է որ կը րարձրանայ հաշտարի միստիր դդացումին ու սիրոյ յայտնատեսուԹետն, և երբ ան կր գործէ, կը մնայ ան միչտ եկեղեցող պաշտոնեան, հաւատրին մէջ յայտնատեսած սէրը գործածելով և իր բովանդակ գործունէունիւնը ընելով քահանայագործունիեն մբ։ Պ. Պէրպէրհան վերջապէս խոսեցաւ Դուրհանի բանաստեղծութեան վրայ։ Յաճախ ձևր, րսաւ , կ'սպասէ իր խորջին . Գուրեան բանալով կապան ըները իր ներչնչուժին , որ իր հոգիին մէջ կը մնար իրը ժառանդութիւնը իր մեծ եզբօր, կրցած է հոսեցնել իր բո_ վանդակ խորջը ձևին մէջ, եռն մարմնաշորելով գայն։ Այսպէս է որ Դուրեանի ձևր հա մակ ռիթմ է և սարսուռը ունի բանաստեղծական ներաչխարհին։ Այսպես է որ Գուրեան ոճի մր կը հասնի կրօնական բանաստեղծութեեան մէջ ու ոճի մր նոյնպէս Հայ Քարոգին մէջ, քանի որ Բանաստեղծութիւն ու Քարոզ երկու ձևեր են, որոց մէջ իր խորքը կ՛իջևանի։ Եւ այսպէս է որ Գուրեան կը վերակենդանացնէ հայ կրձնական ըա Նաստեղծութիւնը և հայ քարողը։

Այս գեղեցիկ բանախօսուխենեն յետոյ աշակերտները արտասանեցին մեծանուն Յորելետրին բանաստեղծական գործ էն էջեր, որոնց զգլխիչ տպաւորութիւնը կրեցին ներկաները։ Վերջապէս երգչախումբը քառաձայն երգեց երգ մը ի պատիւ հայ լեզուին, քանի որ Սրբազան Յորելհարը իր խօսքով և դրչով այդ լեզուն անդամ մը ևս մեծարելի ըրած էր, և ի պատիւ Հայ Եկեղեցւոյն, որուն Սրբազան Յորելեարը ընծայած էր իր յիսնամեայ առաքելատիպ քահանայութիւնը, երգչախումբը երգեց «Էջմիածին ի Հօրէ» չարականը։ Ք․

ՅՈԲԵԼԵԱՆԻ ԱՌՔԻՒ ՄԱՍՆԱՒՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՔԻՒՆՆԵՐ

Ամեն . Մ. Պատրիարջին Յորելեանին առնիւ հայ մամուլը, ամեն կողմ, համազգա_ յին գնահատան թին արձադանդը նզաւ : Բոլոր Օրախերիքեր եւ Հանդեմներ եւ պարրերա կական ուրիչ հրատարակութիւններ խմբադրականներով մասնաւոր ուսումնասիրութիւն. ներ և յօղուածներ նուիրեցին Սրբազան Յորելեարին անձին և կատարած գործին և այոպես համալունչ արտայալտեցին հայ ժողովուրդին զգացունները եւ հայ մտաւորակա նութեան գատաստանը հանգէպ Ցորելեարին եւ Յորելեանին։

Այս հրատարակութիւններուն մեն առաջին տեղը պետք է տալ ՆՈՏԱՐին ուսում_ նասիրութեան Եգիպտոսի ԱՐԵՒ Օրաթերթին մեջ։ Ցորելեանի յայտարարութենկն անմի ջապես հարը սկսաւ հրատարակութիւնը ՆՈՏԱՐին ընդարձակ ուսուժնասիրութեան, և դեռ կը չարունակուի։ Առաջիկային առանձին հատորի մր մեջ պիտի ամփոփուի այդ ու

սումնասիրութիւնը, որ անժրցելի պիտի մնայ իր տեսակին մէջ։

Բաբգեն Եպիսկոպոս *հրատարակեց Ամե*ն. *Յորելեար Սրրազանին կենսադրությ*իւնը, Նիւ Եորջ, ԿՈՉԵԱԿի տպարանեն, ծանօխացնելու համար Յորելեարը Ամերիկայի հայաւ Թեան և քավալերելու համար հանգանակութիւնը ի նպաստ Գուրեան Մատենադարանի։

Ամերիկայի մէջ ուչագրաւ հրատարակութիւն մր եզաւ Ֆրէզնօյի Փաrnuին բացառիկ թիւր, ամբող ջովին նուիրուած Սրբագան Յորել ևարին անձին և գործ ին ուսու մեասիրու թեան, որուն մեջ առիւծի բաժինը ստանձնած էր Քալիֆօրնիոյ Առաջնորդ Գեր. S. Գարեգին Սրրագան, վերլուծելով Յոբելեար Գուբեանի բանաստեղծական արուեստը։

Պոստոնի Հովիշ Հոգ . Շահէ Ծ . Վ . Գասպարեան , ՓՍՐՈՍ ի մեջ իր հրատարակած աղուոր յօդուածէն դատ, յօդուածներու չարը մբն ալ հրատարակեց Պոստոնի ՊԱՅՔԱՐ Օրաթերթին մէջ, նուիրուած Սրբազան Յորելեարի անձին եւ գործին մեկնութեան,

դգայուն դատողութեամբ մր։

Կ. Պոլսի ՀԱՅ ԽՕՄՆԱԿը բացառիկ թիւ մը հրատարակեց Յորելե**անի յիչատակի**ն, աբ₋ ժէջաւոր ուսուննասիրութիւններով։ ՀԱՅ ԽՕՄՆԱԿին Արժանաչնորե խմրադիրը, 8. Չարմայր Աշագ Քահանայ Կէդիշրեան և իր մեծայարգ աշխատակիցները չատ գեղեցիկ դործ մը կատարեցին տուեալ պայմաններու մէջ։ Կ. Պոլսի հայ մամուլի կողմէն եղած այս ագնուական ժեսբը, Կրոնաթերթի մր միջոցաւ, ինկարոյը ընժայաբերութիւն մրն է Կ. Պոլսեցի Սրբագան Յորելեարին համար։

Տիար Այոտ Բ. Քէլեան, Կ. Պոլսի ԳԻՏԱԿ պարրերականին մեջ հրատարակած յադուածը վերածեց սիրուն տետրակի մը, իրրև «Գափնիի strեւ մը, Առաքելաշնուն Յոբե_

itur S. Unhat U. Amschurfha:

Կր փությանը այս առթիւ յայտարարել թե Յոբելինական Հաsուին ժէջ պիտի աբծանագրուին հայ եւ օտար մամուլի մէջ հրատարակուած բոլոր ուսումեասիրութիւններ և յօրոշածներ, ժամանակագրական կարգով, պահած ըլլալու համար այս Յորելինական գրականութեան ամբողջ պատկերը ի պատիշ անոնց հեղինակներուն։

ՇՆՈՐՀԱԻՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

5 Linglag 16-18 1929 . 351USFL35USFL. ԴՈՒՐԵԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

MUSPMUPF 2UBBS. bentanglur. ՖիլատէլՖիոլ Կեսարացւոց Ցառաջդիմական ընկերակցութիւնը կը շնորնաւորէ Ձեր Յորելհանը վ

Նախագան ե. Պ. Առանալեան

© 18—19 1929 . 3/1/USI/I3/USI/I.

ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ, UPARUUATUT. Ֆիլատէլֆիոյ նայութիւնը փառաւորապէս տոնեց Ձեր Սրրագնութեան ոսկի Յորելեանը. սրտագին ժաղթանըներ կ'ուղղենը Ձեր թանկացին կենաց նա-Imni Gl

B U.S. DUU. TU. TL. BL. T. (G. P. P. L. T. P. U.).

AMERICA UPPULLUS TUSPIULE ZUBAB.

GOOD WALLET .

Չեր Ցիմնամեայ Յորևլեանին առԹիւ, ի դիմաց Ե-

թովպիոյ Հայ գաղութին, որդիական զգացուններով կը ժատուցանենը Ձեզ անկեղծ շնորնաւորութիւններ և սրտագին մադβանրներ Գէորգօն, Պօղոսեան, Պապահան

🐯 Նոյեսք. 29. Նիւ Եորբէն

TABLEBUTE TUSPBULLE, brakounter. Նիւ եորթի Հայհրը , որ այսօր նրապարակային ժողովը մը ըրին որդիական խանդավառունեամբ աօհախմբելու մամար Ձեր Աժենապատուութեան ոսկեդէն Ցորելհանը, ցնծալից ըերկրանքով, միաձայն որոշիցին ուղղել Ձեզ իրենց ջերժացին շնորմաւորու-Թիւնները, խորին նիացումը եւ անկեղծ մադԹանքները Ձեր Թանկացին առողջութեան նամար ի փառմ Եկեղեցույ եւ Ազգին ։

Ցոբելինական Յանձնաժողով The Dapfh

WURCUANDER TREEFILEER

